մանրամասնությամբ և ճշգրիտ նկարագրություններով կանգ է առնում արարենքի, բյուզանդացիների, սելջուկ-թուրքերի, իսկ վերջին մասում՝ խաչակրաց արշավանդների և սելջուկ-թուրքերի փոխադարձ հարաբերությունների վրա։ Ուռաւայեցու նկարագրած քաղաքական գեղագիրը հիմնականում տեղի են ունեցել Փաքր Ասիայում, Հայաստանի հարավային շրջաններում, Սիրիայում և Միջազգիտքում։ Ի տարրերություն Արքատակես կատարվերացու, Մատթեոս Ուռաւայեցին խոսում է ոչ միայն սելջուկյան մեծ պետության սովորաների և զորականեների կատարած արշավանդների, ավերաժությունների, հարկային կեղերումների, այլև Քոնիայի սելջուկյան սովորանատի և Հայաստանի սահմանամերձ շրջաններում առաջացած զանազան թուրքական էմիրությունների (դասիշմենդների, շահարժենների և այլն) ասպատակությունների մասին։ Նա կարեւոր տեղեկություններ է տալիս Թոնիայի սելջուկյան սովորան Սուլյանան Շահի, Կըրջ Արտանի և բյուզանդացիների միջև տեղի ունեցած պատերազմների մասին⁹։

Ուռաւայեցու երկում արժեքավոր տեղեկություններ կան տեղանունների, զորքերի թվի, սովորանեների և այլ զորականեների անձի, բնության երկույթների մասին և այլն։ Հետաքրքրական է նաև Քոնիայի սելջուկյան սովորանատի՝ Կըրիկիայի հայ իշխանների հետ մերթ թշնամական և մերթ բարեկամական հարաբերությունների նկարագրությունը։

Մատթեոս Ուռաւայեցու սժամանակագրությունը՝ առաջին անգամ հրատարակվել է Երուսաղեմում¹⁰ (1869), իսկ երկրորդ անգամ՝ Վաղարշապատում¹¹ (1898)։ 1973 թ. Հր. Բարթիկյանի աշխատասիրությամբ լույս տեսավ սժամանակագրությունը աշխարհաբարար հրատարակությունը¹², Գոյաւթյունը ունեն նաև ամբողջական և առանձին հատվածների ֆրանսերեն, գերմաներեն և թուրքերեն թարգմանությունները¹³։

⁹ Մատթեոս Ուռաւայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1869, էջ 224, 225.

¹⁰ «Պատմութիւն Մատթեոսի Ուռաւայեցու», Ցորուազմ, 1869,

¹¹ Մատթեոս Ուռաւայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898,

¹² Մատթեոս Ուռաւայեցի, Ժամանակագրություն, Ցորուազմ, 1973, և հետությանները Հր. Բարթիկյանի, Օրնակ, 1973,

¹³ Ed. Dulaquier, Chronique de Mathieu d'Edesse (952—1136) avec la continuation de Grégotre-le-Prêtre jusqu'en 1162, Paris, 1858. Էռ. Նեվը՝ L'histoire des croisades, d'après les Chroniques arméniens, par Ed. Dulaquier, Paris, 1848. M. Chahan de Cribied, Notice de deux manuscrits arméniens contenant l'histoire de Mathieu Eretz, et Extrait de cette histoire, relatif à la première Croisade, en arménien et en français, Paris, 1812. F. Néve. Les chefs Belges de la première Croisades d'après les historiens arméniens, Bruxelles, 1850. H. Petermann,

Մատթեոս Ուռհայեցուն ժամանակակից պատմագիրներից ուշադրության արժանի է նաև Սամվել Անեցին, որի աշխատության ամբողջական խորագիրն է՝ «Հաւաքը մում» ի գրոց պատմագրաց յաղագս Գիտիունի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաբաղ արարեալ:

Եժամանակագրությունը սկսվում է Աղամից և համեստ մինչև 1180 թվականը, առաջին ուրիշները այն շարունակել են մինչև 1665 թ., պահպանելով նրա ուսը: Առավել արժեքավոր են ժամանակադրի ապրած շրջանին վերաբերող տեղեկությունները, քանի որ դրանց զգալի մասը շարադրված է ականատեսի կողմից և առնչվում է Հայաստանում կատարված սելլուկ-թուրքերի արշավանքների հետ:

Սամվել Անեցու պատմության Հայերն համեմատական ընազիրը առաջին անգամ հրատարակել է Արշակ Տեր-Մելիքյանը (1893), նա տպագրել է նաև ձեռագրային տարրերակները շարունակողների գործերը և մի շարք հավելվածները, որոնց մի մասը օգտակար է XVI—XVII դդ. թուրք-պարսկական պատերազմները և շալալիական ապշտամություններն ուսումնասիրելու համար¹⁴:

Հավելվածում առանձնապես ուշագրավ է բնուանիսիկ (Սանեցի) մարդապետի Համառոտ պատմությունը (էջ 185), որն ընդգրկում է 1572—1600 թթ. իրադարձությունները¹⁵, Հովհաննեսիկ Սառնութ մամակագրության նկարագրած դեպքերը գլխավորապես տեղի են ունե-

Beiträge zu der Geschichte der Kreuzzüge aus armenischem Quellen Abhandlungen der Königl. Akademie der Wissenschaften zu Berlin, Berlin, 1860. Requell des Historiens des Croisade (Documents Arméniens, t. 1, Paris, 1869. Խոլլ Մատոս, Vakainamest (952—1136) ve Papaz Grigoruy zeyli (1136—1162) Türkçeye çeviren H. D. Andreasyan, Ankara, 1962.

¹⁴ «Սամեւէի բանակայի Անձնույթ Հաստիւնք ի պաց պատմագրաց յաղագս զիստ ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ժողովադարձական արտքածակ, աշխատավորությունը Ա. Տեր-Մելիքյանի, Վագրաբան, 1893, էջ 181, 175, 185:

¹⁵ Թեև ՀՅՇ գ. Հանրանանալ հայ պատմությ Առաքել Գավրիէլներին արտ ժամանակագրության ձևութը կորուրից փրկելու նպատակով զետեղել է իր պատմության մեջ, որպես ինքնուրույն մՁ-րդ զրոյ՝ «Պատմութիւն Առուանից աշխարհին արարեալ Սանեցի Հովհաննես Վարզապետին խորագրով» Առաջին անգամ այն հրատարակել է Ա. Առերյանը մասնակի վարդապետի համառոտ պատմութիւններ խորագրով («Ժողովրդ», 1859, Հատ. 4 և Հատ. 9, էջ 69—76, 105—112), որից և Ա. Տեր-Մելիքյանը արտասովել է իր հրատարակության հավելվածում:

Հովհաննես Սառնութ տժամանակագրությունի ընազիրը ամրագրապես և մակրաժամ ժամանակագրություններով, միևնույն ժամանակ Հավելվածի մասին սառը անզնիւթյուններով հրատարակել է Վ. Ա. Հակոբյանը (Մատք ժամանակագրություններ, Հատ. Բ, էջ 235):

ցել Աղբբեջանում և Վրաստանում։ Հետաքրքիր տեղեկություններ կան Մուստաֆա Լալա փաշայի 1578 թ. Անդրկովկաս կատարած արշավանքի, սուլթան Մուրատ III-ի (1574—1594) կռոմից Սրբանի գրավված ամանյան Թուրքիայի գեմ վրաց ժողովուրի ազատագրական պայքարի մասին և այլն։

«Թարեխիս տունկաց» համելվածում (էջ 200—204) անծանոթ Շեղինակը նախ հայոց թագորդարար թվարկում է Օսմանյան կայսրության սուլթանների անունները՝ սկսած Օսման I-ից մինչև Սելիմ II-ը (1566—1574), իսկ այնուհետև պատմում շալալիական պարագություն Կարայազինիի ազատամբության մասին։

Միլանի մատենադարանի տեսուչ Մայք լատիներեն է բարգմանել Սամվել Անեցու գմանանակագրությունը և «բառարակել երկու անգամ»։ Միլանում (1818) & Հռոմում (1839)²⁶, իսկ ֆրանսերեն թարգմանությունը Բրունեն Հրատարակել է իր «Հայ պատմիչները ժողովածուի մեջ»։

Սելյուկ-Թուրքական տիրապետության մասին կարևոր տեղեկություններ կան նաև XIII դ. Հայ նշանավոր պատմագիր Կիրակոս Դանձակեցու «Հայոց պատմության» մեջ։

Կիրակոս Գանձակեցին իր պատմությունը սկսել է գրել 1241 թ., Ամրողքական վերենապիրն է՝ «Կիրակոսի վարդապետի համառոտ պատմութիւն ժամանակաց ի սրբոյն Գրիգորէ մինչև ցյեաին աւուրս թեացեալ»։ Այն բաժանվում է երկու հիմնական մասի. 1) Գրիգոր Լուսավորչից, Տրդատից սկսած մինչև Կիրիկիայի Հայկական թագավորության հիմնադրումը և 2) Առև Բ-ից մինչև Ապաշայի և Թերքնի պատերազմը (1268)։ Պատմության երկրորդ մասի մի շարք դեպքերին հեղինակը ժամանակակից է։ Այն առաջնակարգ նշանակություն ունի ոչ միայն Հայ, աղքան և վրաց ժողովությունների, այլև սելյուկ-թաթար-մոնղոլական արշավանքների պատմության լուսարանման համար։ Փաստական կարևոր տնօնեկություններ կան Հայաստանի սելյուկյան և մոնղոլական տիրապետության շրջանի, Կիրիկիայի Հայկական թագավորության ու

²⁶ Samuelis presbyteris Aniensis, Temporum usque ad suam aetatem ratio et liberis historicum summatum collecta. Opus ex Haecantis quique codicibus ab Joh. Zohrabio diligenter excerptum atque emendatum. Zohrabus et Ang. Majus nunc primum conjunctis curis latinitate donatum notisque illustratum ediderunt.

²⁷ M. Brosset, Samuel d'Anie, Tables Chroniques, „Collectiones d'historiens Armentens“, s. Petersbourg, 1876, t. 2, p. 340—383. Մի ժամանակակից է „Mélanges Asiatique“-ի մեջ հանդիսացող Սամուարական և մոնղոլական տիրապետության շրջանի, Կիրիկիայի Հայկական թագավորության ու

սելլուկյան սովորակատի և մոնղոլների փոխազարձ հարաբերությունների մասին։ Գյոքի վերջում Կիրակոս Դանճակեցին ավելի հանգամանուրեն խոսում է մոնղոլական արշավանքների, ավելածությունների և նրանց արդապետության ռազմավարչական և սոցիալ-տնտեսական քաղաքականության մասին։

Կիրակոս Գանձակեցու շՊատմություններ առաջին անգամ հրատարակվել է Մոսկվայում (1858)¹⁸, իսկ այնուհետեւ՝ 1865 թ. Վճնետրկում՝ Մինիթարյան միաբանության կողմից¹⁹. Կիրակոս Գանձակեցու շՊատմությանը դիտաքննական թմագիրը շահնեկան առաջարանով՝ 1951 թ. հրատարակել է Կ. Մելիք-Շահնշահյանը²⁰.

Կիրակոս Գևանձակեցու ՇՊատմություններ ամբողջապես թարգմանվել է ֆրանսերեն²¹ և ռուսերեն²²: Գրյությունը ունեն նաև տարբեր լեզուներով քաղվածարար կատարված բազմաթիվ թարգմանություններ²³:

XIII դ. Հայ պատմիչներից Հիշատակության արժանի է նաև Վարդան Բագրատիոնին, որը հայտնի է իր «Պատմություն» աիծեղբական երկուությունում:

«Պատմություն» տիեզերականը սկսվում է աշխարհի ստեղծման պատմությունից և վերջանում է 1267 թ. կատարված դժբախրով։ Առավել հետաքրքրական են «Պատմության» վերջին մասերը, որտեղ բազմաթիվ տեղեկություններ են արձում արարևերի, սելյուկ-թուրքերի, մոնղոլների և խաչակրաց արշավանքների մասին։ Այդ երկեւ արժեքավոր է նրանով, որ Վարդան Բարձրարերդյան օգոտագործել է ավալ ժամանակաշրջանում ստեղծագործած մի շաբթ Հայ հեղինակների մեջ շնորհած գործերը։

Սեղում-թուրքերի նկարագրությունը նա սկսում է 1020 թ. սկսել

2. «*Επανασταθής Σωτηρος περιφέρειας*» ήμερων αναγνωστικής Τακτικής Επιτροπής, 2. της
επόμενης περιόδου Σεπτ. Θεοφάνειας Αποχειρεύοντας Ορθοδόξη, Παταία, 1858. Ήταν ρωμαιο-
καθολικό έργο που αποτελεί γνήσιαν άρχιτεκτονικό διάδοχο της Βασιλικής της Αγίας Σοφίας.

“ Ա պրակտ վարդապետի Յանձնեցու Համայստ պատմութիւն է սըրը Գրիգոր Տառաս իւր լուսաբնեւու.—Պատմապետ Կայզը, Բ., Վանեսիկ, 1885.

Ա Կուրկու Գունդակից, Պամամբյան Հայոց, ովքուտախրության կ. Ա. Մէջք-
օնականացն. Եղանակ, 1951:

¹¹ Histoire d'Arménie, par le vardinapé Kirakos de Gantzac, „Deux historiens arméniens... traduits par M. Brosset“, 1-re livraison, s. Petersbourg, 1870 p. I—194.

¹¹ Киракос Гандзакеци, История Армении, перевод с древнеармянского предисловие и комментарий Л. А. Ханларкина, М., 1976.

Ա ՏԵՇ Արական Գանձութեղի, Պատմութիւն Հայոց, էլ ՃՌ,

յառաջադէմն ի թուրքաց, որում անոնք էր Մուսէ փաշով՝ Սարլուգայ որդի, ունէր հինգ եղբարորդիս, որոց անուանը՝ Արուսսալիս, Դաւութ թէկ, Ափուղալիք, Տուղրիլ թէկ, որ էաւ զիշխանութիւն սուլտանութիւն և զամն Հնդկատասան ընդարձակեալ զաշխարհն՝ բաժանեաց զամնայն երկիրն Խորասանայց (էջ 129—130):

Այսուհետեւ Բարձրաբերդցին գրում է արշավանքներին, սելլուկյան անկախ թեյությունների՝ միմյանց նկատմամբ թշնամական վերաբերմունքի, Հայաստանում կառարված ավերածությունների և Կիլիկիայի Հայկական թագավորության ու սելլուկյան սուլթանատի միջն պոյնթյունն ունեցող հարաբերությունների մասին:

«Պատմություն տիեզերականն-ի բնագիրն առաջին անդամ լույս է տեսել Հայքին և ուստեղն թարգմանությամբ 1861 թ. Մ. Էմիլի աշխատասիրությամբ²⁰: 1862 թ. Հրաաարակվել է նաև Վենետիկում Ղ. Ալիշանի կողմէից²¹: Առանձին Հավագածներ թարգմանվել են ֆրանսերին²²:

Հրանդ Անդրեասյանը թուրքերն է թարգմանել սելլուկյան շրջանին վերաբերող նյութերը, որոնք ընդողիում են Կիլիկյան Հայկական թագավորության զարացրչանը՝ մինչև Առն III-ը²³:

Միջնադարյան հայ գրականության մեջ ուրույն տեղ ունեն նաև Կիլիկյան թագավորության երկու պատմիչները, որոնք եղել են նաև ուղղական և քաղաքական ականավոր գործիչներ՝ Մերատ Գունդսաար-լը և Հերում պատմիչը: Այս հեղինակները հանդամանքների բերումով սերտ շիման մեջ են գտնվել սելլուկյունների և մոնղոլների հետ ու գեղդերի մեջ մասը շարադրել են իրեն ականատես:

Մերատ Գունդսաարլի (1208—1275) գրական հարուստ ժառանգությունից, իշարկե, մեջ առավելապես հետաքրքրում է նրա «Պատմությունը», որը ժամանեակադրություն է, ինչպես Հեղինակն է շեշտել վերնագրի մեջ՝ «Պատմութիւն Հունաց ի Կոստանդնուպոլիս և Հայոց Մե-

²⁰ ՔՄհերի Վարդանայ Բարձրաբերդցոյ պատմութիւն աբեղըրսկոնք, ի լոյս ընէ. Մկրտչ Էմիլ, Մոսկվա, 1861: «Всебо́льшая История Вардана В. Энкиго», М., 1861.

²¹ «Հազարուն պատմութեան Վարդանայ Վարդապետի», Ղ. Ալիշան, Վենետիկ, 1882:

²² M. Brosset, Addition et éclaircissements à l'histoire de la Géorgie, s. Petersbourg, 1851. Ed. Dulaquier, Les Mongols d'après les historiens arméniens, extrait de l'Histoire Universelle de Vartan. («Journal Asiatique», 1860, octobre-novembre, pp. 273—322).

²³ Vardan, Cihan Tarihi, İstanbul, 1937, türkçeye çeviren Hrand D. Andreatsy an.

ժաց ըստ կարգի ժամանակացք, Պատմիշը նկարագրել է 951—1321 թթ. զեպքերը, Վերջին 60 տարվա պատմությունը շարադրվել է անհեռն գրչի ձեռքով, ժժամանակագրության առաջել արժեքափոր մասը վերցին շրջանում կատարված իրադարձությունների նկարագրությունն է, որուն կան հավաստի աեղքելություններ մի՛ սելչուկյան սուլթանատի և թի՛ Թոնիայի սուլթանատի արշավանքների մասին։ Դեպի Հայաստան սելչուկների ներխուժման նկարագրությունը սկսվում է 1016—1017 թվականներից։ Սմբատ Գևանդարը երկում հետաքրքիր տեղեկություններ կան սելչուկ-բյուզանդական պատերազմների, նրանց զսրբերի թի՛, մարտավարության և տեղաշարժերի ուղղության մասին։ Առանձնազետ ուշագրավ նն սելչուկյան սուլթանատի և Կիլիկիայի Հայկական թագավորության միջն տեղի ունեցած դեպքերը։ Դժբախտաբար, պատմագիրը կանգ է առել Հատկապես քաղաքական դեպքերի վրա, այրաթող անհիով տվյալ ժամանակի տնտեսական և կուլտուրական կյանքին վերաբերող Հարցերը։

Սմբատ Գևանդարը ժժամանակագրությանց ընադիրը Հրատարակվել է երկու անգամ²⁸, Այդ գիրը բարձր է զնահատվել նաև եվրոպական արևելագիտության մեջ, որի վկայությունը ֆրանսերն առանձին Հատկապեսների թարգմանությունն է²⁹,

Կիլիկիան Հայաստանի մյուս հանրահայտ հեթում պատմին է, որն ապրել և ստեղծագործել է XIII դ. երկրորդ կեօխն և XIV դ. սկզբին։ 1305 թ. նա հեռանում է քաղաքական ասպարեզից, թողեռում աշխարհիկ կյանքը և մտնում վանք³⁰։ Հեթում պատմիլի Պատմութիւն թաթարաց գիրը, որը զբաժ է Ֆրանսերն, մեծ արժեք է ներկայացնում մոնղոլական շրջանի պատմության ուսումնասիրության համար։

²⁸ «Սմբատայ Սպարապետի հօրը Հեթում ասացեց արքայի Հայոց Պատմութիւն Յանաց ի Կոստանդնուպոլիսի և Հայոց մեծաց բատ կարդ ժամանակաց, Մասկա, 1855։ «Տարեզիրք արարեալ Սմբատայ Սպարապետի Հայոց որույ Կոստանդնուպոլիսույ, ի ըստ շնայիլոց Կ. Վ. Ծահնազարեանց, Փարիզ, 1855».

²⁹ Extrait de la Chronique de Sempad. Seigneur de Babaron, connétable d'Arménie, suivie de celle de son continuateur..., traduite pour la première fois de l'arménien par V. Langlois, s. Petersbourg, 1862. Observations sur une traduction d'un Extrait de la Chronique de connétable Sempad, par Ed. Dulaurier, Paris, Revue de l'Orient, 1867, 1868. Chronique du Royaume de la Petite-Arménie, par le connétable Sempad, Dulaurier, Recueil de historiens des Croisades, Documents, arméniens, pp. 610—680.

³⁰ Ա. Գալսոյան, Հեթումի Պատմութիւն թաթարաց զբի բնութագրման Հարցի շարքը, ՀՀ հեղինակեր, 1958, № 9, էջ 62։

Այդանց կան նաև կարմոր տեղեկություններ Միջին Ասիայի թուրքական ժողովուրդների (զլ. 3), ինչպես նաև Քոնհայի սելջուկյան սուլթանատի վերաբերյալ և Յազագո թագաւորութեան երկրին թուրքաց (ժթ) պիտում Հեղինակը համառոտակի նշում է նաև Քոնհայի թուրքական պետության սահմանները, ոյնավոր քաղաքները, երկրի բնական հարստությունները:

Հեթում պատմիչը այս երկը բարձր է զնահատվել արենելագիտների շրջանում և թարգմանվել է մի շաբ լեզուներով: Առաջին անգամ հրատարակվել է 1517 թ. Ֆրանսերեն բնագրով²¹, իսկ 1529 թ.²² լատիներեն թարգմանությունը²³, իսկ է տեսել նաև անգլերեն, իռապաներեն, գերմաներեն և այլ լեզուներով²⁴:

Հեթում պատմիչը «Պատմութիւն թաթարաց» լատիներեն տեքստը հայագետ Մ. Ավգերյանը 1842 թ. թարգմանել է գրաբարի, Դժբախտաբար, այս թարգմանությունը պարունակում է բավականին սխալներ և աղավաղումներ:



XIV—XVI դդ. բնթացքում Հայոստանը դարձավ մտնդրվերի, թուրքմենների, ինչպես նաև թուրք և պարսիկ տիրակալների միջև պատերազմների թատերաբեմ:

Երկիրն ապրում էր քաղաքական փոթորկահույզ վիճակ, որը վերջ ի վերջո հասցրեց անտեսական ու մշակութային կատարյալ անկման: Այս էր հիմնական պատճառը, որ XIV—XVI դդ. հայ պատմագրության մեջ համարյա ի հայտ շեկան պատմական լիարժենք աշխատություններ: XV դ. մեզ հասել է միայն Թովմա Մեծովինու «Պատմութիւն Լանկ-Բամուրայ և Հաշորգաց հրոցց երկը», որն ավելի մոտ է ժամանակագրության և պարունակում է պատմական կարմոր տեղեկություններ:

Թովմա Մեծովինուն իր պատմության մեջ հաղորդում է 1387 թ. Հայաստանի տարրեր շրջաններում լենկ-թեմուրի գործած ավերածությունների մասին: Նա ականատես է եղել 1388 թ. լենկ-թեմուրի և Կարա-Կոյան-

²¹ Խոյն տեղում, էջ 84:

²² De Langdīt I., «L'histoire merveilleuse du grand empereur de Tartarie, trad. du latin du M. Aytton, Seigneur de Caurcy par frere Jean Langdīt, 1529.

²³ Ա. Գարշայն, Խոյն տեղում, էջ 85:

²⁴ ՀՀթում պատմիչը թաթարաց, Վաներկ, 1522:

²⁵ Խաւեղին վարդ. Յանսենին, Թովմա Մեծովինու կլասերց, Վազարչապատ, 1814.

լու քոչվորական ցեղերի առաջնորդ Կարա-Մամուզի միջև տեղի ունեցած ճակատամարտին ու վերջինիս պարտությանը՝ 1395 թ. Լենկ-Բելաբրը ջախչախում է Կարա-Ցուռութին: 1402 թ. նա կոտորածներ է սկսում Սերաստիայում, իսկ այնուհետև՝ Անկարայի ճակատամարտում հաղթում է ուղղված Բայզանի 1-ին և Վրաստանի վրայով վերադառնում Սամարգանդ:

Մեծոփեցին ժամանակն կանգ է տանում Լենկ-Բելաբրի հարորդ Շահ-Ռուչի (1405—1447) և կարա-կոյունլու՝ Կարա-Ցուռութի, որա որդի Սենեգեցի (1420—1437) և եղբոր՝ Ջահան-շահի օրոք կատարված պատերազմների ու ազերաժությունների վրա: Դրբի վերջում նկարագրվում է Ջահան-շահի կողմից Եամշուտն և ապա Թիֆլիս քաղաքների գրավումն ու ավերումը:

Թովմա Մեծոփեցու պատմությունն առաջին անգամ հրատարակվել է 1860 թ. Փարիզում²⁸:

Ինչպես վերը նշեցինք, Հայ և Հարնան ժողովուրդների XV—XVII դդ. պատմության հարցերը լուսաբանելու հոմար կարողության ակնհայտ ունեն հայտնի և անհայտ հեղինակների քաղաքացիկ ժամանակագրություններն ու հայերն ձեռագրերի հիշատակարանները, որոնց հեղինակները գրի են առել անցյալի և հատկապիս ժամանակի դանագան դիպրեր ու իրադարձություններ:

Հիշատակարանների և մանր ժամանակագրությունների արձերն ավելի է մեծանում, քանի որ տվյալ ժամանակաշրջանի նոմանյան կայուրության պատմության ուսումնասիրության համար թուրք պատմագրության մեջ աննշան տեղեկություններ կան: Թուրքիայի պատմության մասնագիտները դրանցում կդանեն հավաստի տեղեկություններ Լենկ-Բելաբրի արշավանքից հետո երկրում առաջացած քաղաքական իրավիճակի, հատկապես թուրքմեննական քոչվոր ցեղեր ակ-կոյումլունների և կարա-կոյումլունների միջև տեղի ունեցած դիպրերի, ինչպես նաև Կ. Պոլսի գրավման, զալայիտական շարժման և ընդհանրապես թուրք-պարսկական երկարատև պատերազմների մասին:

Այսուղի, ինարկե, Շնարավոր չէ մանրամասն անդրադառնալ առանձին ձեռագիր հիշատակարաններին և մանր ժամանակագրություններին, քանի որ դրանց թիվն անհամեմատ շատ է և բազմազան: Մենք կրավարարվենք հիշատակելով միայն մի շարք ժամանակագրություններ,

²⁸ «Պատմության Լենկ-Բալաբրայ և յարերաց իշուց արտքական Մովմա վարզապետ Մեծորեցւոյ, ի լոյս ընթայեց Հակիմը Խանությունը Կարսակս վարչապետ Եամշարձան, Փարիզ, 1860.

որոնք համեմատարար արժեքավոր անդեկություններ են Հաղորդում տվյալ շրջանի թուրքիայի պատմության վերաբերյալ։ Խիստ ուշագրավ է Հակոբ Հիսուսիին վերապրված ժամանակագրությունը²⁷։ Հատկապես երկրորդ հատվածում կարեռ նկարագրություններ կան ակ-կոյունյու Յաղուր փաղիչահի սպանությունից հետո աեղի ունեցած զահակալական կոխվների և դանազան ասպատակությունների, 1476 թ. Հասան բեգի՝ Վրաստան արշավելու, ինչպես նաև 1500—1501 թթ. շահ Խամայիլիի և ակ-կոյունյունների վերջին ներկայացուցիչ նույն Ալվանդի միջն աեղի ունեցած կոխվների մասին։

Անանոն Սկրաստացու (XVI դ.) ժամանակագրությունը, որի խորագիրն է տնօւ Հռոմայ թագավորաց կարգն այս է, որը սամանցիք վերայ կոչեն նոցայ անուն։ Այս է պարու է պորու ազգ նոցա մինչև ի մեզ, ի մերում ժամանակիսը²⁸, սկսվում է սամանյան պետության հիմնադրումից և շարունակվում է (թվարկելով օսմանյան սովորանենքին) մինչև Մուհամմեդ III-ը, Պատմիլը հիշում է Լինկ-Թեմուրի արշավանքները գետի Անդրկովկաս ու Փերը Ասիմ և տալիս Օսմանյան կայսրության ամրողը քաղաքական պատմությունը։

XVI դ. Հեղինակներից հիշատակության արժանի է նաև Հովհաննես Արմիշեցու տարեգրությունը²⁹։ Նա նկարագրել է թուրքերի և պարակենքների 1531—1534 թթ. պատերազմները։

Սամանյան պետության հաղման, սովորաների գահակալության մասին գրել է նաև XVII դ. ժամանակագիր Վարդան Բաղիշեցին։ Նրա «Տարբեգրությունը» ընդգրկում է 1170—1657 թթ. Հայաստանում կատարված քաղաքական իրադարձությունները։ Վարդան Բաղիշեցին մահրաման կանգ է առնել սովորան Մեհմետի օրոց (1654 թ.) աեղի ունեցած դեպքերի, հատկապես՝ Վանում Ավդալընդի և Մալտը փաշայի կոխվների վրա։

Սամանյան կայսրության պետության վերաբերյալ արժեքավոր առղկություններ կան նաև Դավիթ Մերդինցու (XV դ.), Մովսես Արծիկցու (XV դ.), Գրիգոր Կամախեցու (XVII դ.), Դավիթ Բաղիշեցու (XVIII), Գարդիկ Թօխարեցու (XVII դ.), Մարտիրոս Դի Առաքելի (XVIII դ.), Հակոբ Տիվրիկցու (XVII դ.), Հակոբ Կամինցու (XVII դ.) և այլոց ժա-

²⁷ «Մայք Ժամանակագրություններ», Համ. Ա., էջ 189.

²⁸ Նույն տեղում, էջ 167։

²⁹ Նույն տեղում, Համ. Բ., էջ 227։

մանակագրություններում⁴⁰, ինչպես նաև XVI և XVII դդ. մի շարք անանուն հեղինակների գործերում⁴¹:

Ա. Պոլսի անկման մասին բավականին տեղեկություններ կան թի՛ ձեռագիր հիշատակարաններում. և թէ՛ մանր ժամանակագրությունների մեջ, սակայն այդ իրադարձության մանրամասն նկարագրությունը ովել է ՏV դ. նշանավոր հեղինակներ՝ Աբրահամ Անկյուրացին և Առաքել Բաղրամյանին, իսկ հետագայում՝ XVII դ. հայ ականավոր պատմագիր Երեմիա Անկյուրի Քյումստենյանը, որն իր շափածո օմանայան պատմության մէջ մի առանձին գլուխ է նվիրել այդ գիտցերին:

Վերոհիշյալ երեք հեղինակների շափածո երկերի գիտաքննական բնագրերը, գոյություն ունեցող ձեռագիր օրինակների տարրը թի՛ բացված են եղանակներով, հայերեն և ռուսերեն հրատարակել է Հ. Անասյանը⁴²:

Աբրահամ Անկյուրացին ականատես լինելով Կ. Պոլսի պաշտուման, անկման ու ավերման բույր գեպքերին, բավական ճշգրիտ տեղեկություններ է տվել դրանց մասին, Կ. Պոլսի անկմանը ականատես է եղել նաև Առաքել Բաղրամյանին, որը թողել է մէծ թուզ պատմական, ենքողական, վիպասանական, բարոյախոսական ու հոգնոր բնույթի շափածո աշխատավորությունները⁴³:

XVII դ. սկզբից հայ պատմագրությունը սկսում է նորից աշխատանալ: Հայ պատմագիրները իրենց ավանդն են ներդրել նաև թուրքագի-

⁴⁰ «Մամր ժամանակագրություններ», Համ. Բ., էջ 209, 216, 256, 257, 402, 425, 447, 561:

⁴¹ Նույն տեղում, Համ. 7, էջ 140, 178, 217.

⁴² ՀՀայկական աշխատավորությունները Բյուզանդիայի անհման մասին, Հ. Ա. Անասյան, Երևան, 1957: Բայցի ռուսերեն թարգմանությունը Հ. Անասյանց հրատարակել է գնան 1862 թ. «ԵՎՀԱՆԻՑՅԱՆԻ ԿՐԵՄԵՆԻԿԻ» պարբերականի 17-րդ հատորում, որը ներկաված է Կ. Պոլսի սկզբունք 509-ամյակին: Այդ թարգմանությունը հանդիսանում է առաջին հրատարակությունը հայուրաց գրաւոր հրատարակությունների և արևոտ ական՝ 1) Eug. Bore, «Elégie sur la prise de Constantinople; poème inédit et extrait du manuscrit 80 arménien de la Bibliothèque Royale», *Nouveau Journal Asiatique*, t. XV, 1835, p. 271–298. 2) Melodie élégiaque sur la prise de Stamboul», traduite de l'arménien par M. Brosset, Համեյալ հրատարակություն Ժիշտ Լեբու, *Histoire du Bas-Empire*, Nouvelle édition, revue entièrement, corrigée et augmentée d'après les historiens orientaux, par M. de Saint Martin, t. XXI, Paris, chez Firmin Didot frères, 1836, p. 307–314; Առաքել Բաղրամյան «Թաքրի թարգմանությունը», *Lamentation sur la prise de Constantinople* լույս է տեսէ Համեյալ Խորովածուր Ժիշտ Ա. Չիբանյան, *La Rosette d'Arménie*, t. III, Paris, Ernest Leroux, 1829, p. 109–118.

⁴³ ՀՀայկական աշխատավորությունները Բյուզանդիայի անհման մասին, էջ 6:

տության ասպարեզում, գրելով Խույնիսկ առանձին արժեքավոր մնացառություններ՝ նվիրված Օսմանյան կայսրության միջնադարի պատմությանը: Նրանցից առաջինը (ժամանակագրական կարգով) Հովհաննես Կամենացին է, որն իր «Պատմութիւն պատերազմին Խոթինուա խորազրով աշխատության մեջ Խաչարագրել է 1621 թ. լիճ-Ռուբական պատերազմները, որոնք տեղի են ունեցել Խոտինի քաղաքի և բնրդի պարիսպների տակ: Կամենացու «Պատմությունը» բաղկացած է առաջարանից, 18 գլուխ և հիշատակարաններից: Վերջին գլուխը նվիրված է հնիշերիների խոռվությանը և սուլթան Օսման II-ի սպանությանը, Կ. Պոլուսմ՝ 1622 թ.: Կամենացու երկուառ ուշագրավ աեզեկություններ կան ազյալ շրջանի լիճ-Ռուբական ռազմական տեխնիկայի, զորքերի մարտունակության, դիվանագիտական հարարերությունների, թաթարական ապատակությունների և ընդհանրապես Մոլգավիայի ներքին իրադարձությունների վերաբերյալ:

Հովհաննես Կամենացին իր պատմությունը շարադրել է Խոտինի պատերազմից վեց տարի Հետո՝ 1627 թ.: Մի շաբթ մահրամաններ նա գրի է առել որպես անմիջական ականատես, իսկ մնացած դեպքերի համար հիմնականում օգտագործել է Հայոցքի Թրսենու Կամենացու Հայկումաններին (զփլաղական) բարբառով գրված ժամանակադրությունը, որտեղ օրադրական մանրամասնություններով գրի են առնված հոտինի պատերազմի գեղագիրը⁴⁵:

Հովհաննես Կամենացու պատմության մի ձեռագիր ընդօրինակությունը գեռն 1953 թ. Հ. Անասյանը Հայտնարերել էր Մաշտոցի անվան Մատենադարանում (Ձեռագիր № 2844, էջ 229ա—254ա) և նրա մասին որոշ տեղեկություններ Հաղորդել Ռուսաստանի Հետ Ռեկրախիայի վերամիավորման 300-ամյակի առթիվ 1954 թ. հրատարակված ժողովածուի մեջ⁴⁶: Հետագայում ընագրի ոռուերեն թարգմանությունը (թարգմանիլ Կ. Յուզբաշյան) հրատարակվեց 1958 թ.⁴⁷, իսկ 1964 թ. Հ. Անասյանը

⁴⁵ Օրսեն Կամենացու «Ժամանակադրությունը» լիճական այլ հեղինակների հետ հրատարակել է Դ. Ալեքանը (Կամենից, «Տարեկիր Հայոց Անհատանի և Թուներու», Վենետիկ, 1896): Օրսենի տարեկրությունը գրագեցնում է այլ հրատարակության 65—109 էջերը:

⁴⁶ А. С. Анасян, Отголоски битвы при Хотине (1621 г.) в армянских источниках. «Большая дружба. Сборник, посвященный 300-летию воссоединения Украины с Россией», Ереван, 1954, стр. 225—238.

⁴⁷ «История Хотинской войны И. Каменецкого», «Պատմությունների ժամանակակից հանդես», 1958, № 2, էջ 239—258.

Հրատարակեց Հայերներ բնագիրը, Հանգամանալից վերլուծականով և մանրամասն ժանոթագրություններով:

Մյուս Հայունի պատմագիրը Սիմեոն Լեհացին է, որը տասնմեկամյա ճանապարհորդության ընթացքում տեսածները (1608—1618) դրի է առել իր ընդեղգրության մեջ: Նա հիմնականում զբում է իր շրջագայած վայրերի տեղագրության, ազգագրության և տեսության մասին: Մանրամասն նկարագրում է ճանապարհները, քաղաքների նշանավոր շինությունները, բնակչության զբաղմունքը, ժողովուրդների կենցաղն ու բարքերը: Այս տեսակետից ուշագրավ տեղեկություններ են պարունակում Կ. Պոլախին, Թիգրաբերիրին, Հալերին, Կանիրեկին, Երուսաղեմին և մի շաբթ այլ քաղաքների նվիրված էջերը: XVIII դ. առաջին կեսի Թուրքիայի պատմության համար կարևոր նշանակություն ունեն նաև ընդեղգրության վերջում ժամանակագրական կարգով շարուղը 1622—1635 թթ. քաղաքական դեպքերը:

Առավելապես կարենոր են տեղագլան սուլտան Օսմանի ի վերայ լեհաց (1622), և պաղայ փաշայ, կոտորած ճնկիլարաց, և Ապաղա փաշայ արշաւէ ի լեհա, տեղագլանք սուլտան Մուրատի ի վերայ լեհաց (1635), և Արշագլանք սուլտան Մուրատի ի վերայ Պարսից և այլ գլուխները:

Սիմեոն Լեհացու ընդեղգրության Լեռագրի դրյության մասին տուաշին անգամ ժանոթությունն է առել ֆրանսիացի Հայագետ Ֆրեդերիկ Մակլերը⁴⁷:

Հետագայում ներսեա Ակինյանը հատուկ հետազոտության առարկա է դարձրել այն և 1932 թ. սկսած պարբերաբար հրատարակել է «Հանդէս ամսօրեալշ-ի մեջ»: 1936 թ. դարձալ ն. Ակինյանի աշխատափությամբ ընդեղգրությունը առանձին գրքով հրատարակվում է «Վեհնեալյում»: Այս հրատարակության մեջ տրված է նաև հեղինակի կյանքի և դրժումներության մանրամասն վերլուծությունը⁴⁸: ընդեղգրության թուրքերն լրիվ թարգմանությունը մանրամասն ժանոթագրու-

⁴⁷ „Revue des Etudes Arméniennes“, 1, 7, 1927.

⁴⁸ «Հանդէս ամսօրեալշ», 1932, էջ 447—452, 477—490, 1933, էջ 115—125, 234—242, 479—485, 555—568, 701—713, 1934, էջ 59—69, 149—169, 282—305, 465—474, 547—570, 1935, էջ 79—96, 162—175.

⁴⁹ «Վիճեն դպից Հեղուց; Ըստգրություն», առողմասիրեց և հրատարակց Հ. Խերսոն Վ. Ակինյան, Վիճեն, 1928:

Թյուններով հրատարակել է Հ. Անդրեասյանը²⁰, Հրատարակել է նաև պուսիկին թարգմանությունը²¹:

Ժամանակագրական առումով Շաշորդ պատմագիրը Գրիգոր Դարանացին (Կամախիսցին) է (1576—1643),

Նրա գլխավոր երկը ժժամանակագրությունն է, որը զրի է առերգած 1634—40-ական թվականներին: Այն բաղկացած է երկու մասից: Առաջին մասում համառոտակի շարադրված էն 1018—1539 թի. իրադրությունները, իսկ երկրորդում՝ 1595—1634 թի. քաղաքական դեպքերը, որոնք հատկապես առնչվում են մեզ հետաքրքրող թեմայի հետ:

ժժամանակագրությունը լափազանց կարևոր նյութեր է պարունակում հատկապես XVI դ. վերջերին և XVII դ. սկզբներին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած ներքին և արտաքին քաղաքական դեպքերի, այդ թվում թուրք-պարսկական պատերազմների և չալայիխական շարժման վերաբերյալ: Այդ դեպքերը և ընդհանրապես Թուրքիայի պատմությանը զերարերող զանազան աեզեկությունները հիմնականում տրված են հետևյալ գլուխներում: Եկասն սուլթան Ահմատինը (2-րդ զլուկի), Եկասն սուլթան Ֆաթիհը և սուլթան Ահմատին, թե զի՞նչ եղեն կամ ո՞րպես գործեցան, և բարձրացն թէ զիա՞րդ իսպան չնշեցան և կորուն անհետ (5), Եկասն սպանման սուլթան Օսմանին թէ որպէս եղեն (6), Եկասն տղայաժողովինը (9), Եկասն այս Ցապաղայիս՝ թէ զիա՞րդ եղեն կեանքը և կատարումն նորին (11), ինչպես նաև 32-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ գլուխներում:

Դրիգոր Դարանացյու նկարագրած գեպքերը հավաստի են, քանի որ նա ականատես է եղել դրանց մեծ մասին: Դարանացին ստույգ տեղեկություններ է ավել հատկապես շալայիխների շարժման զերարերյալ²² և այդ կապահցությամբ անդրադարձել է դրույդիրի ու քաղաքաների ավերման, ինչպես նաև Հայ ժողովրդի կրած տառապանքների ու ազգաների նկարագրությանը: Հաճախ նա չի սահմանափակվում գեպքերի պարզ շարադրությամբ և մեկնարակություններ է անում շալայիխական շարժման սոցիալական դրվագառնառների ու զրա ունեցած հետևանք-

²⁰ Polonyali Simeon'un seyahainamesi (108—1619). İstiklalciye շարտերին Մանդակին պատճենագիրը: Տարբերակը պահպանվել է Հայոց ազգային պատմական թանգարանում:

²¹ Симеон Лехаци, Путевые заметки. Перевод с армянского, предисловие, примечания и указатели М. О. Дарбиян, М., 1965.

²² Զալայիխների շարժման մասին գարնա և կայսերականը է նաև Ազարիա Սամենցու մեջը ի վերայ Հայութեյ տրեխին զավառացն և աշխարհին Հայութ ի հետց սկսականց աշխատաթյունը («Հայութ ամերիկայի», 1927, էջ 226):

ների, ինչպես նաև կայսրության ներքին վիճակի ու կառավարության ազդած նզնաժամային երևութերի մասին²⁰:

Դրիգոր Դարձնազգու տժամանակագրությունը լույս է տեսնել 1815 թ. Արևուազնեմում²¹ Մեսրոպ վարդապետ Նշանյանի աշխատասիրությամբ:

XVII դ. մյուս նշանավոր պատմագիրը Առաքել Դավթիմեցին է:
Նա գրել է Հայ ժողովրդի 60 տարվա՝ 1602—1662 թթ. պատմությունը՝
«Պատմութիւն Առաքել վարդապետի Դավթիմեցոյ» գիրքը բաղկացած է
մեզմ առաջարանից և 58 գլուխ: Պատմության բուն մասը վերարերում
է XVIII դ. առաջին կեսի թուրք-պարսկական պատերազմների հրորդ
շրջանին, պատերազմներ, որոնք հիմնականում ծավալվեցին պատմա-
կան Հայաստանում: Նա մանրամասն խոսում է Շահ-Արքա Ի-ի գիշի
Հայաստան, մասամբ էլ Վրաստան կատարած արշավանքների և Օս-
մանյան կայսրության դեմ մղած նրա պատերազմների մասին: Դավ-
թիմեցին դառնությամբ նկարագրում է նաև Հայերի բռնի գանգվածային
տեղահանությունն իրենց Հայրենիքից: Նա ուշագրավ տեղեկություններ
է հազորում XVIII դ. սկզբում ծավալված ջալախական շարժումների
մասին, որոնց նվիրված է գրքի 7-րդ գլուխը «Յաղագոյ յայտնելոյ շա-
լուլցն և սասարկ սովուն և մարզակեր դայլոցն, և այլ ևս աւարտու-
թեանցն՝ որք ժամանեցին» ի վերայ աշխարհից խորապես: Գրքի 51-րդ
գլուխում, որի խորագիրն է «Պատմութիւն օսմանցոց թագաւորաց, օս-
ման օղու կարգն այս է, որ կոչի խոնդցար», խոսվում է Օսմանյան
կայսրության հիմնագիր Օսման Ի-ի և նրա հաջորդների, ինչպես նաև
նրանց օրոք տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների մասին:

Պամիրիժեցու «Պատմություններ առաջին անգամ լույս է տեսնել հե-
ղինակի կենդանության օրոք՝ 1869 թ. Ամստերդամում, Ուկան Սրբան-
ցու նախաձեռնությամբ²², Այսուհետեւ՝ 1884 և 1896 թթ. լույս է տեսնել
էջմիածնում²³, Գոյություն ունի նաև Բրուսի Ֆրանսիական հրատարակու-
թյունը²⁴: 1972 թ. ապագրվել է նաև ուսմերեն թարգմանությունը²⁵:

²⁰ Ա. Կ. Զարզւան, Հայացիների շարժուց և Հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (XVI—XVII դր.), Երևան, 1969, էջ 22.

²¹ Անձանագրության ժամանակաշինությամբ՝ Այսուհետեւ՝ 1. Գ. Դավթյան, Առաջել Դավթիմեցու պատմությունը, որպես Անձանագրությամբ XVIII դարի պատմության սկզբանայութ, Երևան, 1978:

²² «Գիրք պատմութեանց, շարադրեալ վարչապետի Առաքել Դավթիմեցոյ», Ամս-
տերդամ, 1869:

²³ «Պատմութիւն Առաքել վարչապետի Դավթիմեցոյ», Վաղարշապատ, 1884, 1896.

²⁴ M. Brosset, Livre d'histoires, composé par le vénérable Arakel de Tauriz, Collections d'historiens arméniens, t. 1, ՏՊԲ, 1874.

Ներմիա Զելեբի Քյոմուտնյանը (1637—1695) XVII դ. Հայ մատենագրության խոշոր գեմքերից է²⁰: Նրա աշխատությունները հարուստ նյութ են պարունակում ավյալ ժամանակաշրջանի Ծամանյան կայսրության պատմությունը և այլ ժաղավարքական սոցիալ-տնտեսական կյանքը ուսումնասիրելու համար: Հատկապես պատմագիտական գործերում նա առանձնակի ուշադրություն է դարձրել Բուրքական պետության ներքին վիճակի, պատասական երկպառակությունների, կենտրոնախույս ձրգուումներ ունեցող ֆեոդալների, շալայիշական շարժումների ու պատերազմների հետևանքով առաջացած ծանր հարկերի վրա և այլն:

Ե. Քյոմուրմյանի դրական հարուստ ժառանգությունը, մեծ մասմբ անտիպ, պահպան է Մաշտոցի անվան Մատենադարանում, Վենետիկի Միջինարյանների մաս և Նրաւաղեմի ու Հակոբա վանքում: Առանձին ձեռագրեր գտնվում են Նոր Ջուղայի, Արմաշի, Ղալաթիո մատնադարաններում և բրիտանական թանգարանում, ինչպես նաև անհատական հավաքածուների մեջ:

Սառըն բերում ենք Ե. Չ. Քյոմուրմյանի՝ Թուրքիայի պատմության հայ առևշտող աշխատությունները:

1. «Պատմութիւն Համառու Դմ տարու սամանցւոց թագաւորացն, որ ի սուլթան Օսմանէն մինչև այժմ սուլթան Մոհամէտ ԺԹ թագաւորը ենք: Այս շափածո աշխատությունը բավանգակում է կայսրության 400 տարվա պատմությունը, սկսած սուլթան Օսման I-ից մինչև սուլթան Մեհմետ IV-ի (1648—1687) գահակալության ժամանակաշրջանը»: Ե. Քյոմուրմյանը ժամանակագրական կարգով թվարկում է օսմանյան սուլթաններին՝ Նշելով նրանց օրոք առջի ունեցած պատերազմներն ու նվաճումները թալիանյան թերակղզում, Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: Կարենոր տեղեկություններ կան նշված ժամանակաշրջանում Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականության, Թուրքիայում ապրող ժողովուրդների քաղաքական ու սոցիալ-տնտեսական դրության և կայսրության մեջ բռնկված ճնշչերիական ապատամությունների, շալայիշական շարժումների, ինչպես նաև օսմանյան լժի տակ հեծող ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի մասին: Այս երկն անտիպ է: Ցեղագիրը գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում (№ 1675, էջ 174ա):

²⁰ Аракел Հայրիկ, Книга истории, перевод с армянского, предисловие и комментарий Л. Ханларкина, М., 1973.

«Քյոմուրմյան գնուազրության մասին ժամանակ տես» Հ. Ս. Սահակյան, Երևան Թյումագրքն, Երևան, 1984, էջ 3—40:

2. «Բագավորութեան օսմանցոյ համառոտիվ պատմութիւն», Այս երկը վերը նշված ոՊատմությանց արձակ համառոտազրությունն է, Քաղաքական պատմությանը զուգընթաց ն. Թյումուրճյանը հանդամանուրեն կանգ է առել նաև Թուրքիայում զոյսություն ունեցող սոցիալական անհավասարությունների վրա և բնագատել է սամանյան սուլթանների բռնակալական ռեժիմը:

Անտիպ է, պահպանված են հետեւյալ ձեռագիր օրինակները՝ Սրբանի Մատենադարանում՝ ձեռ. № 1786, էջ 1ա 81ր, Վիեննայի Մխիթարյանների մատենադարանում՝ ձեռ. № 786 և Երուսաղեմի ո. Հակոբավանների Մատենադարանում՝ ձեռ. № 464.

3. «Անուանը որդոյ թագաւորաց Օսմանցոց»: Համառոտ պատմություն է, ուրի հաշորդաբար թվարկվում են օսմանյան սուլթանները, եղանակում են նրանց ծննդյան, մահվան, գահակալության տարեթվերը, ինչպես նաև տվյալ սուլթանի օրոց կատարված նվաճումներն ու իրադարձությունները:

Անտիպ է, պահպանված է Մաշտոցի անվան Մատենադարանում (ձեռ. № 1786, էջ 88ր—95ա):

4. «Ռոտիւ շարադրեալ անուանը թագաւորաց օսմանցոց»: Ծառ անուած թվարկում է օսմանյան սուլթաններին և նրանց կատարած կարելոր գործերը. Պահպան է Երեանի Մատենադարանում (ձեռ. № 1786, էջ 97ա—98):

5. «Օրագրութիւն», Ամբողջական վերնագիրն է՝ ռէնդինակ օրագրութեան և Երեմիայ Զէլէպի, որդի տէր Մարտիրոս քահանայիք, որտեղ մասնագրապես նկարազրկած են նաև 1648 թ. Հունիսի 11-ից մինչև 1663 թ. նոյեմբերի 11-ր Թուրքիայում կատարված մի շարք կարելոր քաղաքական իրադարձությունները, ինչպես նաև բնակչության կենցաղի և ծիսական սովորությունները:

Ձեռագիրը պահպանված է Երուսաղեմի ո. Հակոբա մատենադարանում (ձեռ. № 1893): Ձեռագիրը հրատարակել է Մեսրոպ Նշանյանը²⁰:

6. «Պատմական բանք իւրոյ ժամանակին». 1682 թ. Էջմիածնի նղաղար կաթողիկոսին ն. Թյումուրճյանի առաքած թուղթն է, որտեղ նկարազրկում են Կ. Պոլսի կառագարող շրջաններին վերաբերող անցքերը, ինչպես նաև ռենորհուրդ ֆունցցոց արքայի ընդ կայսեր Հռոմայի, «Պատրաստութիւն Տաճկաց մարտի ընդ Մաճարաց, ովասի գեսապանին»:

²⁰ «Միազբարեն Երեմիա Զէլէպի թէօժիրմենից, հրատարակիլ Մ. Խանյան, Երուսաղեմ, 1829».

Մոսկվաց» և «Հայ-իրանական կյանքին վերաբերող զանազան հարցեր» Ձեռադիրը գտնվում է Երուսաղեմի ս. Հակոբա մատենադարանում (ձեռ. № 1858, էջ 44ա—56բ),

7. «Համառոտ ստորագրութիւն Կ. Պոլսոյ նեղութիւն։ Բնագիրը լի պահպանվել։

8. «Աշխարհագրութիւն։ Բնագիրը լի պահպանվել։ Ն. Ակինյանը նշում է, որ այս աշխատությունից մնացել է միայն քարտեզը և առաջարանի մի մասը, իսկ ճեռագրի տեղը առ այսօր հայտնի չէ»,

9. «Պատմութիւն հրակիզման Կ. Պոլսոյ։ Նկարագրված է 1660 թ. հունիսի 14-ին Կ. Պոլսում տեղի ունեցած հրդեհը։ Այս կապակցությամբ Թյոմուրճյանն անդրադառն է Թուրքիայի ներքին գոռովային ստվերություններին Ձեռադիրը գտնվում է Երուսաղեմի ս. Հակոբա մատենադարանում (ձեռ. № 892, էջ 172բ—270ա)։

10. «Տարեգրական պատմութիւն։ Այս աշխատությունը բովանդակում է 1648—1690 թթ. Կ. Պոլսում և զավանեներում եղած հրդեհների մանրամասն պատմությունը, ինչպես նաև երկրաշարժերի, հեղեղների և համանարակների նկարագրությունների։ Պաշտամ են նաև XVII դ. տեղի ունեցած պատերազմները Ծոմանյան կայսրության և Ավստրիայի, Հռոմանարքության, Վենետիկի ու Պարսկաստանի միջև և այլն։

Այս երկը Թյոմուրճյանը շարագրել է 1692—1693 թթ., Ձեռադիրն առ այսօր լի հրատարակված և գտնվում է Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում (ձեռագիր № 509)։

11. «Պատմութիւն Ստամբուլոյ»։ Այս աշխատությունը կարելոր տեղեկություններ է պարունակում XVII դ. ու միայն Կ. Պոլսի, այլև Թուրքիայի պատմության համար։ Թյոմուրճյանը մանրամասն նկարագրում է Կ. Պոլսի պալատները, հյուպատոսարանները, շենքերը, շուկաները, արհեստները, առևտուրը, ինչպես նաև խոսում է քաղաքամերձ գյուղերի գյուղատնտեսության զանազան ճյուղերի մասին։ «Ստամբուլ պատմութիւնը» արժեքավոր աղբյուր է նաև տվյալ ժամանակաշրջանի Կ. Պոլսի բնակչության կինցազային և սոցիալ-քաղաքական հարցերն ուսումնասիրներու համար։

Մեքնագիր ճեռագիրը պահպանվում է Երուսաղեմի ս. Հակոբա մատենադարանում (ձեռագիր № 1030)։ Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվել են նաև երկու ճեռագիր օրինակներ № 1345, № 1675։ Գո-

Շ. Հ. Սահման, Երև. աշխ., էջ 45.

յություն ունեն այս աշխատության հայերեն²² և թուրքերեն²³ հրատա-
րակությունները:

12. «Կոնդակ Ս. Կարապետ եկեղեցւոյ ի կրտսե կղզույց»: Թովմա-
գակում է 1669 թ. սեպտեմբերի 6-ին մեծ վեզիր Քյոփրյուլյուփի կողմից
կրտսեի Գանախա քաղաքի գրավման և քրիստոնյաների հալաժման
նկարագրությունը: Զեռագիրը գտնվում է Փարիզում՝ Հովհաննես Զա-
վըրյանի մաս:

13. Զ. Քյոփրյուլյանը հայերենից թուրքերեն է թարգմանել մի շարք
կրտսեական և պատմական երկեր:

14. «Թարգմանութիւն Խոր կտակարանի և մասանց հին կտակարանի
ի լեզու տաճկաց»: Անտիպ է: Բեազիրը պահպանվում է Մատենադա-
րանի № 1645 ձեռագրում, էջ 119ա—219ա:

15. «Մաղմոս Դաւթիչ»: Թարգմանված է 1692 թ.: Անտիպ է: Պահ-
պանված են Հետնյալ ձեռագիր օրինակները. Մաշտոցի անվան Մատե-
նադարանում ձեռագիր № 1644 (էջ 294ա, 303ա) և Վենետիկի
Մխիթարյանների Մատենադարանում ձեռագիր № 85, № 988 (էջ 89ա—
99ա և 101ա—104ա):

16. «Թարգմանը լեզուով»: Անտիպ է: Պահպանվել է Վիճե-
նայի Մխիթարյան Մատենադարանի № 408 ձեռագրում (էջ 9ա—21բ,
28ա—94ա):

17. «Ճամանակ Ցայսմատուրը ի լեզու տաճկաց»: Գրված է 1655 թ.,
Բաժանված է 13 գլուխների և պարունակում է 175 վկարություն: Ան-
տիպ է: Պահպատճենվում է Երևանաղեմի ս. Հակոբա վանքի մատենադարանում
(№ 1076 ձեռագիր):

18. «Հիմնայէի ֆարիս վէ վէնաշ թէրմէմէի Զէլէրի Թէօմիրմանց»:
Տպագրված է Կ. Պոլսում, 1871 թ.:

19. «Պատմութիւն մեծին Աղեքսանդրի»: Թուրքերեն թարգմանու-
թյան ամբողջական խորագիրն է՝ «Թիթապ Հէքիաչէի նիշանկիր Խորէն-
տէր Գուրլ Գայնին. լիսան էրմէնեանտէն լիսան թուրքէ թէրմումէի էսթ
էլհազիր իրէմեա: Անտիպ է: Պահպատճենվում է Երևանաղեմի ս. Հակոբա վան-
քի մատենադարանում (ձեռագիր № 988, թղթ. 6ա, էջ 178ա):

²² Տեսման Ալեքսանդրին, Սուայուղոյ պատմութիւն. Հրատարակեց և հան-
գագրեց սեբաստ Վահրամ Բարգամյան, Վիճենա, Համ. Ա., 1913, Համ. Բ., 1922, հ. 9,
1922.

²³ Eremya Çelzbi Kümüreçyan, İstanbul tarihi, XVII asırda İstanbul, ter-
cüme ve taksiye eden Hrand D. Andreasyan, İstanbul, 1952.

Ա. Թյամուրճյանի պրական ժառանգության մեջ կան նաև մի շարք թուրքերն չարադրված թղթեր, ուղղեր և զանազան ուղերձներ⁵⁴:

- 1) Տաճկարարրատ թուղթ (առ Գրիգոր Զէլէրիին),
- 2) Տաճկարարրատ թուղթ որ է Մուհամեթնամէ առ պուրսացիս ոմանս:

3) Առ ամսիկ ոմն Հայազարմ թուղթ նաև արզմանէ նախագծօր:

4) Մի թուրքերն ուսանավոր:

5) Տաղ ասացեալ ի յերեմիայէ վերայ Ս. Երուսաղէմայ թուրքերն վերնագիրն է՝ «Մումտէմ զարտր տառարարիմէ»: Հրատարակված է «Տաղարան փոքրիկը-ում», էշ 41—43:

6) Տաղ ի վերայ ս. գերեզմանին Թրիստոսի, Հռատարակված է «Տաղարան փոքրիկը-ում», էշ 52—53:

Արցանամ Նըևանցին XVIII դ. պատմագիր է: Նրա պատմագիտական աշխատությունն ընդգրկում է 1721—1736 թթ. թուրքերի և պարսիկների միջև տեղի ունեցած պատերազմական գեպքերի, բաղաքների և գյուղերի ավերածությունների, սովոր ու գերեվարության նկարագրությանը: Արցանամ Նըևանցին, անկասկած, ականատես է եղել շարադրված գեպքերին, բանի որ նա խոսում է այդ իրադարձությունների մասին ամենայն մասնաւությամբ: Նրա հազորդած տեղեկությունները արժեքավոր են նաև Հայ և Վրաց ժողովուրդների տվյալ ժամանակաշրջանի պատմության ուսումնասություն համար:

Արցանամ Նըևանցու պատմությունը հրատարակվել է Նըևանում՝ 1928 թ. «Պատմութիւն պատերազմացն, որք եղեն յօսմանցուց ի վերայ քաղաքցն Հայաստաննայց և Պարսից՝ յետ գումարելոց Մահմետ առլատանին պահուանից ի վերայ արքային Պարսից Եահ-Մուզան Հուսէինին վերնագրով: Պատմությունը բաժանված է 7 գլուխների: Պատմության մեջ կարևոր տեղ են զրագում պարսիկ Բահմազ Ղուլի խանի՝ Հայաստանի և Վրաստանի վրա կատարած արշավանքները, նրա մղած պատերազմներն ու հազմանակներն ընդդեմ օսմանցիների:

Պատմության երկրորդ գլխում, որը կրում է «Թէ որպիսի մարտի պատերազմի առին օսմանցիք զՆըևանու վերնագիրը, յանըամասն նկարագրված է թուրքական զորքի կողմից Երևանի բերդի գրավումը և Հայ-թուրքական ընդհարումները»:

Օսմանյան կայսրության պատմությանը վերաբերող Հայկական աղբյուրներից անհրաժեշտ է հիշատակել նաև Մաշտոցի անվան Մա-

54 Տե՛ս Հ. Ա. Սահմանյան, էջը, աշխ., էշ 171:

անհաղարանի № 1496 ձեռագիրը, որն ունի «Պատմութիւն Սսմանցւոց զերնագիրը»¹⁰: Անապիրը բազկացած է 13 զյուից: Հեղինակը առաջարանում, ստուգարաննելով սթուրդը բարը, հայտառատակի խոսել է թուրքերի չթենօգենեզի, երանց տիրապետության սահմանների, կրոնի և աղքաղական որոշ նյութերի մասին: Աշխատությունը սկսվում է Սսման I-ից՝ XIII դարի վերջից և համեստ Իրրաջիմ I-ի գահակալության ճ-րդ տարիին՝ 1646 թ.: Հեղինակը մանրամասնորեն տվել է օսմանյան թուրքերի այս ժամանակաշրջանի պատերազմների ամբողջական պատմությունը: Ձեռագրում հետաքրքրիր տեղեկություններ կան նաև Օսմանյան կայսրության ներքին իրադարձությունների մասին¹¹:

Այսպիսով, հայկական աղբյուրներում հատուկ ուշադրությունը է դարձվել սելջուկ-թուրքերի և Օսմանյան կայսրության պատմության ամենատարեր հարցերին և հազորդվել շափագանց արժեքավոր տեղեկություններ:

Այդ տեղեկություններն էական նպաստ կարող են բերել խնդրո առարկա հարցերի քննության գործում:

XVIII դ. երկրորդ կեսին հայ պատմագրությունը, որի մեջ բիշ տեղ չի բնում Թուրքագիտառությունը, հանդիս նկազ որպես զիտական մտքի ինքնուրույն երուց: Դրա հիմնագիրն է բազմավաստակ գիտնական Միքայել Զամշյանը, որի գրչին են պատկանում թե՛ հայագիտական: և թե՛ կրոնագանական բազմականության զանազան աշխատություններ: Դրանցից ամենաարժեքավորը «Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեսան 1784» խորագրով ստվարածավալ աշխատությունն է, որի մեջ Մ. Զամշյանը առանձին ուշադրություն է դարձել նաև Հարևան ժողովուրդների և Հայաստանն ասպատակող գանազան բարբարոս ժողովուրդների պատմությանը:

Մ. Զամշյանը առանձին էջեր է նվիրել նաև մեղ հետաքրքրող թուրքագիտության հարցերին, որոնք հիմնականում ընդգրկված են երկրորդ հատորում: Այդ կապակցությամբ արժեք հիշել հետնյալ գլուխները: «Ճաղագի զօրանալու մինկի խանին թաթարաց և յարձակելոյ սարահազաց և շալարագինա: ի հայս (էջ 197), «Ճաղագի յարձակելոյ թաթարաց յաղուանիս ի վիրու, և ի հայս (էջ 204), «Ճաղագի յառնելոյ կանկիա-

10 Ա. Ա. Զակարյան, Մաշտոցի անվան ժամանակարանի № 1496 ձեռագրի յամանակը և հեղինակի հարցի շալուք (ան՝ «Էջեր Հայ ժողովրդի պատմության և բանախության», Երևան, 1973, էջ 187).

11 Վ. Ա. Հակոբյանի ճեթարությունը, այս ձեռագրի հեղինակը հիմնախուս Մուրաց զնունք է (նաև տեղում, էջ 149):

մուրայ և Հարուածոց գորս գործեցա նա ի Հայաստան և յայլ տեղիս (էջ 419), շճաղագոյ յառնելոյ օսմանցւոց զկոսանեղուազօլիս ի ձեռաց յումացք, շճաղագոյ ելից ուզուն Հասանայ, և շահ Խամադիլի արքային պարսից և մարտնչելոց նոցա առ օսմանցիս (էջ 509) և այլն:

Մ. Զամշլանը մեկ հատորով գրել է նաև այս պատմության Համառոտադրությունը թուրքերին լիզվով, որը հրատարակվել է Վենետիկում 1811 թ. «Գյուլզար» խորագրով:

XVIII դ. պատմաբանների շարքին պետք է դասել նաև Հայ ականավոր պատմաբան-դիվանազետ Իգնատիոս Մուղաչա դ'Օստիին (Հակոբ Հիսաթյան), որը առաջելապես հայանի է իր «Օսմանյան կայսրության ընդհանուր պատկերը» կոթողական աշխատությամբ:

Աշխատությունը բազկացած է յոթ հատորից: Չորրորդ հատորը լույս է տեսել նրկու մասով: Առաջին շրմ հատորների մեջ հեղինակը Հիմնականում խոսել է մահմեդական օրենսդրության՝ այդ թվում, մահմեդական դավանաբանության, ժիսակատարության և բարոյախոսության հարցերի շատրվությունը:

Հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ հատորներում հեղինակը մահմանանորին ուսումնասիրել է Օսմանյան կայսրության քաղաքական, ռազմական, իրավաբանական և քրեական օրենքները, ինչպես նաև Օսմանյան կայսրության վարչական կառուցվածքները ու օտար պետությունների հետ ունեցած նրա դիվանագիտական հարաբերությունները¹⁵:

Օսմանյան կայսրության պատմությունն օւսումնասիրովները միշտ էլ կարող են արժեքավոր նյութեր քաղել դ'Օստիի այս աշխատությունից, քանի որ հեղինակը, երկար տարիներ ապրելով Կ. Պոլսում, ականատես է եղել զանազան իրավարձությունների և օդագործել է հարուստ արխիվային նյութեր:

ՀԱՅ ԹՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ ՀԱՐԱՍՆՁԹԻ

Հայաստանի մեծ մասը՝ Արևմտյան Հայաստանը, գտնվելով Թուրքիայի լճի տակ, միշտ եղել է Հայ հեղինակների ուշագրության կենտրոնում: Վերջիններս Արևմտյան Հայաստանի մասին իրենց աշխատու-

¹⁵ Tableau Général de l'Empire Ottoman, par M. de M. D'Ohsson, Paris, tome premier et second 1788, tome troisième 1790, tome quatrième (première et second partie), 1791.

¹⁶ Այս համարներց հրատարակել է որդին Շայիկակի մոհից Շառ (ահա՝ Tableau Général de l'Empire Ottoman, par M. de M. D'Ohsson, publié par M. C. D'Ohsson, fils de l'auteur, tome cinquième et sixième, Paris, 1824).

թիւններում, բնականարար, լէին կարող շանդադառնալ Օսմանյան կայսրության պատմության հարցերի լուսարանմանը: Եվ պատճեկան չէ, որ XIX դ. ընթացքում Օսմանյան կայսրության մասին հայերեն լույս են տեսել բազմաթիվ ուսումնասիրություններ:

Այդ առումով հիշատակության արժանի են Վենետիկի Մխիթարյանների հրատարակած ստվարածավալ աշխատությունները: Զնյաց դրանց մեծ մասը նվիրված է Հայ ժողովողի պատմությանը, Մխիթարյանների տեսադաշտից դուրս չեն մնացել նաև օսմանյան սուլթանության պրոբլեմները, որոնց հետ սերտորեն առնչվում են արևմտահայության խնդիրները:

Անցյալ դարասկերի Մխիթարյան միարանության ականավոր պատմաբաններից է Ղուկաս Խնձրյանը (1788—1843), որի գրչին են պատճեկանում մի շարք ստվարածավալ հատորներ: Խնձրյանի աշխատություններում բերված հարուստ փաստական նյութը քաղված է թուրք պատմիչների ձեռագրերից, Հայկական ազգյալքներից, եկուոպական լեզուներով լույս տեսած դրականություննից, որոնց մեծ մասը մեզ չի հասել: Այդ իսկ պատճենում Օսմանյան կայսրության նոր շրջանի պատմության հարցերով դրազվողի համար Խնձրյանի գրքերը կարևոր սկզբնաղյուր են:

Ուշագրավ է Խնձրյանի՝ Կոստանդնուպոլիսի և Բոսֆորի նեղուցի մասին ուսումնասիրությունը¹: Առաջարանում հեղինակը նշել է Կոստանդնուպոլիսի և Բոսֆորի վերաբերյալ աշխատությունները, նկարագրել նեղուցների աշխարհապարական դիրքը և տեղադրել նրանց քարտեզները: Դրաւում շափածո տրված է քաղաքի թաղամասերի և շրջակայիքի հետթյունների, մզկիթների, պալատների նկարագրությունը: Ա. Կարինյանն իրավացիորեն գրում է, որ Խնձրյանի աշխատությունը ուշագրավ տեղեկագրական մի պոեմ է, որն այսօր անգամ կարող է գրավել վաղեմի անցյալը ուսումնասիրող պատմաբանների ուշագրությունը²: Պ. Խնձրյանի այս գիրքը ժամանակին հրատարակվել է ֆրանսերեն և իտալերեն³:

¹ Պ. Խնձրյան, Ամարակոց Բիւզանդիան. Ն նեղուցին նռանազնութեաւոյ կուծքնալի քաշից Պալատ հնի, որում լավելիու և հաշողութեան վէղերի աղէմից, Վենետիկ, 1794.

² Ա. Կարինյան, Ակնարկներ Հայ պարքերական մատուցի պատմության, Հայութ, 3, Երևան, 1960, էջ 75:

³ Ա. Պ. Խնձրյան, Հայկական նոր ժամանապիտություն և հանրագիտարան Հայ կրակի, Հայութ, Ա, Վենետիկ, 1808—1812, էջ 253—254:

Հատկապես հիշատակման արժանի է Խնճինյանի և Նույն Մխիթարյան միարանության վարդապետ Ստեփանոս Գյուլբեր Ազգացի Եկեղեցականգրությիմ շարից մասնաւ աշխարհի նվրապիս, Ակրիկը և Ամերիկա բազմահատոր աշխատառությունը (Վենետիկ, 1802—1806), որից Խնճինյանի դրչին են պատկանում առաջին, հինգերորդ և վեցերորդ հատորները:

ԱԱշխարհագրությունը շարադրված է ինչպես թուրքական, եվրոպական, այնպես էլ Հայկական աղբյուրների և Հրատարակված աշխատությունների հիման վրա։ Առաջին հատորը նվիրված է Սամանյան կայսրության, Հատկապես Արևմտյան Հայաստանի Խաչանդներին։ Հանգամանորեն խոսվում է Թուրքիայի արևելյան և անանդների աշխարհագրական դիրքի, կլիմայի, վարչական բաժանման, բնական հարստությունների, տնտեսության, առևտորի, ապրանքափոխանակության, մարսային առարգերի, տարրեր ազգությունների զրազմունքի, Հարկերի մասին։ Տրված է Խան Խաչանդների ընդհանուր պատկերը, նրանց մեջ մտնող սանչակների, Խաչինների, քաղաքների և գյուղերի նկարագրությունը։

ԱԱշխարհագրությանը առաջին հատորում հեղինակը բազմաթիվ թվական տվյալներով ցույց է տալիս օսմանյան կառավարության վարձ բաղադրականության աղետարեր Հետմանները Թուրքիայի արևելյան Խաչանդներում։ Թերենք միայն մեկ օրինակ. եթե Մանազկերտի սահմանակում XVII—XVIII դդ. Հայկական զյուղերի թիվը 350 էր, ապա XVIII դ. 60-ական թվականներին կազմում էր 100, իսկ նույն դարի վերջում՝ 20⁴։

Դ. Խնճինյանը բազմաթիվ փաստերի հիման վրա ցույց է տալիս, որ Թուրքիայի արևելյան Խաչանդներում սուլթանի իշխանությունը ձեզվական բնույթ էր կրում, որ իրականում տիրապետողներն ինքնիշխան քարդ բեգերն էին։ Սուլթանական կառավարության ձեռնարկած բռուր միջոցառումները, շեշտում է Խնճինյանը, ծնկի բերելու քուրդ բեգերին՝ ձախողվում էին։

Հեղինակը մանրամասն նկարագրում է սուլթանի պալատի վարքն ու բարքը, կառավարության անդամների, Հատկապես մեծ վեզիրի գործներությունը, որի իրավասության տակ էր գունվում օրենսդրական և գործադիր իշխանությունը։ Հոգևորականության՝ ուշեմի, գլուխն էր

4. Հ. Խնճինյան, Աշխարհագրութիւն..., Հատ. Ա, Վճնետիկ, 1806, էջ 311.

շեյխ ուլ Խոլամց, որը ըստ Խնձրինիկ, ոչ պակաս իրավունքներից էր օգտվում, քան մեծ վեղիբը⁵:

Դ. Խնձրինիկ ժավալուն աշխատություններից է ութշատորյա շԴարապատումը, որը լույս է տեսել 1824—1828 թթ. Գրված է ոյուրամատկելի այն աշխարհաբար հայերնեով, որը Թուրքիայի հայ վաճառականների և արհեստավերների խոսակցական լեզուն էր: ՇԴարապատումը-ի մեջ լրաւարանված է Համաշխարհային կեսպարլա պատմությունը՝ սկսած 1750 թ. մինչև 1800 թ.: Այդ ստվարածավալ հատորները շարադրված են բազմաթիվ եվրոպական ու թուրքական սկզբնազրյունների հիման վրա: Հեղինակը՝ պատմական դեպքերը նկարագրելիս դրսևորում է իր մոտեցումը, տալիս իր մեկնարանումը:

Մեծ տեղ է տրված Օսմանյան կայսրության կեսպարլա պատմությանը՝ սկսած XIX դ. 50-ական թվականներից մինչև XIX դ. սկիզբը:

Առաջին հատորում, լրաւարանելով կայսրության արտաքին և ներքին առևտորի հարցերը, Հեղինակը շեշտում է, որ օսմանցին ռազմատաճառութիւն մը կը ըստ ուրիշ տերութեանց հետ. Հոգ շէ որ՝ զուրսեցիր իր երկրէն ավելի վաստրկին, Եվրոպին տանին վաստրկինին, այլ ամմէն տերութեան առաջին բաց է օսմաննան երկիրը. ո՞վ որ ի՞նչ ուզէ՝ կրնայ բերել ծախել, իրմէ վաստրկիլ:

Ընթերցողը լրիվ պատկերացում է ստանում XIX դ. երկրորդ կեսին և XIX դ. սկզբին Օսմանյան կայսրությունն ներժութվող և արտահանվող ապրանքների տեսակների և քանակի մասին:

Դ. Խնձրինիկ, խօսելով արտահանվող հումքի որակի մասին, պրում է. «Օսմաննան երկրէն ելած նաև ուրիշ ապրանքները..., մանավանդ Պուրսայի իփէկին առևտուրը, որ աշխըրհիս մէջ մէկ հատիկ է, մէջմը իր փալլումութեանը համար մէջմնալ իր ձիգնալուն ու երկրնեալուն համար»: Հեղինակը շանում է բացատրել, թե ինչու էր սովորական կառավարությունը անշահավանական առևտուր անում. Շաբաթիք օգուտը առ է որ՝ ան տերութիւնները միշտ իրեն պաշտպան կը կենան, անանկով առանց դաշնակցութիւն մը ընելու անոնց հետ՝ իրը թէ կատարեալ դաշնակից ըրած կումննայ զիրենքը»: Նա փորձում է խորամուխ լինել Օսմանյան կայսրության դեմոգրաֆիայի, մշակութալին և ներքին կյանքի առ խնդիրների մեջ:

⁵ Հ. Դ. Խնձրինիկ, Աշխարհագրութիւն, Համ. 3, Վճռեալիկ, 1804, էջ 89.

⁶ Դ. Խնձրինիկ, Դարմապատմ (1750—1787), Վճռեալիկ, 1824, էջ 232—233.

⁷ Նույն տեղում:

«Դարապատում»-ի երկրորդ հատորը նվիրված է 1757—1768 թթ. զմաքերի լուսաբանմանը։ Մանրամասնորեն նկարագրված է 1754 թ. ձմեռը Ստամբուլում։ ԵԱՆ տարին սաստիկ եղած ձմեռը, անշափ, որ Ստամբուլին նավահանգստին ներսի դիէրը սառեցավ ծովը...»⁹, Հաշորդ տարին՝ 1755 թ. հուլիսի 3-ին Ստամբուլում հրդեհ բռնկվեց, որի հանգանքով «500 տան չափ երկեցան ու 200 ալ մարդ» իսկ հետևեալ տարին 1756 յունիսի 24 ավելի մեծ կրակ եղավ... ոմանց ըստածին պէս 100 համի երկեցան, 40 հազար տուն, 50 հազար խանութ. գետնի տակի եղած ջարդի նամփայնէրուն զուրշինէրը հալեցան։ Հազար մարդու չափ ալ կորսրվեցան առ կրակին»¹⁰։

Հանգամանորեն խոռվում է նաև կայսրության հանքային հարցստությանն երի մասին։ Ըստմանցիի երկրին չիբանված հանքերուն համբանքը խիստ չատ էն, ինչպատ ոմանց 400-ի կհասնեն ամմէննեն ավելի Մանիսային մեծ լեռանը վրայ է, որ նզմիրին կռնակը կիյնայ—ասիկայ յունաց տանը կըրանվէր...»¹¹։

Դ. Խնճինյանի ուշադրությունից լնն վրիուլ ԽVIII դ. երկրորդ կեսին (Օսմանյան կայսրության անկման շրջանում) ինչպես խոչը ֆեռազաների, բեգերի, փաշաների երկպառական կռիվները, այնպես էլ թուրք զավթիլների լծի տակ ընկած ժողովուրդների պայքարը։ Այսպես, վերուժելով Մուստաֆայի սուլթանության օրոք կայսրության ներքին դրությունը, Խնճինյանն ընդգործում է, որ թեև նրա իշխանության տարիներին պատճերազմներ համեմատաբար քիչ եղան՝ «Միայն թէ առ դին ան դին ապօտամբնէրը չէին պակսէր, Կիւրճիի մէջէն, Մորաւ մէջէն, որուն պէյէրը մեծ խոռվուի հանեցին, Խըպրըսի մէջէն, բայց ամմէնն ավելի թումէլիի Մէջ խարատաղցիր մեծ ապօտամբութիւն հանեցին 1181 հինքին»՝ յամին 1767։ որոնց վրայ զօրք խըրկեց սուլդան Մուստաֆան ու 1768 անոնք կոտրեց¹²։

«Դարապատում»-ում բավականին նյութ կա հնիչերիական զորքի և նրա գերի մասին։ Այդ զորքը ժամանակին մեծ ուժ էր ներկայացնում և շատ հաճախ սուլթանները հնթարեկվում էին նրան։ Սակայն, ինչպես նկատում է Խնճինյանը, ենիշերիները սուլթան Ահմեդի (1703—1730) օրոք բարձրացրած ապօտամբությունից շետև տկարացած էին, առողի քաջարությունը չունեինք»¹³, ենիշերիական զորքի մասին բերված

⁹ և Դ. Խնճինյան. Դարապատում (1757—1768), Վենետիկ, 1825, էջ 240.

¹⁰ Խոյք տեղում, էջ 242—247։

¹¹ Խոյք տեղում, էջ 253։

¹² Խոյք տեղում, էջ 257։

փաստերը նոր լույս են սփռում նրա խաղացած գերի լուսարանման վրա:

Դ. Խճիճյանի ուսումնասիրության հրորորդ հատորը նվիրված է 1768—1780-ական թթ. ինչպես Սամանյան կայսրության, այնպես էլ Հայքան մյուս պետությունների ներքին և արտաքին քաղաքականության, դիվանագիտական ու պատերազմական հարցերին: Հեղինակը փաստական հարուստ նյութերով ցույց է տալիս Սամանյան կայսրության սոցիալ-անտեսական կացությունը՝ շեշտը դնելով հատկապես ադրբային Հարաբերությունների, հարկային սիստեմի, պետական պաշտոնյանների շարադառությունների և այլ խնդիրների վրա: Խճիճյանը խորոշիամբ լուսաբանում է զյուղացիության ժամը վիճակը: Նա նշում է, որ երբ զյուղացիններն ի վիճակի շեմն տուրքերը ժամանակին վճարելու, շշահը վրան կդնեին, շահին շահը կտան անշէին: Անանկով առօհ արրվածնին 20—30 զուտուշ էր, շահը վրան զարնելով՝ քանի մը տարգան մէջ հազարներով պարտըկան կմնային: Պեղացիք անոնց, ինչ ընելիին շիտէին իրենց ամմէն ապրանքը ու երկիրը ան պարտատերուն ձեռքը կանցնէր, գեղացիք միշտ ժամը պարտքի տակ ընկած էին, ու անոնց գերի եղածէ¹²:

Դ. Խճիճյանը վառ դույներով պատկերում է էսնաֆությունները, էսնաֆների տեղային կազմակերպությունները, արհեստաների տեսակները և այլն¹³:

Հեղինակը մանրամասն տալիս է նաև ռուս-թուրքական 1768—1774 թթ. պատերազմի նկարագրությունը:

Դ. Խճիճյանը նախքան պատերազմական գործողությունների նկարագրությանն անցնելը ներկայացնում է հվասարական պետությունների բնիած զիրքը արդ պատերազմի նկատմամբ: Այսուհետև, խոսելով պատերազմող երկու պետությունների ռազմական ուժերի մասին, նշում է՝ ուղղի թերանը 200 հազար զօրք պատրաստեց տամիկը, 30 միլիոն խազնայէն գուրու համելով մեծ և աշավոր պատրաստություն տեսնելով, հարք շատանալով 400 հազարը կամ ըստ ոմանց 600 հազարը անցավ...¹⁴:

Հեղինակը մանրամասն նկարագրում է թերդիրի և քաղաքների համար տեղի ունեցած համառ մատերը¹⁵: Այսպես, պատմելով Բնեղեր

12 Դ. Խճիճյան, Դարապատում (1768—1780), Վենետիկ, 1826, էջ 4—5:

13 Նույն տեղում, էջ 10:

14 Նույն տեղում, էջ 28—30:

15 Նույն տեղում, էջ 35—36:

բերդաքաղաքի համար տեղի ունեցած արյունահեղ մարտերի մասին, նա ընդգծում է. «Երբոր հոս ասանկ արինահեղութիւն կը լլար, մէկալ դիացէնալ յասկովնէրը ինչ ամրութիւն որ շինած կային՝ յարձուկնով առին, կը անային բերդին վրայ ելլալ, ուր որ պահված էր էմին փաշան իրեն մնացած զօրքովը, որ յուսահատելով անձնատուր եղավ երկու ուրիշ փաշայնէրով, Ասանկով 12 ժամի լափ ժեծկըլելով՝ արին թափելով շատր գիշեր ատեն՝ առնըլեցավ Պէնտէր 1184 հինգիթին... Ասանկ շատ մարդ կորսնցընելով Մոսկովը կրցավ առնեն... իրեք որ երեցավ քաղաքը, շատ մարդ ալ ան կրակին կորան. անանկ որ առաջ 60 հազար բնակիլ կային Պէնտէրին մէջը, աս ժեծիս մէջը մոխիր եղավ, ու մէկ ավերակ մը դարձավ¹⁶: Նկարագրենով թուրքական զորքերի կրած պարտությունը պատճեազմում և նրանց զգալի մասի գերեվարվելը, հեղինակը գրում է. «Ենիշէրինէրէն շատն ալ փախան անատօնու իրենց քաղցըները զացին, ճամփան շատ տանկի քաղաք թալլելով, վնասէլով»¹⁷:

Նա հանգամանորին լուսաբանում է նաև պատերազմի ժամանեակ Օսմանյան կայսրության ներքին զրությունը: Նշվում է, որ պատերազմում պարտվելը այն հետևանքն ունեցավ, որ Սամբռուում, Անատոլիայում և Բալկաններում բռնկվեցին ապստամբություններ¹⁸:

Հեղինակը մանրամասն նկարագրում է Օսմանյան կայսրության զրությունը 1768—1774 թթ. ոսւս-թուրքական պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանում՝ ավարտելով շարադրանքը 1782 թվականում: Այդ տարիներին Սուտամբռուի զվարակոր դիմքերն էին, բայց հեղինակի, 1778 թ. ժանտախտը և 1782 թ. հրդեհը, և Անանկ սաստիկ եղավ ժանտախտը, —ընդգծում է Ինճինյանը, —որ շատոնց անանկ չէր եղած, ասոր սաստկութիւնը 40 օր քշեց. բայց ան 40 օրվան մէջը թաղէր մահալլէնիր) տնէյ պարպեց. օր կըլլար ինչպան 3—4 հազար հոգի կըմեռնէին... բայց Սուտանպալ շատավորութիւնէ զիացէն անակ մէկ անհասկընալի քաղաք մընէ որ՝ առջափ մարդ պահսելին ետև ելլաս մէջը քալելու ըլլաս, տարբերութիւն մը չես տեսնար ան պահասութիւնը¹⁹: և Ասոր վրայ, —շարունակում է հեղինակը, —մէկ սաստիկ կրակ մը եղավ. ան կրակը կտրեց ցամը. ետքնալ մէկ ցուրտ մը եկավ որ՝ էյեռուպին ու Խաս-

¹⁶ Նույն տեղում, էլ 55—56.

¹⁷ Նույն տեղում, էլ 42. Բոյոր հասարհերում բուրք պատմիշներից բերված մերժամները արված են թարգերն՝ հայերն տաճրով:

¹⁸ Նույն տեղում, էլ 43.

¹⁹ Նույն տեղում, էլ 286—287.

գեղին մէշի եղած ժովք սառեցավ (պուզ կը տրեցավ): Ստանալին դուրս հաջարավոր ոչխար կոտորվեցան ցուրտէն, գնդացինէրու տոմեր փրյան ձինին շատութիւն տանրութիւնէնք²⁰:

Տալով 1782 թ. օգոստոսի 21-ին Ստամբուլում բռնկված Հրդեհի ժամբաժաները, Խնճինյանը գրում է, որ հրդեհը տարածվեց ողջ քաղաքով մեկ և անեց 60 ժամ, և որովհետեւ աս մէկ տարվան մէշ ուրիշ շորս կրակ ալ եղած էին առաջ՝ սրոնց մէկը 11 ժամ քաշեց, մէկալը 25 ժամ, անակ եղավ, որ Ստանալին մէկ մասը միայն մնաց, մէկալ իրեք մասը երված մնացինք²¹:

«Դարապատումն-ի շորրորդ հատորում լիւսարանված են 1780—1789 թթ. Օսմանյան կայսրության արտաքին և ներքին քաղաքականության հարցերը: Խնճինյանը հանգամանորնեւ խոսում է Օսմանյան կայսրության միջազգային կապերի մասին: Նա հատկապես նշում է, որ Խսապանիան, օգովելով Հյուսիսային Ամերիկայի՝ անկախության համար Անգլիայի դեմ մղած պատերազմից և վերշինիս առևարական կապերի թուլացումից՝ Օսմանյան կայսրության հետ բանակցությունների միջնորդ հասավ այն բանին, որ 1782 թ. սեպտեմբերի 14-ին Ստամբուլում ստորագրվեց առաջին դաշնագրությունն Խսապանիայի և Օսմանյան կայսրության միջև: Ենթանկով, — գրում է Խնճինյանը, — մէկ մշտեցնեավոր խաղաղութիւն ու բարեկամութիւն մը սահմանեցին Սպանիային ու տանին մէշը...»²²:

Այս հատորում հեղինակը նաև նկարագրում է, թե ինչպես Պարակասանց և ապա Թուրքիան կովկասյան ժողովուրդների տղաներին ու աղջիկներին վաճառքի էին հանում արնելլան շուկաներում: Ենթար աս երկրներուն վրայ Մոսկովը խանը ըլի սկսավ, — ընդդժում է Խնճինյանը, — ուղղակի կամ անուղղակի՝ մէշինները յորդորելով արգելեց մարդ ժախելը: տաճիկ վաճառականները որ շատ վաստակ ունեին առևտուրնեւ դանդառ վերուցին Ստամբուլ դուռը: Պառակալ առ տարիին ետքերը Ախալցխայի փաշային ապացըցեց որ՝ լեզկիններուն հրաման խըրէ՝ որպեսզի առ երկրները վաղեն, ու աղաթ աղջիկ քաշեն առնեն իրենց ժախելու համար...»²³:

Ռուսաստանի՝ Նրիմին տիրանալը, Ան ժովում և նեղուցներում ազատ նավարեկելը և Կովկասում նրա ազդեցության ուժնանալը մեծ

²⁰ Խոյն տեղամ, էջ 287.

²¹ Խոյն տեղամ, էջ 287—288.

²² Դաշնագրության մասին մաքրածան ուժու Խոյն տեղում, էջ 105—106.

²³ Խոյն տեղում, էջ 254—255.

անհանգություն պատճառեց Անգլիային ու Ամերիկան բանէն ազելի, — դրում է Հեղինակը, — ինկիլիպներուն վաճառականները խիստ վախ ունեին որ՝ Սոսկովը պատությունը ձեռք ձգելէն ետև իր նազէրը համարձակ անցնելու Ստամպօլի ու Չանախ խալչսի պողազէն, և Խըրըմին ու Դամանին վրայ տէր ըլլալէն ետև, Հինախտանի առեւուր մը կրանայ ցամաքի համփով՝ որ ավելի կարճ կլայ և ավելի անվտանգ՝ քան թէ իրենց ըրած օվկիանոսի համփան, ան առեն իրենցը կգոցվէր՝ ինչպես որ Վէնետիկոց ճամփան գոցվեցավ երրօր փորթուկալցիր նոր ճամփայ գտանք²⁴.

Այնուհետև նկարագրված են 1785—1787 թթ. տաճկին մէջի եղած զանազան ապստամբությունները։ «Պարսից սահմանակցության տէղերն ալ, — դրում է Ինձինյանը, — ավելի խոռվություն հանած էր արած շեյխ մը Դրինել անուն, որ Պարան առավ 1785, ոու գտնված տաճկին նազէրը թալլեց։ Նույն տարում Ստամբուլուն ապստամբեցին ենիշերիները, 1786 թ. ապստամբեցին այրանացիները և զուրս թշեցին թուրք իշխանավորներին, Թուրքական գորքերը մեծ գմլարությամբ ի վերջո մնշեցին ալբանացիներին։

«Մարտյ 24 պէտէրն ալ բաժարձակ իշխան սկսեր էին, ոու եղած փաշան լին ուղեր ճանշնալ, տաճկին Ծնազանդությունէ բոլորովին դուրս ելլալ կընայէին, իրենց տուրքը որշափ որ կուգէին՝ անշափ կուտային տաճկին... 1786 յուլիսի մեջ ճէզզայիրի դափուդան Հասան փաշան իր ամէն նազէրավ Մըսրը զացած ըլլալով՝ պէտէրը հալածեց... շատ տուրք ժողովեց Մըսրէն միտքը ան էր որ՝ մէմլուքներուն... տերությունը անկէց վերշացընէ, որ շատուցմընէ Մըսրը կիշխէին, միշտ ապստամբությամբ անհանգիստ կընէին...»²⁵.

Չորրորդ հատորի վերշին զույգները նվիրված են 1787—1791 թթ. ուսու-թուրքական և 1788—1791 թթ. թուրք-ապստարիական պատերազմներին²⁶, Խնձինյանը մանրամասն տալիս է պատերազմող կողմերի զորքերի թիվը, զենքերի ու հրետանու քանակը, բերդերի նկարագրությունը, բերում է պատերազմներից հետո կնքված պայմանագրերի ամբողջական տեքստերը։

Հեղինակը լուսաբանում է նաև Օսմանյան կայսրության ներքին դրությունը պատերազմների տարիներին։ Այսպես, օրինակ, խոսելով

²⁴ Նույն տեղամ, էջ 265.

²⁵ Նույն տեղամ, էջ 284—285.

²⁶ Նույն տեղամ, էջ 285—402.

1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմում Թուրքիայի կրած պարտության մասին, նա ընդգծում է. «Երբեր տաճիկը սկսեր էր Սոսկովին ու նեմեցին հետ ժեծվիլի՝ Մսրայ պեյքը իրենց համար ատեն գտնալով՝ նորին Մըսրը մտած առած էին. Անառալում փաշանիրէն ալ ոմանց ապատամբած. առնավուտի փաշան սովորական տուրքը կարծ անձինալ 80 հազար դորբով տաճիկն երկիրը գաղուց²⁷, Այսուհետեւ գրում է, որ պատերազմի ավարտից հետո սովորական կառավարությունը ամբողջ ուժը հանեց ապատամբների դեմ և նրանց կրկին հնագանգեցրեց:

Դ. Խեճիճյանը բացահայտում է Օսմանյան կայսրության հարցում տարբեր պետությունների միջև եղած հակասությունները: Հատկապես նշում է Անգլիայի պայքարը Ռուսաստանի տերիտորիալ նվաճումների դեմ՝ Ան ծովի ավագանում և Բալկաններում: Հեղինակը, շարադրելով 1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմական գործողությունները և Ռուսաստանի հաղթանակը, ընդգծում է, որ այդ հաղթանակը բավականին անհանգուացրեց անդիխական կառավարությանը և վերջինս հատուկ նոտայով դիմեց պետություններին, որ սիրեն նավատարմիջը Պալդիկ ծովը պիտոր խորէր, բռնադատելով Մոսկովը, որ հաշտություն ընէ ամմէն բան ետ տալով ինչպես որ առաջ էր, և ինչպես որ կուղին ծովեղերայ տէրութքաւ: Սակայն Անգլիայի պառկամենուում Ռուսաստանին պատերազմ հայտարարելու դեմ դրւու եկան այն վաճառականները, որոնք ոչատ առուտուր կընէին Սոսկովին հնաւան²⁸:

Օսմանյան կայսրությունը XVIII դ. վերջին քառորդում ապրում էր խոր ճնշածամ: Ենիշերիական բանակը ավելի շատ զրադգած էր ներքին խառնակշություններով ու կողովուտով, բան զինվորական ծառայությամբ: Սիպահական բանակը, որը կայսրության հիմնական ռազմական ուժն էր, նույնպես իրեն չէր արդարացնուաւ: Թիմարիուտները և զիամեթները, որոնք պատերազմի ժամանակ պետք է սահմանված բանակությամբ զորք տրամադրենին սովորական, մեծ մասամբ հրաժարվում էին: Պալատական հսկայական ծախսերի հետևանքով պետական զանազարանը դատարկվել էր: Խոշոր ֆեոդալները, փաշաները լէին հնթարկում կենտրոնական իշխանությանց: Նոր թափ էր ստացել ազգային-աղատագրական պայքարը: Այդ բռլորը Թուրքիայի կառավարող շրջանների համար ստեղծել էին վտանգավոր կացություն, որից դուրս դարձ-

²⁷ Դ. Խեճիճյան, Դարապատում (1758—1759), Վանեսի, 1828, էջ 165:

²⁸ Խոյն անգամ, էջ 125:

միակ եղբ նրանց համարեցին որոշ վերափռխություններ կատարելը։
«Դարապատում»-ի հինգերորդ հատորի՝ Օսմանյան կայսրությանը
նվիրված հատվածում Խնձօնյանը որոշակի լույս է պառում վերը նշված
կարևոր իրադարձությունների վրա։ Այսպես՝ մանրամասն խոսելով սուլ-
թան Սալիմ III-ի (1785—1807) վերափռխությունների մասին, հեղինա-
կը նշում է, որ նա սկզբից ցանկացավ կարգավորել պորթը, որն արգել-
ի վիճակի չէր հին ձևով պատերազմել ևրոպացինների դեմ և Ենոք տա-
րավ որ անոնց (եվրոպական երկրների—Ն. Ս.) կերպը կրթությունը իր
տէրութեան մէջն ալ խօսիչ։ Մովլան Սելիմի նոր դուռը կռլվեց Նիզա-
մի զեղիգ, որին մարզելու համար Ֆրանսիայից հրավիրեցին մասնա-
դառներ՝ թիժէնկի ամելի թոփ նետելու կրթություն սովորեցնելու²⁰,
և ուրովշնետե, —շարունակում է հեղինակը, —աս նոր կրթության ճամ-
փան բանելու չէր ըլլար առանց մեծ եկամուտ ունենալու՝ անոր համար
և Սելիմը բրիտանէից վրայ ալ ամմէն տեղ բէսմի պիճրիէն եվելցուց-
2 փարայ մէկ օխայ զինիին վրայ ըրախիին վրայ. բամբակ առողջները
առաջ օխային ըստակ մը կռւտային, հիմա հրամմեց փարայ մը զնա-
րել, իսկ մանածին 2 փարայ, բուրդին համար ալ ամմէն ոլխար ու այժ-
պկում մէյ մէկ փարայ վճարել ապսպուրեց. զինթորին ալ (սաշը խըպը-
զինալ) օխային I փարայ։

Անոնցմէ եկածները համրեցան 1798 (1212) տեսան որ 64 հազար
քէսէ, 250 հազար զրուց կըլար պետական սնդուկինք²¹։

Զիամեթների և թիժարի տիտղոսների իրավունքների և պարտականու-
թյունների վերաբերյալ շնչառում է, որ Ենոքուցմէ դրված էր, որ զիա-
մէթի ու թիժարի տիրվուտանքը պարտըկան ըլլան, ժեֆի (պատերազ-
մի—Ն. Ս.) ատեն իրենց ձիով պատերազմ երթան. բայց ետքերէն-
ոմանք մէյ մէկ պատրուակ (մահանայի) բներելով չէին երթալ. սուլթան
Սելիմը պատերազմը լըմբնցնէլին ետն... 1790 չիշտ ցանկ մը ընել
ովագ առոնց. ով որ ծէծի չէր գացած՝ յանցավոր սնդելով անոնց կալ-
վածները պետական սումտուկին առավել²², նա գրում է, որ Սելիմ III-ը
Սուամբուլում վառողի տարեկան արտադրությունը հասցրեց 40 հազար
քմինդալի, և ասոր համար խափանվեցան մէկալ հին պարութխաները
որ Սելանիք ու Կէլիսոլու կայինք²³։

«Դարապատում»-ի վեցերորդ հատորը Նվիրված է 1795—1800 թթ.-

²⁰ Նույն տեղում, էջ 415։

²¹ Նույն տեղում, էջ 418։

²² Նույն տեղում, էջ 418—419։

²³ Նույն տեղում, էջ 421։

իրադարձություններին Ցուց ծն տրված Ֆրանսիայի, Բուսառանի, Անգլիայի, Ավստրիայի և Պրուսիայի հակամարտությունները՝ Օսմանցան կայսրությունում իրենց զիրքն ուժեղացնելու համար Նրանցից ամեն մեկը ձգուում էր Բարձր Պուտն ընդգրկել ազգեցության իր ուսուում:

Դ. Խնճիճյանը նշում է, որ նույն Սելիմի սուլթանության օրեր չերկու ապստամբներեն նեղություն ունեցավ տաճիկը. մէյմը՝ Խարիստար փաշային սրան վրայ թանի Հաղար զօրք խրկնց՝ յաղթվեցան Հալածվեցան. մէյմնալ բազզան օղլուէն որ Վիսինի փաշան էր. ատիկա Հռոմեա զարձած ճարպիկ, հանրապետ Մարդ մը ըլլալով իրեն քովը ժողվեր էր. բազմություն լինի զինվորներու և Հազարապետներու, որ լինաստանը բաժանվելին ետև Հոն փախեր եկեր էին. իրեն քովն էին նաև ֆրանսաց Հազարապետներ, միտքը դրավ ապստամբիւ, ֆրանսըզներում պէս ազատություն մըտցնելու...²³.

Նապոլեոն Բոնապարտի նվաճողական պլանների մեջ էր մտնում նաև Օսմանյան կայսրությունը, որին նա հրահրում էր Ավստրիայի և Ռուսաստանի դեմ. Այդ կապահցությամբ Խնճիճյանը գրում է, որ 1797 թ. Պավլան օղլու ապստամբությունը օֆրանովը անտեկ Հասկըցուց տաճիկն, որ՝ Բավան օղլուն նեմէցին ու Մոսկովին մարդն էր, անոնցմէ ըստակ կառելէր ապստամբելու համար. տաճիկը շէր գիտէր որին լսէ, որին Հավատայք²⁴, Այնուշենք նա շարադրում է նշված ապստամբությունների ընթացքը և պարտությունը:

Մանրամասն նկարագրվում է Նապոլեոնի եղիպատական արշավանքը, Նգիպառոսի գրավումը Ֆրանսիացիների կողմից: Հեղինակը վառ գույններով է պատկերում Անգլիայի և Ֆրանսիայի նավատորմերի բախումը Միջերկրական ծովում՝ Ալեքսանդրիա բաղարի ծովածոցում. ուշա ահա օգսուոսի 2 անանկ մեծ կործ մը հղավ... Ինկիլիոյին նավերը 14 էին, իսկ Ֆրանսիացինը 13, բայց նեյսոնը անանկ բերավ որ Ֆրանսիին 7 նավը միայն կրնային ծեծկըզիլ. Ֆրանսովին խապուտանային նազը բռնկեցավ, անոր հետ ուրիշ նավ մըն ալ բռնկեցավ. անոնց 9 նավերին առավ ինկիլիզը, 2 փախան. այնշափ գերի ընկան որ՝ նեկտոնը անոնց համար բավական ապրուստ լունենալով՝ ցամաքը հանեց ազատ թողուց խոսուում առնելով իրենց բերնեն որ մէրմն ալ ծեծի մեջ լիմեան. ինկիլզը ամբողջ ճերմակ ծովին վրա տեր եղավ²⁵:

²³ Դ. Խնճիճյան, Դարապատում (1795—1800), Վճռաբիկ, էջ 295—297.

²⁴ Խոյն տեղում, էջ 295.

²⁵ Խոյն տեղում, էջ 407—408.

բոկան կառավարությունը, շարունակում է Խնճիճյանը, սգտվելով
Նապոլեոնի պարտությունից, ուստանց ինկիլոպին ու Մոսկովին յորդո-
րելու ենք բացազ ֆրանսին գեմ։ Ստանդու քանի ֆրանսաց որ կային
բռնեց բանտը դրավը²⁶։

«Տաճիկը»—այնուհետև գրում է Խնճիճյանը, — 1799 Շամու փաշա-
յին հրամմեց պաշտպանել երկիրները, և թե որ կրիս Մըսըր նորէն առ-
նել։ Գօնաբառդէն 13 հազար մարդով ասոր զիմք գնաց, գաղան ու ետ-
ֆան առաջ աքեանալ պաշտրեց, որում պաշտրումը Յ ամիս քշեց... տա-
ճիկը խիստ քաշությամբ գեմ կեցավ ֆրանսազնեցուն, որունք 11 անգամ
քաղաքին վրայ վաղեցինք²⁷ և ի վերջո ստիպված եղան ծտ նահանջել։

Բերդի շուրջը և բերդում տեղի ունեցած մարտերի կապակցու-
թյամբ, ըստ Հեղինակի, Նապոլեոնը ասել է Հետևյալը. «Թաց տեղ մը
ծեծկվելու ատենուց տանկին հետ անոնց 100 հազարին դէմ մեր 20 հա-
զար զորքը հերիք է. բայց բերդին մեջ կեցած ատենը՝ տանկին 20 հա-
զարին դէմ մեր 100 հազար զորքը հերիք չէ»²⁸։

«Դարապատում»-ի ստվարածավալ հատուրներից արված մելրե-
րումները վկայում են Խնճիճյանի լակոնիկ ոճի, խոսքի պատկերավո-
րության, նկարագրաթյունների լիարժեքության մասին։ Բարդ իրա-
դարձություններով լի պատմաշրջանը նա այնքան պարզորոշ ու կնե-
դուի է դարձնում, որ ընթերցողը լրիվ պատկերացում է ստանում։

Օրինկտիվորին շարադրելով օսմանյան սուլթանների ներքին և ար-
տաքին քաղաքականության հարցերը, հեղինակը բավականին էջեր է
նվիրել նաև սոցիալ-քաղաքական և տնտեսական խնդիրների արծարծ-
մանն ու մեկնարանությանը։

Դ. Խնճիճյանը բանիմացորեն լուսաբանել է Օսմանյան կայսրու-
թյան XVIII դ. երկրորդ կեսի սոցիալ-տնտեսական ու պետական ամ-
րող սխատեմի հզնաժամը և կայսրությունն այդ վիճակից դուրս բերելու
սուլթանական կառավարության անհաջող գործերը։

Նա հանգամանորեն խոսել է պետությունում գոյություն ունեցող
սոցիալական անհավասարությունների ու ներհակությունների մասին,
քննադատել տիրող կարգերը, շարադրել է կծնորունական սուլթանական
իշխանության գեմ առանձին փաշանների ապատամբությունների պատ-
մությունը և այլն։ Ութհատորյա «Դարապատում»-ի մեջ ոչ պակաս տեղ

²⁶ Խուճ տեղում, էջ 409։

²⁷ Խուճ տեղում, էջ 410։

²⁸ Խուճ տեղում, էջ 411։

է հատկացված նույն թուրքական լծի տակ ընկած ժողովուրդների պայմարին:

Դ. Ինչենյանի այս երկին հաշորդեց Վենետիկի Մխիթարյան միաբանության ականավոր գործիչ՝ Գարդիլ Արվազովսկու հեղինակած «Պատմութիւն օսմաննեան պետութեան» երկնատոր աշխատությունը⁷, Հեղինակն օգտագործել է, ինչպես ինքն է դրում, քարահնուու գերմանացի Համմերի «Վաստակեալ» ի յօրինուած բազմահատոր պատմութեանն օսմաննանց և տմանավանդ՝ ի ժամանակակից մարդկանէն, որպիսից են Թովմա վարդապետ Մեծոփեայ, Առաքել վարդապետ Գավրիժեցի, Զաքարիա Վաղարշապատցի, Երեմիա Զէլէպի, Մաղաքիա դպիր Շեվանիքնեան, Գէորգ Պապիր Պալատեցի, Գէորգ Օղովլուգեան Տրապիցնցի, և այլոց ու սակայ յիշատակարանաց և ի թղթոց ականատես և ականջալուց պատմագրացք⁸:

Գ. Արվազովսկին օգտագործել է նույն օսմաննան պատմագիրների ինչպես ձեռագիր, այնպես էլ տպադիր աշխատությունները:

Առաջին հատորն ընդգրկում է Օսմանյան կայրության սկզբնավորումից՝ Օսմանից մինչև XVII դ. 50-ական թվականները՝ սուլթան Իրահիմ I-ի իշխանության ժամանակաշրջանն (1615—1648) ընկած պատմությունը:

Երկրորդ հատորը սկսվում է Մէհմեմէդ IV-ի (1642—1653) սուլթանությանից և շարունակվում մինչև Մահմուդ II-ի իշխանության վերը (1808—1839), Երկու հատորն էլ շարադրված են գրաբարով։ Գ. Արվազովսկին, լինելով կղեքաֆեոդալական հոսանքի ներկայացուցիչ և միապետական կարգերի պաշտպան, պատմական պրոցեսը ներկայացնում է որպես միապետների՝ սուլթանների պատմություն Ալղուճանդերը Նրա աշխատությունում ընդգրկված են կայսրության ներքին կյանքը և արտաքին հարաբերությունների հիմնական, հանգուցային հարցերը։ Միանգամայն ներա է ընութագրել Գ. Արվազովսկու այս ուսումնասիրությունը Ա. Կարինյանը, ընդգծելով, որ նա ոգեպրերը նկարագրելու ժամանակ բացահայտում է բավական օրինակահիմնացուցում։ Տարբեր պատմաշրջանների նկարագրությանը նվիրված էրերում նա աշխատում է Հիշատակել իրական փաստեր, բնորոշ մանրամասներ, անգամ սոցիալական հնօրյա բնակումները։ Կան նշանակալից պատկերագոր էջերը Ապատամբ ժողովուրդը, բողոքող ու տաճիկ կանայք, գերմիշական որ-

7. Արվազովսկի, Պատմութիւն օսմաննան պատութեան, Հ. Ա., թ. ՎԵԼԱՄԻ, 1841.

8. Խոյք տեղում, հատ. Ա. (ՅԱՊՈՎԱՐԱՆԵ)։

գեներ, աղմկող և իշխաներ, պալատական գործիչներ, ազգային հատվածներ, օտար պետություններ—այդ ամենը դժագրված է Այզազովսկու «Պատության» մեջ այնքան զիպուկ գույներով, որ բռնակալ սուլթանների շրջապատի իրական ֆոնի պատկերը գառնում է բավական պարզորշչաց:

Հեղինակը թուրքերի և այխանական պատմության մասին նշում է, որ նրանք տեղափոխվել են Թուրքեատանից, Միջին Ասիայից և Բյուզանդական կայսրության տարածքում ստեղծել են առաջին թուրքական իշխանությունները, որոնք կոչվել են իրանց ցեղապետների անուններով՝ ուղանքանը, սելմուզեանը և օսմանները: Այվազովսկին նկարագրում է այդ իշխանությունների տարածքային նվաճումները: «Իսկ սելմուզեանքանը, —գրում է նա, —զենի առանելուրդի գարում Հղորացեալը տիրեցին՝ ի Կասպից ծովէ մինչև՝ ի Միջերկրականն, գրավեալ զՊարս և զԴամասկոս, զԲերիա և զՓացրն Ասիա...»⁴¹:

Գ. Այվազովսկին համառոտակի նկարագրում է Զինդիզիանի արշավանքը ընդուուղ մինչև Երզնկա և նրա վայրագությունները⁴²: Մանրամասնորեն ցույց է տալիս օսմանյան տոհմի տերությունների աստիճանաբար ընդուրձակումը սելյուկյան կայսրության տրուումից հետո. Ալայէտաին Բ մեռավ, և ուրութիւն Սելյուկյանց՝ ի տասն մասունք բաժանեցաւ, որոց ամեննեցուն զավառապետք որպէս մի մի թագաւորք տիրեցին ինքնազլուխ...: Յայիժամ սկիզբն եղև և ինքնիշխան տիրապետութեանն Օսմանաւ ի շրջակայս անդ Ոլիմպեայ. Հաստատեաց զաթոռ թագավորութեան իւրոյ ՚ի քաղաքն Ենիշեհիրը»⁴³:

Այսուհետեւ Այվազովսկին մեկ առ մեկ թվարկում է կայսրության նորանոր նվաճումները Թալկաններում, Փոքր Ասիայում և արարական երկրներում:

Հեղինակն անդրագառնում է նաև օսմանյան սուլթանների ներքին քաղաքականությանը, խոսում զիամեթների և թիմարիսների, նրանց ստացած ոռնիկի, նվաճված քրիստոնյա ժողովուրդներից վերցվող տուրքերի մասին⁴⁴ և այլն:

Գ. Այվազովսկու ուշագրությունից շի վորապել նաև խաչակիրների և Օսմանյան կայսրության հարաբերությունների հարցը:

41 Ա. Կարինյան, Եղվ. աշխ., Համ. 2, էջ 43.

42 Գ. Այվազովսկի, Եղվ. աշխ., Համ. Ա, էջ 4.

43 Նույն տեղում, էջ 5.

44 Նույն տեղում, էջ 12—16.

45 Նույն տեղում, էջ 29—30.

Նա վառ գույներով է Ակարապրել Լենկ-Թհմուրի արշավանքները. բժանդի ամեր տիեզերական է լենկ-թիմուր բոնացեալ հզոր զօրութեամբ ընդ արմելու մինչև յաշխարհն Զնաց, յարնմուսու մինչև 'ի ծովափնեայս Միջերկրականին, ընդ հրասիս մինչև 'ի միջնաշխարհն Ռուսիոյ, և ընդ հարաւ մինչև 'ի սահմանս նգիպուսի, անհամար զօրօք և զարհուրելի պատերազմոք տիբրապետեաց բան և եօթն աշխարհաց և ապա դարձ արարեալ յաթոռ իւր 'ի Սմբակ մեծաւ յաղթանակաւ, խաղաց վերստաին 'ի Գուրս և 'ի Հայո, և 'ի Վրաստան։ Լենկ-Թհմուրի գողանությունների առիթով ընդդում է, որ Սերաստիս քաղաքը գրոհելու ժամանակ նա և Սերաստիս զպարիսան քանդեալ կորժանեաց, զբակիլս 'ի սուր սուսերի կոտորեաց, և զբաշամարտիկոն Հայոց կանդանույն թաղեաց անհնարին տանջանօք խժդութեան։ Հեղինակը մասնավորապես նկարագրում է 1402 թ. Անկարայի ճակատամարտը։

Ազարտելով Անկարայի ճակատամարտի և թուրքական բանակի զըմավին չախշախման նկարագրությունը, ոուլթան Թայազիդի և նրա երկու տղաների գերի ընկնելը, Ալվազովսկին զրում է. «Յամանեանք փախուցեալ ճողովրեցան. և Թիմուր յանդիմանեալ զՊաէզզիմ՝ խստիվ պատուիրաց իւրոցն զգուշագոյնս պահունել նմա, և զբայդ շղթայակապ պահնել 'ի սենեկի միում, որոյ գուռն էր վանդակ երկաթից⁴⁵, Ծակատամարտից հետո Թիմուրը ռկազուպետեաց և հրդեհեաց զքաղաքն ողբոյն, զմզկիթս կարգեաց յախոռս երիվարաց և զկանայս և զդասերս թագավորին հանդերձ ամենայն գանձին և ոսկէզէն և արծաթէզէն սպասուըն բարձեալ յուղուս՝ առաքեաց առ Թիմուր 'ի Կուտինա թմբկօք և պարուք, և ինքն ասպատակ սփոնեաց ընդ ամենայն երկիրն օսմանեանց մինչև 'ի ծովնեզերայս աշխարհին»։

Լենկ-Թհմուրին բնութագրելով որպես անձնավորություն, Այզազովսկին իր միաքն ավարտում է հետեւալ կերպ. «...թողեալ յիշատակ շարութեան իւրոյ զամայացեալ աշխարհս, զքաղաքս խոպանացեալս, և զիարիկառակեոյս մարգիկան՝ կոտորելոց»⁴⁶.

Թեմուրի հասցրած ժանոյ հարվածները ամբողջ կես դար հետաձգեցին Կոստանդնուպոլսի նվաճումը թուրքերի կողմից. Այզազովսկին բա-

⁴⁵ Նույն տեղում, էջ 56—57.

⁴⁷ Նույն տեղում, էջ 57.

⁴⁸ Նույն տեղում, էջ 56—57.

⁴⁹ Նույն տեղում, էջ 64—65.

զականին մեծ անդ է հատկացրել թուրքական հորդաների կողմից Բյուզանդիայի մայրաքաղաքի գրավման նկարագրմանը³⁰:

Կոստանդնուպոլիսի համար մղված համառ մարտերի մանրամասն շարադրանքից երևում է Այվազովսկու համակրանքը դեպի քրիստոնյա հոյելները և նրա խոր ատելությունը թուրք վայրագ դավթիշների նկատմամբ: Պատմելով թուրքերի դեմ Կոստանդին Պալէոլոգ կայսրի զիկավարած անձնվեր պայքարի մասին, Այվազովսկին գրում է, «Որոյ տեսնալ զանազանպեսին աղեաս քաղաքին իրոյ, չլաւ է ինձ ասէր մեռնել, քան թէ իցեմ այլ ևս կենդանիք: Այսուհետև նկարագրում է կովի գաշտուա՛ կայսրի զո՞ւկելը և եղրա՞նգուամ: Այսոգն զրաւեցաւ ՚ի կենց Կոստանդին Պալէոլոգ վերջինն ՚ի կայսրի Յունացը»³¹:

Դ. Այվազովսկին կսկիծով է նկարագրում քաղաքի գրավումը թուրք զավթիշների կողմից, որոնք այն վերածեցին սպանդանոցի: Մանրամասնությամբ շարագրում է թուրքական զորքերի վայրագությունները: Որպես օրինակ բերում է Այա Սոֆիայում պատսպարված հաղարավոր կանաց և երեխաների նկատմամբ կատարած նրանց գաղանությունները³²:

Ուշագրավ են նաև աշխատության այն էջերը, որոնք նվիրված են Հայերի և վրացիների համատեղ պայքարին թուրք զավթիշների դեմ: Այվազովսկին հատկապես ակնածանքով է խոսում Սյունիքում Դավիթ-Բենեկի Հերոսական պայքարի մասին: «Ընդդեմ սօրին զորաց մարտ եղեալ կռուեցան քաղըն Հային հեղան Սիւնի, և նիզակակիցք նորին Միհիթար զօրավար և տէր Աւետիք, զորոց տեսցի ՚ի պատմութիւնս մերոյ աղփազ»³³:

Գ. Այվազովսկու զրքի երկրորդ հատորի վերջում տված է բավականին բնդարձակ շօնուանկ անուանց, որն ավելի է բարձրացնում զրքի գիտական արժեքը:

Այսպիսով, «Պատմութիւն Սոմանեան պետութեան» երկու հատորները պատկերավոր և հարուստ լիզվավ լուսարանում են Օսմանյան կայսրության ինչպես ներքին, այնպիս էլ արտաքին քաղաքականության հարցերը: Հեղինակը հանդիս է գալիս ոչ թե պատմական փաստերը

30 Նույն տեղում, էջ 137—144:

31 Նույն տեղում, էջ 145—146:

32 Նույն տեղում, էջ 147—148:

33 Նույն տեղում, էջ 172:

սոսկ նկարագրողի դերում, այլ դրանց համադրման և վերլուծման միշտը անում է իր եղբահանգումները:

Դ. Այվազովսկու գրվին է պատկանում նաև ուշաբնտիր պատմութիւնք վարուց Սոմանեան թագաւորաց և վէպիրաց աշխարհարարով հրատարակված դիրքը, որը գրվել և լույս է տեսել Ֆրանսիայում Թուրքիայի գեսագան Սուլեյման փաշայի պատվերով ու միջոցներով։ Պարզ է, որ պատվիրված այս աշխատության հեղինակը, լինելով միապետական կարգերի կողմնակից, պետք է ինչ-որ շափով իդեալականացներ սովորական կարգերը, ցույց տար հայերի ռհավատարմությունը թուրք տիրապետողներին։ Առաջարանում այս մասին գրված է. «...Մեր ազգին աս մեծազօր տերութեանս (խոսքը սոմանյան տերության մասին է—ն. Ա.) ավելի ալ աս տարիներս սիրելի ըլլալուն պատճառանկ երևնայ մեզի՝ որ յայտնապէս կը տեսնէ տէրութիւնը թէ իրեն աս հպատակներն ալ կարգէ դուրս շանք մը սկսել են ցուցընել որ ումանց և արուեստից և քաղաքական ու մարդավարական դիտութեանց ետքէ ըլլալով, իրենց ալ իրենց կողմանէ գործակից ըլլան երկրին ծագկելուն ու երշանկությանը, և ձեռքներին եկած ժառայութեանցը մէջ հավատարիմ և իմաստուն գանուելով՝ թէ ազգին և թէ տէրութեան հաստատութիւն ըլլան»։

Աշխատությունը ժամանակին դասագիրք է եղել հայկական կրթական հաստատություններում։

Քանի որ գիրքը, ինչպես ասվեց, գրված էր հատուկ պատվերով, և որով հայ աշակերտը պետք է սավորեր Սոմանյան կայսրության պատմությունը, հեղինակը, ի տարրերություն «Պատմութիւն Սոմանեան պետութեանց երկհատորյանի», մեծարում է թուրքական սովորական պատմաններին ու պետական գործիններին՝ նրանցից շատերին ներկայացնելով որպես թուրքերի լծի տակ ընկած ժողովուրդների ըրարերակներից և ռհավատարներից։

Այսուհանդերձ Այվազովսկին ցույց է տալիս նաև սովորական գաղանություններն արշավանքների և քաղաքների գրավման ընթացքում։

Աշխատության մեջ բացահայտված են Սոմանյան կայսրության ներքին խոռվությունների և ապատամրությունների պատճառները։ Օրինակ, մանրամասն նկարագրելով սովորակ Յ-րդի օրոք կայսրության հզորությունը, նրա ազդեցության տարածումը և արքունիքի նոյն տոնակատարությունները (սրոնք տեսում էին ամիսներ), Այվազովսկին ընդգծում է, որ խոռվության պատճառը և մեծերում շափուզանց շահա-

սիրութիւնն եղավ, որ ժողովուրդը կեղեցելով ու զորքին ոռմիկը կըտքելով՝ իրենց հարստութիւնը կը շատցընէին²⁴:

Հեղափոխական-գեմոնքատ Միքայել Նալբանդյանը բարձր է գետհատել իր գաղափարական հակառակորդ Գարբրիել Այվազովսկու պատմագիտական աշխատությունները, հատկապես նրա հայտնի «Պատմութիւններին» ուսմանյան պիտութեան երկնատորության ընտիրությունների ընտիր հայախոսությունն ու ոպտիկերավոր լեզուն²⁵:

Դ. Այվազովսկին որպես խոշոր պատմաբան մեծ աղղեցություն է ունեցել ժամանակին կղերա-ֆեոդալական պատմագրության վրա: Նրա պատմագիտական կոնցեպցիայի հետարգներից էր նույն Միխիթարյան միտրանության վարդապետ Ամբրոսիոս Գալֆայանը, որի գրչին են պատկանում բազմաթիվ աշխատություններ: Գալֆայանը շանացել է համակերպվել ընորդ պատմական դարաշրջանի հետզհատե ուժեղացող բուրժուազիայի, հաօքարական-գաղափարական միտրաներին: Նա կերտել է ուշրուղիա-պատմաբանի հատուկ շնորհըզվ, հայ կղերական-հայրենասիրական իդեոլոգիայի հետ կապակցված պատմագրական շատ ուրույն կոնցեպցիայուն²⁶: Գալֆայանի աշխատություններից մեջ համար ուշագրավ են ուշամառու պատմութիւններիցն զարու և ուշամառու պատմութիւններից պրամատ զրված ընդհանուր պատմության այս ձեռնարկներում, որոնք պալսահայ դպրոցներին ծառայել են որպես դասագրքեր, Սամանյան կայսրությանը հատկացված է բավականին տեղու:

Միշին դարերին նվիրված դասագրքի վերջին պլանում հեղինակը կայսրության կազմավորման շրջանին անդրադառնայիս նշում է, որ թուրքերը, ինչպես և բազմաթիվ այլ ցեղեր, տարածված էին ուշուկա գետին ու Ալիքայ լըքանց մէջանդի ընդարձակ դաշտերում մէջ... Թուրքաց անունը նախ եօթերորդ գարում մէջ կը լիշուի. վասն զի Հերակլ կայսրը անոնցմէ օգնութիւն խնդրեց Պարսից դէմք²⁷: Գալֆայանը սեւծունների կայսրության մասին գրում է. «... 1059-ին սեւծութեան թուրքերը Պաղպատը տիրեցին, և անկեց գրեթե բոլոր Փոքր Ասիա ալ իրենց իշխանութիւնը տարածեցին: Սրբեթաներորդ գարուն մեջ անոնց ար-

²⁴ Գ. Այվազովսկի, Հատընակի պատմութիւնն վարուց Սամանյան թագավորաց և վիզիրաց, Վենետիկ, 1848, էջ 52:

²⁵ Ա. Հովհաննեսյան, Խայրածնաբեր և նրա յամանակը. Պիշտ Ա., Երևան, 1955, էջ 223:

²⁶ Ա. Կարեկյան, նշվ. աշխ., Հատ. 2, էջ 46:

²⁷ Ա. Գալֆայան, Համառու պատմութիւն մէջին դարս, Վանահիք, 1880, էջ 473.

շանկարծակի դադրեցաւ, վասնզի անդիէն Մողոլները մինչեւ
խանին և անոր որդուցը առաջնորդութեամբը Հեղեղի պէս վաղեցին
Պաղտատը քանդեցին և Սելմուղեանց իշխանութիւնը կործանեցին:

«Յիսուս տարիէն ավելի, — շարունակում է Գալֆայանը, — աս վիճակին
մէջ մնալին ետև, թուրք ազգին մէկ ցնդց այսինքն առանցի կամ Օս-
մանիան ըստածը Ասիոյ արևմտեան կողմերը այնչափ զօրացավ որ թիւ
ատենի մէջ զորաւոր տերութիւն մը ձնացավ»²².

Նկարագրելով Կոստանդնուպոլիսի համար մզլած 57 օրվա արյու-
նահեղ մարտերը, ուր 300 հազար թուրք հրոսակների զրոյին դիմա-
գրավում էին ընդամենը հինգ հազար հույներ, չենովացիներ և վենե-
տիկցիներ, Գալֆայանը համակրանքով է խոսում մայրաբաղարի քա-
րարի պաշտպանների մասին:

Ա. Գալֆայանը իր «Համառոտ պատմութիւն նոր ազգաց դասա-
գրքում նոր պատմության սկիզբը համարում է Կոստանդնուպոլիսի գրա-
վումը. Շնոր պատմութիւնը կը սկսի Կոստանդնուպոլիսոյ տանէլին, 1453-ին, ու կ'երթայ ինչուան գաղինացաց ազգային ընդհանուր ժողովը
կամ գաղինացաց խոռվութիւնը որ եղավ 1789-ին, և է բովանդակութիւն
իրեք հարիւր երեսունվեց տարուան կամ իրեք ու կես գարու պատմու-
թիւնը»²³.

Արարույստիզմի պաշտպան Գալֆայանը չէր պաշտպանում տիրող
կարգերի դեմ բռնկված ապատամբությունները և հեղափոխական հեղա-
շրջումները: Ռւսաի պատահական չէ, որ նոր գարաշրջանի սկիզբը
հռչակող 1789 թ. Ֆրանսիական բռլումական հեղափոխությունը նա
անվանում է Շիռվություն: Այդպես է նա որակալուում նաև սովորա-
նական բռնապետության դեմ հռւյների, սերբերի, ալբանացիների
ապատամբությունները: Նկարագրելով այդ ժողովրդների պայքարը թուրք
բռնակալների դեմ, Գալֆայանը, այնուամենալիք, զգուշությամբ իր
համակրանքն է արտահայտում նրանց նկատմամբ: Նրանց պայքարի
մասին խոսելին հանախն է օգտագործում Եյարձակվեցան քաշութեամբը,
շքարարի, և անձնագործ արտահայտությունները: Թուրք զավթիչների
դեմ հռնգարների պայքարի կապակցությամբ գրում է, որ սովորան Սու-
լյամանը ևնորէն Մանառուտանի վրայ պատերազմի երթալով, հարիւր
յիսուն հազար հոգով Սիկէթ քաղաքը պաշտպանությամբ պաշտպան-
ները երդվեցին՝ ավելի լավ է մեռնել, քան անձնառուց լինել թշնա-

²² Խոյն տեղում, էջ 477:

²³ Ա. Գալֆայան, Համառոտ պատմութիւն նոր ազգաց, Վճեռոյի, 1851, էջ 3.

մունք և...Այսպիս, որ սուլթան Սիւկյման քառեր հազար կորացնոց ան պաշտրման առեն. բայց վերջապես քաղաքը առնուեցավ. Ծրկու Հարիւր քաջ պատերազմողներ միայն մնացեր էին բերդի մեջ որ անձնատուր ըլլալ չուզելով դուրս յարձական քաջությամբ ու ամէնքն ալ ընկան մեռանց⁸².

Երբ խոսքը վերաբերում է թուրք Հռուսակների պարտությանը, Դալֆայանը ովկարությամբ է պատմում այդ մասին. Այսպիս՝ նկարագրելով սուլթան Սելիմ 2-րդի զորքերի և պատրիացիների միջև անդի ունեցած մարտերը, նա ընդգծում է, որ օսմանցիները Կիպրոս կղզին Վենետիկից զավթելու պահին Կապու 5-րդի որդի Յովհաննես Ավլուտրիացին տերեր Հարիւր նաւով օսմանցոց դէմ ելաւ ու սահսրիկ պատերազմ մը ըրաւ Մորայի քով էյնէ պախթիի կամ Հէփանթոյի ժողին մէջ Յաղթուցան օսմանցիք, երեսուն հազար մարդ կորսանցուցին, երկու Հարիւր նաւ, վեց Հարիւր ալ թնդանութի Ան առթով տասնըհինգ հազար քրիստոնեայ գերտիքնէ ազատեցանց⁸³:

Մի այլ էում, որտեղ խոսվում է Վիեննայի համար մղված գաժան մարտերի մասին, ասված է. «Օսմանցիք Պուտա քաղաքն ալ առին 1529-ին, ետք վեննատ քաղաքը պաշտրեցին ու քանի անդամի չափ զրան յարձընկելէն ետքը, պէտք եղաւ որ զօրաց պաշտրը շգտնալով՝ պաշտրումը վերցնենա»:

Հեղինակի ուշադրությունից լի վրիպել նաև 1683 թ. թուրքական դորբերին ավատրիացիների հասցրած ծանր պարտությունը, «...Երբոք աւատրիացիք, — գրում է Դալֆայանը, — Եւգինէոս իշխանին առաջնորդութեամբը Վարատինի քով մեծ յաղթութիւն մը ըրին օսմանցոց դէմ, ժողովուրդը սկսավ թագաւորին դէմ գանգատի, ետքն ալ յայտնապէս ապստամբեցան, Հարիւր յիսուն հազար հոգով պարատը պաշտրեցին ու ստիպեցին թագաւորին որ իրեն ուրիշ յաջորդ մը ընտրէց⁸⁴,

Ա. Դալֆայանը որյէկտիվորեն է նկարագրում թուրքական սուլթանների գազանային արարթներն ու վայրագությունները. Սուլթան Մուրադ I-ի մասին նա գրում է, որ Մուրադը բարսից դէմ պատերազմ քացաւ ու Պաղտատ քաղաքին տիրեց. ինքը անձամբ պարսպին վրայ յարձընկեցաւ, ու ետք իր առջնօր երեսուն հազար պարսիկ գէրիներ պահննէլ առաւաս Բնութեամբ շատ կրակոտ և անգութ էր Մուրատ. մեռ-

⁸² Նույն տեղում, էջ 330.

⁸³ Նույն տեղում, էջ 331.

⁸⁴ Նույն տեղում, էջ 329.

⁸⁵ Նույն տեղում, էջ 328.

նելու ատենը մաս կը սպառնար բժիշկներուն թէ որ զինքը չկարևան առողջացնել, ատանը օրի տարուան թագավորութեան ատենը հարիւր հազարէն աւելի մարդ մեղցընել տուաւ, և իրին յարմար առած մըն ալ ուներ որ կ'ըսէր. «Վրէժին զրութիւնը կ'ալնորի, բայց ոչ երբէք կը ծերանայ»⁴²:

Հումարանելով Հումգարիայի նվաճումը սուլթան Բայազեղի հրոսակների կողմից, Գալֆայանը շնչուում է, որ հարյուրերսում հազարանոց հումգարական զորքից կենդանի մնաց միայն Սիկիզմունդ թագավորը, Բայազեղը տասն հազար գերի աշքին առշեց սպանենել տուաւ»⁴³:

Ա. Գալֆայանը Սամանյան կայսրության նվաճումների գագաթնակետը համարում է սուլթան Մուրադ III-ի տիրապետության ժամանակաշրջանը (1574—1595 թթ.)⁴⁴,

Ա. Գալֆայանի վերահիշյալ աշխատություններում Օսմանյան կայսրության պատմությանը նվիրված բաժիններից երեսում է, որ նա խոր ատելությամբ էր լցված դեպի թուրք նվաճողները և ձայնակցում էր թուրքերի լծի տակ ընկած ծոզավուրդների ազատազրական պայքարին: Պատահական չէր, որ 1883 թ. լուսավորության մինիստրության հատուկ հրամանով արգելվեց հայկական գաղրոցներում դասավանդել Գալֆայանի գրքերուն:

Այսպիսով, XIX դ. առաջին կեսի կղերա-ֆեռալական պատմության երեք խոշոր ներկայացուցիչների՝ Դ. Խնձյանի, Գ. Ալյազակուն և Ա. Գալֆայանի, պատմագիտական հայացքներն ընդհանուր գծերով նույն են:

Երեքն էլ միապետական կարգերի պաշտպան չին և գեմ ամեն տեսակի դասակարգային պայքարի: Նրանց աշխատություններում առկա են խոր ատելություն գեպի թուրք զավթիչներն ու շարդարաները և իրամ համակրանք՝ ոչ թուրք ժողովուրդների աղատագրական պայքարի նկատմամբ:

XIX դ. երկրորդ կեսի հեղինակներից հիշատակության արժանի է Մկրտիչ Տատյան բեյը: Նա 1867 թ. Ֆրանսերեն հրատարակել է «Ժամանակական հայկական հասարակությունը»: Հայերը Օտոմանյան կայսրությունում խորագրով աշխատությունը, որը 1878-ին ուստեղին լույս է տեսել Թիֆլիսում⁴⁵, Մկրտիչ բեյ Տատյանի տոհմը սուլթանական ար-

⁴² Խոյն տեղում, էջ 325.

⁴³ Ա. Գալֆայան, Համառա պատմության ձերին զարու, էջ 481.

⁴⁴ Ա. Գալֆայան, Համառա պատմության նոր ազգաց, էջ 222—223.

⁴⁵ Դանիան Մկրտիչ-Են, Արևու Օտոմանու կայություն, Թիֆլիս, 1878.

քունիքում զբաղեցրել է բարձր պաշտոններ և դրանով էլ բացատրվում է Տառյանի գրքի որոշ էջերում Թուրքիայի վերարերյալ եղած գովեստները:

Առաջարանում նկարագրելով Միջին Ասիայից թուրքերի Փոքր Ասիա կատարած արշավանքը, շնչավում է Իրանի, Հայաստանի, Թրակիայի և Կոստանդնուպոլիսի նվաճումը, Նրանք, նշում է Տառյանը, զավթած երկրների թաղաքացիական և թաղաքական կառուցվածքում զրեթե ոչ մի փոփոխություն չեն մտցնում՝ բնակչությունից գանձելով միայն խարաց զլիահաւաքրեկ:

Տառյանը գրում է, որ Օսմանյան կայսրությունը նվաճագայի համար ներկայացնում էր մեծ վտանգ, քանի որ վերջինս կազմված էր առանձին ֆեոդալական պետություններից, որոնք գտնվում էին իրար հնամշտական պայքարի մեջ: Հետագայում՝ ֆեոդալիզմի թարբայժան և արտօլյուտիզմի թեակոփիման շրջանում, նվաճագան վերածվեց լայնածավալ մի ֆեոքրացիայի, որն ընդունուր թշնամու՝ Օսմանյան կայսրության դեմ ուժեղ բռումցը էր: Նվաճագան ի վիճակի էր նախակին անկանոն, շվարժմած զորքերի փոխարձն օսմանցիների դեմ դրւրս թերել մշտական կանոնավոր բանակներ, որոնք տիրապետում էին ուղղական արվեստին և տակորիկային: Այսինչ Թուրքիան, հավատարիմ մնալով հին սովորություններին, չփոխեց իր զորքի կառուցվածքը և անզոր էր դիմադրել առաջավոր նվաճագան պետություններին:

Այսուհետև, խոսելով սուլթան Մահմետ II-ի ռեֆորմների մասին, Տառյանը նշում է հատկապես հնիշերիներին ֆիզիկապես ոչնչացնելու փաստը և նվաճագան տիպի ուղղական սիստեմ ստեղծելու փորձերը:

Նա տալիս է կայսրության ընդհանուր նկարագիրը, ուշագրավ փաստեր է հազորում արքունիքի ներքին կյանքի, վարք ու բարքի մասին: Աշխատությունն ուշագրավ է նաև այն տեսակետից, որ ցույց է տրված Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդների և հատկապես հայերի խաղացած դերը կայսրության անտեսական ու մշակութային կյանքում: Թուրքական կառավարության կողմից, զրում է հեղինակը, նկատի էր առնված, որ քրիստոնյաներն արգյունաբերության և առևտուրի ասպարեզում ժամանակած գործունեությամբ կնպաստեն կայսրության բարեկեցությանը: Տառյանը նշում է նաև, որ հայերն իրենց ընդունակությունների և նախաձեռնող խելքի շնորհիվ տնտեսության ու ֆինանսների զեկավարման գործում բավականին աշքի ընկան: Այդ բոլորը ստիպեցին օսմաններին՝ զնա՞ւատել հայերին և վստահել նրանց: Հայերն

ունեին մեծ ազգացություն։ Նրանցից շատերը ծառայում էին տարբեր վարչություններում։

Տատյանի աշխատության մյուս էջերը նվիրված են Հայերի առ-
ջիալ-քաղաքական, ժողովրդական հրթության, պարբերական մամուլի,
գրականության, գիտության և արվեստի Հարցերին։

XIX դ. երկրորդ կեսի պատմաբաններից է Ավետիսի Պերպերյանը
(1802—1870), որի «Պատմութիւն Հայոց» աշխատությունը լույս տեսավ
Նրա մահից մեկ տարի հետո՝ 1871 թ. Կ. Պոլսում։

Երառքքելով Հայ ժողովրդի պատմությունը՝ սկսած XVIII դ. վեր-
ջին քառորդից, Հեղինակը միաժամանակ լուսարանում է Օսմանյան
կայսրության այն Հարցերը, որոնք ինչ-որ շափով առնչվում էին Հայ
ժողովրդի պատմության այս կամ այն խնդրի հետ։ Հատուկ զգույն է
նվիրված 1828—1829 թթ. ուսու-թուրքական պատերազմի պատմությա-
նը, որին Հայերը ակտիվորեն մասնակցել են։ Անատոլիայի և Բարձան-
յան ճակատներում ուստական զորքերի հաղթարշավի մասին խոսելիս
Պերպերյանը ընդգծում է, որ եթե Միհեր Անգլիայի և Ֆրանսիայի մի-
ջամտությունը, ուստական զորքերը գրավելու էին մայրաքաղաք՝ Կոս-
տանիդիուպիլիսը, նաև բերում է նաև Աղբիանապուտը հերթված պայմա-
նագրի լրիվ տեքստը։ Պերպերյանը նշում է, որ Արևմտյան Հայաստա-
նից ուստական զորքերի հեռանալուց անմիջապես հետո Կարինի Հոգեոր
առաջնորդ Կարապետ եպիսկոպոսի գլխավորությամբ մեծ քանակու-
թյամբ Հայեր ողջունակ գոլով յանարժան զործոց տաճկաց և ի բնութիւն
փաշայից, յորդորեալ զքաղաքացիսն՝ հառ ընդ իւր, և գնացին ի Ռու-
սաստան, ի Բիթիս, ՑԱխալցխա, և յայլ քաղաքն Ռուսացը²⁵։

Դրսում թերթած են արքիվային փաստաթղթեր ու վավերադրեր
ինչպես թուրքերն, այնպես էլ Հայերներ։ Օսմանյան կայսրության
XIX դ. պատմությամբ զբազվող մասնագետի համար Պերպերյանի աշ-
խատությունը սկզբնաղբյուրի գեր կարող է խաղալ։ Բազմաթիվ սկզբու-
նադրյուններից ելնելով Հեղինակն օրինակիվորեն է շարադրել իր աշ-
խատությունը, ոսն արևմտյայ դպրոցներում օգտագործեն է որպես
գասագիրք։ Դրժին կցված է կարևոր գեղաքերի և Հայտենի գեմքերի ըն-
դուռքակ ժամանակագրություն, որն ազելի է բարերացնում աշխատու-
թյան արժեքը։

²⁵ «Պեղության Ավետիսի Պատմութիւն Հայոց» Սկսեալ ի 1772 ԱՄէ Վրեմք յինչեր
քԱՄԸ 1865 Հանդերձ կորեր տեղեկութեամբ և ժամանակացրաթեամբ ձեռնուի իրաց,
Կառանակնեազուիս, 1871, էջ 212.

Թուրքիայի պատմության հարցերին անդրագարել է նաև վաստակաշատ պատմաբան Ավետանիդ Ներփյանը (1841—1902), Նրա ռԱմենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում երկ-հատոր ժամանակ աշխատությունը դրված է էջմիածնի կաթողիկոսական դիվանի և պետական արքայիների հարուստ գաւատական նյութերի ու վավերադրերի հիման վրա և առաջ նյութ է պարունակում Օսմանյան կայսրության XIX դ. պատմության ուսումնասիրության համար:

Ա. Երիցյանն իր զրքի առաջարանում նշում է, որ խնդիր է զրքի ցույց տալ, թե «Հայոց ազգը, յանուն իւր դավանած սկզբունքների, անարատ սրտով և անկեղծությամբ գրկախառնվում էր դրացի քրիստոնեական հզոր պետության հետ, հայցելով նորա հղբայրասիրությունը և բարեկամական պաշտպանությունը... Ներկայ գարում սկզբին՝ մահմետական լիճ տակ հեծող մեր պապերն էլ յուրեանց յոյսն ու ապավենը գտան Ռուսիոյ դահակաների մեծահամբակ հովանավորության մեջ։ Սա, ինչպես շնչառում է Երիցյանը, հայոց ազգի պատմության մեջ մի նշանավոր դարձագույն է կազմում և արժանի է մանրակրկիտ ուսումնասիրության³⁹,

Մրկհատորյակում Օսմանյան կայսրության XIX դ. պատմության հարցերից լսուարանվում է այն, ինչ կապված էր արևմտահայության հետ։ Հանգամանութեն են շարադրված հետևյալ հարցերը՝ տանկարական հայոց դրությունը, ուստի-թուրքական պատերազմը, պատերազմական պատրաստությունները 1829 թ. համար, 1829 թ. պատերազմը, էրդրումի նվաճումը, Բայլազետի պաշարումը, Բաբերդի և էրդրումի անցքերը, Ազրիանապոլսի դաշնադրությունը, արևմտահայերի գաղթը, պատերազմի աղղեցությունը ժողովրդի բարուականության վրա, Հովհաննես կաթողիկոսի հարաբերություններն արևմտահայերի հետ և այլն։

Հեղինակը ի վեյցություն հայերի ուսուական կողմնորոշման՝ բերում է ուսուական բանակի սպաների կարծիքները։ Այսպես, նկարագրելով էրդրումի նվաճումը 1829 թ. Հովհանի 27-ին ուսուական կորքերի կողմից, վկայակում է մի սպայի այն խոսքերը, թե Պատկնիշի զորքի առաջնազացման ընթացքում թասների հայ գյուղացիները «յուրանց ումեցած-շումեցած» անկեղծ սիրով ընծայ էին բերում ուսուաց դորքինց⁴⁰, իսկ Բայլազետի համար մզգած համառ մարտերը ներկայացնե-

³⁹ Ա. Երիցյան, Ամենայն հայոց հարցերինությունը և Կովկասի Հայք XIX դարում, մաս Ա., (1800—1832), Թիֆլիս, 1894, էջ 70.

⁴⁰ Խոյն անզում, էջ 418:

լիս մեջ է բերում գեներալ Պոպովի Հետնյալ խոսքերը. «Մեծ արիությամբ պատճրազմում էին հայոց Սոքա կովում էին և մեռնում որպես Հերոսներ. սոցա գլխավորները միշտ առաջ էին, գրեթէ բոլորն էլ վիրավորվեցան»⁷¹:

Սամանյան կայսրության պատմության մի շարք հարցեր են լուսաբանվել Ստեփանոս Պալատանյանի «Պատմութիւն Հայոց Սկզբից մինչև մեր օրերը» աշխատության մեջ: Պալատանյանը նյութի շարադրանքը սկսել է հայ ժողովրդի պատմության սկզբից և հասցրել է մինչև XIX դ. 80-ական թվականները: Մեծածավալ ուրա գրքում բավականին էշեր են Խմբրովել մոռնուների արշավանքներին ու նրանց տիրապետության հաստատմանը Հայաստանում, ոսմանցիների և պարսից պատերազմներին՝ Հայաստանը նվաճելու համար, Արևմտյան Հայաստանին և այլ հարցերի:

Աշխատության առաջին բաժնում հեղինակը լուսաբանել է՝ «Օսմանցոց ծագումը, օսմանցոց և պարսից պատերազմների սկիզբը, սուլթան Մէհմետ և Բաղրամ-Հասան (1473), Տահ Խսմայիլի և Սելիմ Ա-ի պատերազմը և օսմանցոց Արևմտյան Հայաստանին արրնը (1514), Թահմասպի և Սուլեյման Ա-ի պատերազմները (1533—1555), Խաչա Սուլտանի փաշայի արշավանքը և բազանդակ Հայաստանի օսմանցոց իշխանութեան տակ մտնելը (1575—1585)»:

Ծրկորորդ բաժնում արծարծված են Հետնյալ հարցերը՝ «Թուրքիայի հայոց վիճակը անցյալ երեք դարերում, Կոստանդնուպոլիսի պատրիարքության հաստատությունը (1461), ամիրաները և նոցա նշանակությունը, պատրիարքարանի գործած գեղումները աթոռակալության համար և այլն»:

Ս. Պալատանյանն այս հարցերը քննել է փաստական նյութի խորիմացությամբ ու վերլուծությամբ: Հեղինակն առելությամբ է լցված դեպի թուրք զավթիչները, սրբնք գրավված երկրները գարձրին կողոպուտի և հարստություն գիշելու ազբյուր՝ նվաճնված ժողովուրդներին պրկելով ամենատարրական իրավունքներից: Ինչպես Օսմանյան կայսրության լին տակ ընկած բոլոր քրիստոնյա ժողովուրդները, այնպես էլ Հայերը, գրում է Հեղինակը, «քաղաքական իրավունքների կողմից շատ էին տարբերվում տիրապետող մահմեդական տարրից, որ անարգական աշխավ էր նայում նոցա վրա՝ իրք անդավառների (գավուր) ու ստրուկների վրա: Հայր մինչև անդամ հագուստով պարտավոր էին դանական-

⁷¹ Նորի տեղում, էլ 422:

զիշ բուն սամանցիներից և ոչ միայն զենք կրելու իրավունք շռւնքին, այլև ստիպված էին որոշյալ գույնի ու ձևի դգեստներ հագնել, և ով որ այս կանոնից շեղվում էր, տուգանքի և նույնիսկ մահվան էր ենթարկվում... ոչ ոք ապահով չէր յուր կյանքի ու սեպհականության համար»⁷²:

Հարկերի գանձման եղանակների մասին կարդում ենք. «Հարկերը սովորական կերպով չէին հաջարում, այլ կապալով էին արգում այն մենավաճառներին, որոնք խոստանում էին ավելի վճարել տերության ուշաշտույյաներին, որով ժողովուրդը շափից ավելի կեղեցվում էր»: Բավական էր, շարումակում է հեղինակը, որ մի հայ քիչ-շատ հարստության տեր լիներ, թուրքերը անմիջապես զանազան մեղադրանքներ էին բարդում նրա վրա, ածառում կամ մահվան էին դատապարտում, և նրա գույքը գրավում էր պետությունը:

Ա. Պալասանյանը գրում է նաև դեվշիրմեհի մասին. ո՛ղ պակաս աղետարեր էր մանկաժողովի սովորությունը, որով ամենայն տարի հարյուրավոր քրիստոնյա մանուկներ խլում էին ծնողաց գրկից և մահմէտականության մեջ մեծանալով՝ նենիշերի ասած զորք էին կազմում⁷³: Պալասանյանի բերած հարուստ փաստական նյութը, որը նա բաղել է մեզ շնուռած սկզբնաղբյուրներից, թուրքիայի պատմության մասնագետների համար ունի նաև սկզբնաղբյուրի նշանակություն:

* * *

XIX դ. նշանավոր հայ գրողներից և հասարակական-քաղաքական գործիչներից ոմանք ևս անզրագրածել են Արևմտյան Հարաստանի ցավոտ խնդիրներին, արևմտահայության անասիլի ժանր, իրավագուրիկ վիճակին և պայքարի կոչ են արել ընդգեմ թուրքական տիրապետության: Նրանք միաժամանակ լուսաբանել են Սամանյան կայսրության ներքին և արտաքին քաղաքականության մի շարք հարցեր: Այս իմաստով, առաջին հերթին պետք է հիշատակել Բաֆֆուն, Վրթանես Փափառյանին, Գրիգոր Արքունում և ուրիշների:

Բաֆֆուն ուշադրության կենտրոնում է եղել օսմանյան բռնապետության լծի տակ հեծող արևմտահայությունը: Նա հրատարակել է Թուրքիային, Արևմտյան Հայաստանին և արևմտահայությանը նվիրված մի

⁷² Ա. Պալասանյան, Պատմութիւն Հայոց: Մեղքից մինչև մեր օրերը, Թիֆլիս, 1895, էջ 704—705.

⁷³ Նույն տեքստը, էջ 705—706:

շարք Հոգվածներ և ուսումնասիրություններ՝ «Թուրքիա», «Տեղեկագիրը» գավառական հարստանարությանց, «Ի՞նչ վերանորուզություններ պետք են տանկական Հայաստանին», «Հայդուկներ», «Ի՞նչ կապ կա մեր և Տանկառանի Հայերի մեջ և այլն»⁷⁴.

«Թուրքիա» հոգվածում Բաֆֆին գրում է. «Փոքր Ասիր սովոր տակավին սարսափելի կոտորածներ է անում, ձմեռվա վրա հանելը մի երկրորդ գժրախտության պատճառ եղավ ժողովրդին, նաևապարհներին հազորգակցությունները դժվարացան և խեղճ սովաստանչները զոկվեցան դրսից շուտափուլիթ պաշարներ ստանալուց»⁷⁵. Պարզաբանելով Թուրքիայում սովոր համախակի կրկնման պատճառները, նույն շեշտում է, որ փոխանակ ժողովրդի հարկերը թիթեացնելու, բարվորելու նրա որնտեսական գրությունը, փոխանակ միջոցներ տրամադրելու երկրագործությանը, կառավարությունն իր պարտքերը մարելու համար ոմինչ այն աստիճան հարստանարում է նրանց, որ ժողովրդը շատ չէ ցանում, որովհետև արդյունքը չէ կարողանում լրացնել այն հարկերը, որ պետք է վճարե կառավարությանը: Այստեղից հասկանալի է, թե ինչու սովոր հաճախ կրկնվում է նույն երկրներում»⁷⁶.

Բաֆֆին իր «Տեղեկագիրք գավառական հարստանարությանց աշխատասիրության մեջ մանրամասնորին վերլուծում է 1878 թ. Կ. Պոլսի հայկական պատրիարքարանի հրատարակած Հիշյալ վերևագրով փաստաթղթերի ժողովածուն ուղիշյալ «Տեղեկագիրքը»,—գրում է Բաֆֆին,—աւլիս է մեզ թեև շատ տիսուր, բայց հետաքրքրական տեղեկությունները՝ «Տեղեկագրքից փաստաթղթերը դուրս են բերված պատրիարքարանի քանի տարվա արձանագրություններից և հասնում են մինչև 1872 թ. ապրիլը: Երկրորդ «Տեղեկագիրքը» վերևագրված է ուրիշ տեղեկագիրք գավառական հարստանարությանց ի խորհրդարանական հանձնախմբի առ ազգային ժողովներ: Ե՞տ, — գրում է Բաֆֆին,— պարունակում է իր մեջ 1872 թվից սկսյալ մինչև 1878 սեպտեմբերի 1-ը, այսինքն՝ հինգ տարվա ընթացքում կատարված հարստանարությունների արձանագրությունները: Ասել է, թե ամբողջ «Տեղեկագիրքը» ներկայացնեում է պատրիարքարանի քանի հինգ տարվա դրույներությունը՝ «Տեղեկագրքում» զետեղված նյութերը վերաբերվում են թուր-

74 Բաֆֆին, Երկերի ժողովածու, Հայ. 3, Օրնան, 1904.

75 Նույն տեղում, էջ 82.

76 Նույն տեղում, էջ 90.

77 Նույն տեղում, էջ 221.

78 Նույն տեղում:

բական կառավարության վարած քաղաքականությանը ոչ միայն արևմբուահայության, այլև մրսու ոչ թուրք ժողովությունների նկատմամբ:

Բաֆֆին, մանրամասն զննելով «Տեղեկագրքի» փաստերը, պարզաբանում է թուրքական կառավարող շրջանների ագրարային քաղաքականությունը և այդ կապակցությամբ՝ նրանց հետապնդած նպատակները քրդական, հատկապես դժբարեցության հարցում: Ճշողերը, — գրում է Բաֆֆին, — հայերի ձեռքում էին գտնվում, պապերից և հայրերից մեացել էին նրանց որպես ժառանգություն: Թրդերին դժվար էր փողով հայից հող գնել, որովհետև նա սովորած էր ամեն ինչ բռնությամբ խելի հայից, ինչ որ իրեն պետք էր: Այսպես էլ արեց: Այստեղից առաջ եկավ հարատահարության մի նոր խնդիր, այն է՝ նողային կամ կալվածական խնդիրը (ընդգծումը հեղինակին է — և. Ա.):

«Պատրիարքարանի առաջին «Տեղեկագրքի» արձանագրությանց մեջ, — շարումակում է Բաֆֆին, — այսինքն՝ մինչև 1872 թվականը հողային կամ կալվածական խնդիրների մասին ամեններն հիշատակություններ չկան: Կեշանակին, մինչև վճրությալ թվականը հայերն իրենց հողերի և այլ կալվածքների տերն էին: Դա այն ժամանակին է վերաբերում, եթե քրդերը բոլորովին լվական կյանք էին վարում և տակավին հողի հետ գործ չունեին: Բայց երբ կառավարության հրամանով նրանք սկսեցին փոքր առ փոքր հաստատ կացություն հիմնել, շատ բնական էր, որ պետք է ծագեր հողային խնդիր: Թրդերը զգանազան գավառներում հայերից հափշտակում են մինչև 263 գյուղուայր իրանց պատկանած հողերով: Դավաների և գյուղերի, նաև հափշտակողների անումները մի ըստ միուշ պրված են «Տեղեկագրքի» մեջ: Հիշյալ գյուղերից շատերի հայ քահակիներին քրդերը բոլորովին արտաքսում են և կալվածները սեփականացնում: Բայց գյուղերի մեկ մասի հայ քահակիներին իրանց տեղին են թողնում, միայն հողերը նրանց ձեռքից խլելով, իրանք դառնում են կալվածատեր: Եվ այսպիս հպատակեցնելով հայերին՝ քրդերը նրանց մշակել են տային հայրենական հողը, տուրք և տասնորդ են առնում և մինչև անգամ քերքի կես մասն իրանք են տանում»¹⁷:

Բաֆֆին փաստերի համակողմանի վերլուծությունից հանգում է այն անխախտ նզրակացության, որ հափշտակությունների մեջ տիտան են՝ ոչ միայն քրդերի հասարակ ժողովուրդը, այլ գյուղագորապես նրանց բեզիւրը, հոգնոր ջեյխերն ու մուժիները և թուրք աղաները, բացի

¹⁷ Խուն տեղամ, էջ 252.

դրանցից և զանազան պաշտոնակալներ, որոնք իրանց բռնակալության Հետ միացրած ունեն և ապահովություն կառավարության կողմից»⁷⁰։

Բացահայտելով կալվածագրի (թափուի) ռում էությունը, Բաֆֆին շեշտում է, ուշադրին պատկանող կալվածների մեծ մասն ինքն կառավարությունը հափշտակելով, տալիս է մահմեդականներին։ Ավ որպեսզի յուր անիրավությանը մի օրինական ձև տա, նա նեարում է թափուի խարեական օրենքը, որով շշատ չնշին գնով արձանագրում է մահմեդականների վրա և նրանց անունով արքունի կալվածագրի է տալիս⁷¹։

Բաֆֆին։ Ինչպես այստեղ, այնպես էլ «Ի՞նչ վերանորոգություններ պետք են ստանկական Հայաստանինց ուսումնասիրության մեջ խռովում է նաև քրդական գերեթելությունների, գյուղացիների մորտ վիճակի, մահմեդականների և ոչ-մահմեդականների իրավունքների, թուրքական գառարանների, թանգիմաթի, տուրքերի, կաթոլիկ և բողոքական միսիոներների և այլ հարցերի մասին»⁷²։

Մեծ զրոյդ ճշտորեն է պարզաբանում արևելյան հարցի էօւթյունը, նշելով, որ դա Տաճկաստանի հարստահարված քրիստոնյաների ազատազրման հարցն է⁷³։

Այսպիսով, Բաֆֆին, լինելով չերմ Հայրենասեր և աղքային-դեմոկրատական Հայացքների տեր, իր գեղարվեստական և պատրմագիտական երկնում, ինչպես նաև Հրապարակախոսական հոդվածներում խռովութեա անդիքում քննադատում է Օսմանյան կայության ֆեոդալական-բռնապետական կարգերը՝ միաժամանակ ակտիվորեն պրոպագանդելով արևմտահայերի աղքային-աղաւագրական պայքարի վեհ գաղափարը։

Բաֆֆու գաղափարակիցներից էր Վրթանես Փափազյանը, որն իր տեսնիշերիները աշխատության մեջ (1889, Թիֆլիս) խռովում է ենիշերիների գաղանությունների և կամայականությունների մասին։ Շեյնչափ արհամայիրքներ, — զրում է Փափազյանը, — ձգեց իր ժամանակին այս գոնոզը, նրա յուրաքանչյուր զինվորը այնպիսի սոսկալի բարբարություններ արագ, ժողովուրդը նրա ձեռքից այնափառ տաժանելի լարիքներ կրեց, որ մինչև այսօր էլ, երբ կամենաւմ են նկարագրել մի արյունարբու, անօրին, բարբարու, կատաղի հրեշ՝ ասում են սինիշերի։

Անիշերիներին 1826 թ. Ստամբուլում ֆիզիկապես ունշացնելուց հե-

⁷⁰ Խայն անգամ, էլ 253 (ընդգետամենքը հեղինակին հե—ե. Ա.)։

⁷¹ Խայն անգամ։

⁷² Խայն անգամ, էլ 305—315։

⁷³ Խայն անգամ, էլ 297։

առ էլ նրանց մնացորդները կայսրության ժայռամասերում շարումակում էին իրենց վայրագությունները։ Այդ մասին է պատմում Վ. Փափազյանը իր «Ենիշերիներ» երկում։ Դրազ Վ. Փափազյանը պատմաբանին հուշում է այն մրտքը, որ թեկուզ ենիշերիները 1826 թվականին սուլթան Մահմետ II-ի կողմից սրի բաշվեցին մայրաքաղաքում՝ նրան չնազանդվելու և սուլթանի գահին միջա երկյուղ հանդիսանալու պատճառով, ապա նույն Մահմետ II-ը և նրան հաշորդողներն այդ մաքրազարդումը շարեցին կայսրության ծայրամասերում՝ ցանկանալով ենիշերիների ահ ու սարսափի տակ պահել քրիստոնյա ժողովուրդներին։

Վ. Փափազյանը 1887—1889 թթ. շրջագայել է Թուրքիայի արևելյան միլայիթներում, հատկապես Արևմտյան Հայաստանի նահանգներում, կատարել է հնատագոտություններ, զրի է տուի տեսածի ու լսածը և այդ բալորը նամակների ձևով տպագրել Թիֆլիսում լույս տեսնող հայկական բիբլիական թրամակայի օրգան «Եշակ» թիրթի 1889—1891 թթ. համարներում։ Այդ նամակները զետեղված են Վ. Փափազյանի հրկերի Ֆ-րդ հատորում՝ և Հարուտ Նիութ են պարունակում հոգատիրության, հոգօգուագործման, տուրքերի, պյուղացիների շահագործման ձևերի մասին։ Վ. Փափազյանը, ուսումնասիրելով Վանի միլայիթի հոգատիրության ձևերը, նշում է «...թիշ չէ պատահում, որ քուրդ ազաներից մեկը կաշտանը բնափու գայիրենին կոչվող հողային վարչության անդամներին և սեփականացներ մի քանի զյուղի հողերն ու հանկարծ ամրող գյուղացիներին, որոնք տերեր էին, մարարաների փոխեր։ Պիտի գիտենալ, —շարունակում է նա, —որ այստեղ համայնքան հողեր գոյացյուն չունեն, ամեն ոք իր ունեցած հողի կատարյալ տերն է մշտապես, կարող է ժախել, կարող է ուրիշից զենք։ Այս անել կարող է թիշ պյուղացիներին, մի քանի ծեռքը ծեռքը՝ կդա վաղեկան գյուղացիներին իրանց հողերից և եթե զութ ունենա՛ գոնե հոգատիրու մարարա կշինեա՛ (ընդունեները հեղինակինն են—Ը. Ս.):

Փափազյանը բացահայտում է մարարայության էությունը. «...Վասպուրականի հողերի 2/4 մասը պատկանում է բաղաքացիներին՝ տաճիկների և քուրդ ազաների, որոնց մշակող մարարաներն են զյուղի

» Վ. Փափազյան, ծրիկեր ծովովածու, Համ. 5, Արևան, 1858, էջ 357—357.

» Նույն տեղում, էջ 422.

բնակիչները այն պայմանով, որ բերքի տասնորդը կառավարության տալուց հետո՝ մնացլաւը կիսվի տիրոջ և մարարայի մեջ։ Այս երկուամից առաջինը տալիս է հողը, իսկ երկրորդը գործիքները, եզեւ աշխատանքը։ Առաջուղացիների այդ գրությունը կոչվում է մարգարյան-բյուն։⁸⁵

Անդրագառնալով հարկերին, հողինակը նշում է. «...Հողային հարկը եղած բերքից 10%-ն էն առնում, իսկ հայերից հաճախ 15%։ Իսկ եթե հաշվինք հարկապահանդների և բեգերի առած նվերները, այն ժամանակ ՅՈՒ հանում է տուրքի քանակությունը և հայ գյուղացի հոգատերին, հայ գյուղի մարարային այդ տուրքը թողնում է ու միայն անոթի, այլևս զրկում է հողից և անեցած տավարներից, որոնցով նա գոնե մարարայություն կարող էր անել»։⁸⁶

Վ. Փափազյանը թուրք և քուրդ բեգերի, առաների կամացանությունների առիթով շեշտում է, որ Վասպուրականում և մյուս հայկական նահանգներում հայ գյուղացին, հաճախ նաև թուրք գյուղացին, թեն սեփական հողեր են ունենում, սակայն մինեւըն է, դրանք հետով-հետեւ խլզում են բեգերի և աղաների դրաժ ժանր հարկերի հետևանքով։ Էլայ գյուղացին, — եղբահանգում է Վ. Փափազյանը, — այնչափ ձանձրացել է իր քրտինքը ձրիապես ուրիշին տալուց, որ, եթե նար ունենար, ես կենար իր սովորական զբաղմունքներից անդամեմ»։⁸⁷

Վ. Փափազյանը մանրամասնորին է տալիս էրպյումի և Վանի վիլայեթների աղքարնակլության տոկոսային հարաբերությունները, հայաբնակ, քրդարնակ և թուրքարնակ գյուղերի քանակը, աղքարնակլության դրազմունքը, կենցաղը, նկարագրում է քաղաքները, արհեստները, ասկառուրը, եկեղեցները, լոկիթները, հոգնորականության վարքն ու բարքը, զպրոցները, քաղաքացիների սովորությունները և այլն։ Շատ հետաքրքիր փաստեր է բերում մահմեդական քրդերի, եղղիների, կղզւաշշների և ասորիների մասին։ Մանրամասնորին ներկայացնում է կաթոլիկ-բողոքական միսիոներների գործունեաթյունը և նրանց հետապնդած նպատակները։ Հեղինակի ուշագրությունից շին վրիութեան Արմենիան Հայաստանի հանքային հարստությունները»։⁸⁸

⁸⁵ Նույն տեղում։

⁸⁶ Նույն տեղում, էջ 423։

⁸⁷ Նույն տեղում, էջ 469։

⁸⁸ Վ. Փափազյանը 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատճեացմի ժամանքի դրեւ է մի աշխատություն, որը հիշատակվում է նրա երիկը Տ.-րդ Հատուրի 809 հղում, ուսիսի Ճականացն զանձլ այդ գիրքը։

Բուրգական բանապետության դեմ էր ուղղված նաև նշանավոր հրապարակախոս, «Մշակութիւն» խմբագիր Գրիգոր Արծրունու բնումնավոր գրիլը, «Մշակում» տպագրված նրա բազմաթիվ հաղվածներում արծարժված հն Թուրքիայի ֆեռագական տնտեսության, ազգային քաղաքականության, սուլթանիզմի լծի տակ կցած ժողովուրդների անահելի իրավադուրկ վիճակի, ներքին և արտաքին քաղաքականության, ինչպես նաև արևելյան, Հայկական, քրդական հարցերի հետ առնչվող դաշնագան խնդիրները Արծրունին շատ է անդրադարձել Հատկապես արեգիլյան հարցին:

«Արևելյան հարցը գրքույկում Արծրունին, մեր կարծիքով, ճիշտ է բացատրում նրա բովանդակությունը՝ Արևելյան հարց տեսլով, նա հասկանում է Թուրքիայի լծի տակ ընկած ժողովուրդների պայքարը՝ իրենց ազատազրման համար և բննադատում է նրանց, ովքեր կարծում են, որ թուրքերին ծվրապայից քշելով արևելյան հարցը կլուծվի: Արծրունին նշում է, որ դրանով արևելյան հարցը լի լուծվի, քանի որ Թուրքիայի տիրապետության տակ կշարունակեն մնալ Հայերը, քրդերը, Հույները և ասորիները: Նա կոչ է անում եվրոպական պետություններին, որ Նրանք թուրքերին զրկեն պետականությունից, քանի որ վերջիններս ինչպես ազգարնականության թվով են փոքրածասնություն կազմում, այնպես էլ մշակույթով են ետ մնում իրենց հպատակ ժողովուրդներից: Արծրունին ընդդում է, որ նման ժողովուրդն ի վիճակի չէ իր լծի տակ եղած ժողովուրդներին հավասար իրավունքներ տալու, նրանց կառավարելու Հետևապես, ծվրապայի խնդիրն է՝ օգնել Թուրքիայի տիրապետության տակ ընկած ժողովուրդներին՝ տապալելու թուրքական լուծը: Ժամանությունը, — գրում է Արծրունին, — զրկում է պետականություն ունենալու իրավունքից այն բոլոր ժողովուրդներին, որոնք ցուց են ավել պետական կյանքով ապրելու իրենց անընդունակությունը»:

Գ. Արծրունին 1879 թ. մարտի 25-ին Թիֆլիսում հանդես եկած «Թուրքաց Հայերի տնտեսական դրությունը» հրապարակային դասախոսությամբ, որը հետագայում լույս տեսավ առանձին գրքույկով: Դասախոսության մեջ նա կանգ է տանում այնպիսի հարցերի վրա, ինչպիսիք են՝ Հայաստանի աշխարհագրական դիրքը, Կիլիկիան, վարչական բաժանումը, հանքային հարստությունները, երկրագործությունը, անապահությունը, ազգաբնակչության կազմը՝ թուրքերը, Հայերը և քրդերը, Հայերի թվի պականելու պատճառները, թուրքացման քաղաքակա-

» Г. Аракуни, Восточный вопрос, Тифлис, 1876, стр. 8.

նությունը, բրդերի և թուրքերի հարաբերությունները, հարկերը և հողաշին հարաբերությունները, հողային սեփականության ձևերը, գերեխությունները, թուրքաց որենքները և կամայականությունները, Բեռլինի կոնգրեսը, եզրոպական քաղաքականության սկզբունքը, օսմանյան լծի տակ ընկած աղջերի վերածնունդն ու ազգայացրությունները և այլն:

Արծարժվորդ հարցերի լուսաբանումը հիմնավորելու համար բերգում են կոնկրետ փաստեր: Ալապես, օրինակ, Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության կազմի համար վկայակոչվում են պատրիարքարանի հետեւալ ավյաները. Վանի, Երզրումի և Դիարբերի վիայեթների ազգաբնակչության ընդհանուր թիվը կազմում է 2,062,300 մարդ. որից Հայերը 1,320,000 են, թուրքերը 539,000 են միայն, քրդերը 120,000 և ուրիշ մասն աղջություններ միասին 82,300 են: Ուրեմն թվով էլ Հայերը գերազանցում են ուրիշ ազգությունների թվով իրանց հայրենիքում: Դեռ այս թվերի մեջ հիշված չեն բազմաթիվ մաշնեղական հայերը²⁰:

* * *

XIX դ. 80-ական թվականներին Հայերի նկատմամբ թուրքական կառավարության վարած քաղաքականությունը արտացըլվեց Հայերի անուեսական անկուր Հայածանքների, Հարստանարությունների և Ֆիզիկական թեազեշշման հակամարդկային ծրագրի մշակման մեջ: Թուրքական կառավարող շրջանները, Հետաձևուա իրենց հայատայաց քաղաքականությանը, Հայկական դպրոցներում արդելեցին Հայ ժողովրդի պատմության ու դրականության ուսուցումը և պարտադրեցին միայն օսմանյան պետության պատմության դասավանդումը:

Հայկական Ազգային կենտրոնական վարչության ուսումնական խորհուրդը պատմաբան Միքայել Աղճյանին հանձնարարեց կառավարության հաստատած ծրագրի Համաձայն Հայերին լեզվով կազմել Սոմանյան կայսրության պատմությունը՝ «Պատմություն օսմանյան պետության», որի Ա. Ճասր լույս տեսավ Կ. Պոլում 1889 թ. (152 էջ), Բ. մասը՝ 1890 թ. (136 էջ):

Դասագրքում Համառոտակի տրված է կայսրության պատմությունը՝ սկսած սելլուկներից մինչև Արդուլ Համբիդ 2-րդի սուլթանության սկիզբը (X դ. մինչև XIX դ. 70-ական թվականները): Հարադոված են միայն սուլթանների պատմությունը և նրանց մզած պատերազմական գործո-

²⁰ Գ. Արծումյան, Թուրքաց Հայերի անտեսական դրությունը, Թիֆլիս, 1894, էջ 25—26.

դությանները։ Բոլորովին անտեսված են սոցիալ-ռեստեհական հարաբերությունների պատմությունը, ժողովրդական մասսաների, հատկապես թուրքական բարբարոս լին տակ տառապող ժողովուրդների ժանր վիճակը, ապստամրությունները և բազմաթիվ այլ հարցեր։ Դասագիրքը դրված է օսմանյան ռազմաֆեռդալական կայսրության գովերգման սկզբ։ Փառաբանվում են սուլթանների նվաճումները և արդարացվում է ժողովուրդների ստրկացումը։ Ամեն կերպ գովերգման են թուրք նվաճումները և օրինականացվում է Նրանց տիրապետությունը՝ այլ երկրների և ժողովուրդների նկատմամբ։ Դասագրքի հեղինակը երկինքն է հանում սուլթաններին, որակենալով Նրանց՝ առաջադեմ, քաջարակիրթ։ Հանձնարկ, ընդհանուր համակրանքով է խռովում պետական գործիչների մասին և այլն։ Բավական է բերենք Աշնյանի խոսքերը արյունուշտ սուլթան Ալբան-Համիդի մասին, և անմիշապես հասկանալի կդառնա այդ դասագիրք կոչվածի ամբողջ իմաստը։ Ահա, «Սուլթան Համիդ Գազի խան երկրորդը, որն անզուղական իմաստությամբ և փառոք կը տեսրինէ սամանյան մեծազօր պետության բազնին, և իր հայրենական գործազության անխտիր կը տարածէ իր ամեն կարգի հպատակաց վրա։ Մազթենց ի տեսանէ, որ երկար կեանք և անստան բարօրութիւն պարզէ մեր այս ամենասիրենի վեհապետին» (էջ 282—283)։

Ահա թե հայ մատաղ սերնդին ինչ ոգով էին դաստիարակում աշշյանների նման ծախված հայ մատգրականները։



1895 թ. Զեյթունի հերոսական ապատամբությանը շատ աշխատություններ են նվիրված, որոնց մեջ տրվում է նաև սուլթանական կառավարության քաջարականությումը ոչ-թուրք ժողովուրդների, մասնավորապես հայերի նկատմամբ։ Ընթերցողն այդտեղ կգտնի բազմաթիվ փաստեր թուրքական կառավարող շրջանների ադրաբային, Հողային և Հարկային քաջարականության, Թուրքիայի դինամած ուժերի, ներքին և արտաքին քաջարականության հարցերի վերաբերյալ։ Այդ իսկ պատճառով այն գործերը, որոնք վերաբերում են արևմտահայության այս կամ այն խնդրին, չեն կարող շդասվել հայ թուրքագիտական գրականության շարքերը։

Ալդապիսին է, որինակ, Աղասու (Կարապետ Թուր-Մարգուանի) սԶեյ-

թուն և իր շրջակաները...» ուսումնասիրությունը²¹, Հեղինակն ակտիվութեն մասնակցել է 1895 թ. Զեյթումի ապստամբության նախապատրաստմանը և եղել է Հերոսական դիմադրության ղեկավարը, ուստի նրա գիրքն ինքնառափ վավերաթղթի և պատմական վկայության բնույթը ունի: Դրամ տրված է ապստամբության ամբողջական և մանրամասն պատմությունը:

Զեյթումի 1882 և 1895 թթ. ապստամբությունների ուսումնասիրութենք է նաև Զեյթումցին (*Մելացական Սեմերնյանը*), որը զբել է «Զեյթումի անցէալին և ներկային երկնատոր աշխատավորությունը»²², որում շարադրված է Զեյթումի ողջ պատմությունը՝ սկսած հին ժամանակներից մինչև 1900 թվականը:

Առաջին հատորում նկարագրվում են Զեյթումի Հերոսական մարտերը, իր կիսանկախ դիրքը պահպանելու համար զեյթումցիների գործադրած ճիգերը, Հանգամանորեն լուսաբանված է Զեյթումի 1882 թ. Հերոսամարտը, որին Հեղինակն անձամբ մանակցել է:

Աշխատավորությունում ցույց է տրված, որ Զեյթումի կորիզները ստանում են թիւ թե շատ ազգային երանգ: «Զեյթումցին, — զբում է Հեղինակը, — իր կղղիացած վիճակին մէջ այնա տնաարեր շհանդիսանար ազգային նակատագրին և Հայաստանի անցուղարձին, ան ականք կը զնէ Հեռավոր արձագանքներում և իրերու անողոք թիրումով կը մտնէ ազգային ընդհանուր շարժման ալիքներու մէջ, միշտ պահելով սակայն հատուկ պատերազմով մասնավոր զրոշմը»:

Հեղինակը, որպես 1895—1896 թթ. ապստամբության ականատես և մատնակից, մանրամասն նկարագրում է 6000 զեյթումցիների 45-օրյա Հերոսական դիմադրությունը հիսում հաղարանոց օսմանյան բանակին: Այդ պատերազմի ընթացքում թուլքերը կորցրին 20 հազար մարդք Հեղինակը մեկ առ մեկ թվարկում է պատերազմի հասցրած վեասները ինչպես թուրքերին, այնպես էլ զեյթումցիներին:

* * *

Հայ Հեղինակներից ոմանք էլ զրազվել են իսլամի պատմության հարցերով: XIX դ. երկրորդ կեսին քրիստոնյա նվազության իր իշխանու-

²¹ Ազակ, Զեյթումը և իր շրջակաները: Նկարագրություն աշխարհապահան, պատմական և պատմազմական ուսութիւնների թագավորության անկամէն մինչև մեր արերը, Պետր, 1965:

²² Անյանզի, Զեյթումի անցեալին և ներկային, Ժառ Ա, Վիճեննա, 1900, Հառ Բ, Փարզ, 1903:

թյանն էր հաստատել կամ ազդեցությունը տարածել մահմեղական շատ երկրներում, այդ թվում նաև իսլամի խալիֆության կանոնը Օսմանյան կայսրությունում: Թելպես եվրոպական, այնպես էլ Հայ հեղինակեները Օսմանյան կայսրության երրեմնի հղորության անկման և հետամնացության պատճառուները բացատրում են իսլամի հատադիմական դրդմաններով:

Հայ հետազոտողներից իսլամի հարցերով զրադմել է Ն. Թոփչյանը, որը 1899 թ. Թիֆլիսում հրատարակել է «Իսլամի պատճական տեսություն» գրքով: Հեղինակը հակիրք լուսաբանում է հետեւյալ հարցերը՝ իսլամի հայրենիքը, Մուհամմեդի կյանքը և գործունեությունը, ի՞նչ է քարոզում Ղուրանը, ճշճաղ կամ սրբազն պատերազմ, իսլամի աղանդավորները, իսլամ և զիստությունը: Ըստ Հեղինակի, նա աշխատել է ո՞նք մի համառոտ ժամոթություն տալ իսլամի մասին, բաց թիվներով մանրամասնությունները, մասնագիտական բացատրությունները: Ե. Թօփչյանի կարծիքով, չեղարական ցեղերին միացնող օդակը դարձավ Մուհամմեդի քարոզած նոր կրոնը՝ իսլամը: Հեղինակն իսլամական երկրների նկարագրության համար ընտրել է Թոփչյան, ուր բազմած էր իսլամի խալիֆը:

Թուրքական սուլթանները, զրում է Թոփչյանը, հասկանալով այն մեծ նշանակությունը, որ ունի իսլամի խալիֆը, ամեն կերպ աշխատեցին ձեռք բերել այդ կողմում և վերջապես հասան իրենց նպատակին: Այժմ ամրող մահմեղական աշխարհը, բացի շիաներից, ույսեւ թուրքաց սուլթանին խալիֆ է համարում: Սուլթանը իր նշանակությունն ու ազդեցությունը ուժեղ պահելու համար արքունիքում խիստ հոկոզությամբ պահպանում է մահմեղականների ամենամեծ սրբությունները՝ այժի բրդից գործած Շանշակի շերիֆը (Խալիքական դրոշակը), որով Մուհամմեդն առաջին անգամ ամրախին առայնորդեց զնոպի Մեքքա, Օմարի հազարական դրոշակը, և երրիսայի շերիֆը, այսինքն՝ Մուհամմեդի վերաբերում: Մուլթանները աշխատել են նաև արտաքին զրավշտիյում առ իրենց թնակավայրին՝ Կ. Պոլսին, աշագին գումարներ ծախսելով նորանոր մզկիթներ շինելու, հեերը շքեղացնելու վրա: Այդտեղ մզկիթների թիվը 8 հարյուրից ավելի է, բայց իր հոյակապությամբ առաջին աեզն է բռնում Այա-Մոֆիայի հռչակավոր մզկիթը, որը կարող է տեղավորել 22000 մարդ Դիայած այդ միջոցներին, սուլթանները լունեին այն ազդեցությունն ու իրավունքները, որոնցով սպազում էին նախկին խալիֆները: Սուլթանը կրոնական ոչ մի վճիռ լի կարող տալ: Նույնիսկ Թուրքիայում նրա իրավունքները սահմանագրակ են: այդտեղ

կրօնական բոլոր գործեցը կառավարում է Եօյիս ուզ Խոլամբ, որ իր ստորագրուած ուղևեմների, միզքթիների (վիճակային վերահսկել), իմամների (մզկիթների կառավարիչ), ղաղիների (վիճակային ղատավոր) և այլ պաշտոնյաների միջոցով հարկավոր ղեղցում կարող է մահմեդական-ներին պրզուէ սուլթանի գեմչ²²:

Խոսկելով պատերազմներուամ Թուրքիայի պարտությունների մասին, Թոփչյանը նշում է, որ «Բնակամի ուժը հետզհատ թուլացել է և այժմ կրօնական պատերազմը այնքան սարսափելի չէ, ինչոքն Սուլեյման Մծծի ժամանակիներուամ, Թուրքիայի անցյալն արգեն հաստատել է Ազետարանի այս խոսցերը, թե Եւորի հանողը սրով կընկնիւ։ Այդ պետությունն օրեցօր ընկնվում, քայլավում է։ Նրա հողերի մեծ մասը՝ Անդրկայի, Ավստրիայի, Ռուսիայի ձեռքն է անցել, մի մասն էլ բռնության լժից ազատվելով կազմել է Ռումինիա, Բուլղարիա, Սերբիա, Չեռնոգորիա և Հունաստան փոքրիկ պետությունները։ Այժմ սուլթանի կեղեցված, ստրկացած հպատակների մեացորդը զրուի է բարձրացրել և կյանքի ու գործի ապահովություն է պահանջում»²³։

Ե. Թոփչյանը խոսում է նաև իսլամի աղանդների, դրանց առաջացման և առաջածման մասին²⁴։

ՀՀ դարասկզբի Օսմանյան կայսրության պատմությամբ զրադվող հայ հեղինակներից պետք է նշել նաև Շատամություն Արևելյան խնդրո և առաջնորդ հայկական հարցին երկնատոր ուսումնասիրության հեղինակ Կ. Թումայանին (1852—1938)։

Նա առաջին պատմաբաններից է, որ հայկական հարցը ղիտել է որպես արենելյան հարցի բազկացուցիլ մասը։ Ուսումնասիրությունն սկսվում է հնագույն շրջանից և հասնում մինչև XIX դ. վերջը։ Շերենելյան խնդիրը՝ գրում է հեղինակը։ — իր ընդարձագույն նշանակությամբ՝ արենելը և արենմուտքի հակառակությունն կը ծագի։ Հետևաբար այդ խնդրո ժագման թուականը կը համապատասխանէ այն թուականին որում արենելը և արենմուտք իրար հանդիպէցան և այս երկու տարրեր քաղաքակրթության իրարու ազգելով հաղթանակել կամ բարոյական և քաղաքական գերիշխանություն ունենալ նպնեցան։ Արևելյան հարցը նեղ իմաստով Թումայանը կապում է նուսաստանի և Թուրքիայի հա-

22 Ե. Թոփչյան, Խոլամբ պատմական տեսություն, Թիֆլիս, 1855, էջ 55.

23 Նույն տեղում, էջ 56։

24 Նույն տեղում, էջ 54—76։

25 Կ. Թումայան, Պատմություն Արևելյան խնդրո և առաջնորդ հայկական հարցի, Հայա. Ա. Լոնքը, 1905, էջ 1։

կամարտության հետ նա ընդգծում է, որ Ռուսաստանը նպատակադրութիւն էր «Պալքանյան թերակղզու կրօնակից և ցեղակիցներին ալ... թրրաց պղծութենէն ազատել...» Այս շրջանը Արևելյան խնդրոյ, արդի առմամբ, ամենէն ազելի սաստկությամբ մղուած ժամանակն է, Հոս կակաի բուն Արևելյան խնդիրը կրնանք ըսելը²⁵:

Կ. Թումայանի աշխատության առաջին հատորում բավականին անգ է հատկացված սելչուկների, մոնղոլների և թուրք-օսմանների նվաճումներին: Հատկապես ընդգծված են նրանց վայրագությունները գրավված երկրներում: Զգալի անգ է տրված նաև օսմանյան շրջանի պատմության հարցերի լուսարանմասու Շարադրելով սուլթանների նվաճումները Փոքր Ասիայում, Բալկաններում, Արարական թերակղզում, Հեղինակը մասնավորապես կանգ է առնում Թուրքիայի և եվրոպական պետությունների ու Ռուսաստանի փոխարարակերությունների վերլուծման վրա: Արժեքավոր են վավերագրերից արգած մեշքերումները:

Մրկրորդ հատորը սկսվում է «Եվրոպական աղյոցությունն բաժնով, Այստեղ լուսարանվում են ֆրանս-թուրքական մերձեցումը, կապիտուլյացիաների նշանակությունը և բնիկներին պատճառած վնասը: Աշխատության մեջ արժարժվում են նաև հետեւյալ հարցերը՝ Անգլիայի երկան դալը Արևելյում, Վիեննայի մաս թուրքերի կրած պարտությունը (1683), Կառլովիցի 1699 թ. իազարության պայմանագիրը, Ռուսաստանի գերիշխանությունը Արևելյում, 1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Գյուլուկ-կայսարչելի 1774 թ. պայմանագիրը, Նրիմի գրավումը, թուրք-ռուսական պատերազմը և Ցասայի 1792 թ. պայմանագիրը, Ֆրանսիայի ազգեցությունը թուրքիայի վրա նազուիոնի ժամանակ, Ռուսաստանի ազգեցության ուժեղացումը, Հունական ապատամրությունը, 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Աղրիանոպուլսի պայմանագիրը, Անգլիայի ազգեցությունը, Նգիպատոսի առաջին և երկրորդ պատերազմներն ու եվրոպական պետությունների քաղաքականությունը և այլն: Շարադրանքը հագեցած է արժեքավոր դիվանագիտական փաստաթղթերով:

«Արևելյան խնդրոյն ներկա շրջանը բաժնում Թումայանը քննում է այսպիսի խնդիրներ՝ Նրիմի պատերազմը և Փարիզի դաշնագիրը, Լիքանանի սինքնավարության շերտնումը, Գերմանիայի ներթափանցումը Թուրքիա, Բունիայի և Հերցոգությունայի 1876 թ. ապատամրությունները, Պուաի գեպքերը և 1876 թ. կռնֆերանսը, առհմանագրության հաշակումը,

Տ նույն տեղում, է 228—229.

1877—1878 թթ. ուսւ-թուրքական պատերազմը, Սան-Մատիֆանոյի պայմանագիրը և նրա 16-րդ հոդվածը, Թեոլինի դաշնագրությունը և նրա հայկական հոգվածները, Կիպրոսի 1878 թ. հունիսի 4-ի դաշինը, Խորապահան պետությունների նոտաները թուրքական կառավարությանը՝ արևելյան վեհայի թներում բարենորոգումներ անցկացնելու մասին և այլն:

Մանրամասն քննության առնելով Սան-Մատիֆանոյի և Հատկապնմ թեոլինի կոնգրեսի նիստերի արձանագրություններն ու սրոշումները, հեղինակը ցույց է տալիս մեծ պետությունների շահագիտական քաղաքականությունը Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ: Նա Հանգամանորեն վերլուծում է Անգլիայի քաղաքականությունը թեոլինի կոնգրեսում և ընդգծում, որ «Գերյին Սահմանոյի ընդուրմակորեն գծած ազատագրությունը կը սահմանափակէ: Մեծ Պուլգարիան կը պղպդիկցնէ, Մակեդոնիան Թուրքիո կ'անձննէ, և Ասիր կողմեն ալ Հայաստանը կը թողությունը կամքին»²⁸:

Կ. Թումայանը իրավացիորեն թեոլինի կոնգրեսի հրամիրման ամրացը պատասխանատվությունը դնում է Անգլիայի վրա: Շնունց Անգլիա, — գրում է նա, — «Թեոլինի ժողովը տեղի չէր ունենար, ժողովին մէջ ալ թէև Պիզմարք կը նախագահէր, բայց Սուլպացրին էր գլխավոր դերակատարը»²⁹:

Հեղինակը հատուկ անդրադառնում է Հայկական Հարցի նկատմամբ: «Սասունի շարդը և քննիլ Հանձնաժողովը ենթագլխում գրում է. «Թուրքիո կառավարության բռնած ընթացքը ապուշութեան, հիմարութեան դրժ չէ, այլ քաղաքականութեան մը արդյունքը: Հայերը տկարցընելու, Հայաստանի մէջ նվազեցնելու այս քաղաքականութեան շատ նպաստավոր սկզբունքավ թյուրտերը ձեռք առնելու, Կազմվեցավ քյուրահամիտիչ Հեծելագունդը և անոնց արտօնութեան շնորհուեցավ հայերը վանել Հայաստանն և անոնց տեղը զրավել: Թէ Հին թիւրքերը թէ երիտասարդ թիւրքերը Ասիր մէջ Թիւրքիո ամբողջությունը պահելու միակ ճարց Հայերը իրենց երկրին մէջ տկարացնելը զատած ենք»³⁰:

Աշխատության մէջ Հանգամանորեն լուսարանված է Անգլիայի քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ: Հեղինակը սուր քննա-

²⁸ Խոյե տեղամաս, Հայ, Բ, Լենզն, 1905, էջ 522.

²⁹ Խոյե տեղամաս, էջ 527.

³⁰ Խոյե տեղամաս, էջ 521—522.

զատության է ենթարկում ինչպես Անգլիայի, այնպես էլ Գերմանիայի, Ֆրանսիայի և Շվեյցարիանի քաղաքականությունը արևելյան և հայկական հարցում է վերջո, սակայն, Թունարանը հանգում է միամիտ, սխալ եղրակացության, որ իր ուշը մնար Անգլիա մինակը որ անկեղծորեն կը փափաքէր հայոց համար բան մը ձեռք բերել, բայց շատ թույլ ու երկշուր վարուելով ամեն ինչ վիճեցուց³²¹: Մինչդեռ հենց իր շարադրանքի ընթացքից և բերված բազմաթիվ փաստերից պարզորոշ երևում է, որ Անգլիան էր հայկական հարցի ամենամեծ թշնամին:

Օրկրորդ հատորի հավելվածում բերված են շատ կարևոր փաստաթղթեր (*էջ 613—678*):

Հենչակյան կուռակցության ակտիվ գաղափարախոսներից Ս. Սապահ-Դուլյանը ըշնչակի թերթի 1900 թ. № 7-ի և 1901-ի 1, 2, 3 համարներում տպագրել է մի հոգվածաշար, որը հետագայում՝ 1908 թ. սԵրիտասարդ Թուրքիայ խորագրով հրատակվեց Փարիզում:

Հեղինակը տույն է սԵրիտասարդ Թուրքիայ-ի ծագման պատճառները, շեշտակով, որ ինչքան էլ իսլամը դարերի ընթացքում շանացել է ամեն տեսակ արգելօնել և թույլ շտալ, որ եվրոպական մորի արտահայտությունները թափանցեն Թուրքիա, այնուամենայնիվ, թէ կրոնական և թէ քաղաքական բոլոր արգելվներն անզոր եղան պատճեշել լուսավորության առաջընթացը, անանցանելի պատվար ստեղծնել քաղաքակրթության ժավալման առջև:

Ս. Սապահ-Դուլյանը, հանգամանորեն խոսելով սԵրիտասարդ Թուրքիայ-ի ըմբռնումների ու ծրագրերի մասին, շեշտում է, որ նրա գաղափարախոսները, սկսած Թեշիդ փաշայից՝ Թանգիմարքի հեղինակից, շանում էին Թուրքիան վերակազմել այնպիսի հիմունքներով, որ նրա մեջ ապրող զանազան այլակրոն ժողովուրդներ ու ցեղեր կազմեին մի զանգված, մի մարմին, մի ժողովուրդ, մի ազգություն՝ օսմանյան պատրյուն, որի մեջ այլմ գոյություն չպիտի ունենային ներքին, ցեղացին թշնամություններ, հակամարտ ձգտումներ: Այդ բանին հասնելու համար երիտասարդ Թուրքերը արդարացուցիլ և շահեկան էին համարում օտար համայնքների ամրողական բռնի կրթափոխությունը կամ ամրողական կրտուածները: Ալրդ բոլորը,— գրում է Սապահ-Դուլյանը, — նրանք մեղմացուցիլ անհրաժեշտություն էին համարում ապագայի, սկզբունքի տեսակետից³²²:

³²¹ Խոյժ ակամ, էջ 556—557:

³²² Ս. Սապահ-Դուլյան, Ֆրիտասարդ Թուրքիա, Փարիզ, 1908, էջ 11 (չնպասամենոց հեղինակին հե—ս. Ա.):

Հեղինակը կանգ է առևում արտասահմանում երիտթուրքերի զոր-
ժումեկության վերլուծության վրա: Նշում է, որ այստեղ ևս երիտթուրքե-
րը մնում էին հազարարիմ իրենց հիմնական սկզբունքներին: Ըստ նրանց,
թուրքիայում միակ թշխաղ արարը պետք է լինի թուրքը, և բոլոր փռփո-
խությունները պիտի կատարվեն հօգուտ տիրապետող օսման տարրին:
Հենց այդ պատճառով էլ նրանք դեմ էին հեղափոխական շարժումներին՝
համարելով այն անօգուտ և վնասակար, քանի որ կարող էր տեղիք տալ
տուացին միջամտության և խնդիրը վճռել հօգուտ քրիստոնյա-
ների:

«Սերունի թուրքերից»,—գրում է Սապահ-Գուլյանը,—ոչ նվազ թա-
փով նրանք («Երիտասարդ թուրքերը»—Ե. Ա.) պայքար մղեցին հայկա-
կան, մակեղզնական, կրիտական, արարական, այբանական շարժում-
ների ու այդ շարժումներին արտահայտություն և ուղղություն տվյալ կու-
սակցությունների դեմ, ասելով, որ այդ թուրքը վատանգում էին կայսրու-
թյան ամրողությանը, միտքյանը, անկախությունը և կարող էին ար-
տաքին միջամտությունն ըրավիրել ու պետությունը, անդամանատելը»¹³²:

Օսմանյան կայսրության փրկության և պահպանման միակ միջոցը
երիտթուրքերը համարում էին ոչ թուրք ժողովուրդների բնի օսմանա-
ցումը՝ թուրքացումը: Սապահ-Գուլյանը, քննադատակելով այդ սխալ ուղին
և համարելով կորժանարար հենց Օսմանյան կայսրության համար,
միակ փրկությունը գտնում է ոչ թուրք ժողովուրդներին ինենուրույնու-
րյուն տալու մեջ. «Ազգերը իրենց գոյությունը կարող են ապահովել,
պահպանել ոչ միայն անդամականությամբ և կամ առանձին անկախու-
թյամբ, այլ նրանք այդ նպատակին կարող են հասնել և ինքնավարա-
կան ձևով...»

Ազգերի ինքնավարական սխանմը այն միասկ միջոցը և ձեռն է,
որով կարելի է թուրքիային նոր կազմ տալ, նոր համարկների վրա
դնել, պահել. նրա ամրողությունը և վանել անդամական ուղին. հա-
կառակ նաևապարհը կտանի դեպի անշատումն, դեպի պետական ընդ-
հանուր քայլայումն,—դա է իրականությունը»¹³³:

Առաջին թուրքական սահմանադրության և երիտթուրքերի բնութա-
գրմանն է նվիրված նաև Տ. Զավենի «Թուրք սահմանադրությունը և
երիտասարդ թուրք կուտակցությունները» գրքումկեր: Այստեղ թուրքերն-
եւց թարգմանարար զետեղված է Արդուշ Համբիդ Ա-ի 1878 թ. կայսե-

¹³² Խոյց տեղում, էջ 18.

¹³³ Խոյց տեղում, էջ 53—54 (ընդունմենք հեղինակին Ա-ի Ե. Ա.):

բական հրովարտակը («Համբիլը Հումայունը») առաջին թուրքական սահմանադրության հոլակման մասին։ Այնուհետև բերված է տեքստը, որը շատ կարևոր է ուսումնասիրողների համար։

«Միթհագեան սահմանադրութեան մասին իր տերկու խոսքում» Զավենը, մեր կարծիքով, նիշտ է տալիս այդ սահմանադրության զնահատականը։ Ընդգծելով, որ տևա ժնունդ չեր ամեննին երկրում գոյություն ունեցող իրական ուժերի հարաբերութեան, այսինքն Միթհագեան սահմանադրությունը չեր դաշիս սահման գծելու տիրող ֆեոդալական, ավատական դասակարգի և նրա շահերի պաշտպան բռնակալության կամայականությունների առաջ։ Զավենը նշելով դրա պատճառը, ընդգծում է, որ «Թուրքական բուրժուազիան ուժ չուներ, երկրի ուժերի իրական հարաբերության մեջ նշանակալից տարր չեր կազմում։ Միթհագյան սահմանադրությունը ոչ թե առաջադիմ բուրժուազիայի համառ ու գիտակից կովի զավակն էր, այլ մի խումբ անձերի մերժնայության պատուղը։ Այս, որովհետև նրա անվետը պահպանման համար կովելու և մերժելու պատրաստ ժողովրդական բանակ չկար, բնական է, որ տապալվեր առաջին քամուց։ Զախ ձեռքով սահմանադրություն բաշխող մեհապետը աշով հափշտակեց իր շնորհը»²⁵։

Այսուհետև Զավենը տալիս է տերիտորասարդ թուրքերի կուտակցության հիմնադիրներից և գաղափարախոսներից ԱՀմեն Ռիգայի կյանքին և գործունեության ակնարկը։ Արժեքավոր է նաև «Միություն և առաջադիմություն» օսմանյան կուտակցության ոչիմենական կանոնադրությունը թուրքերներից թարգմանված փաստաթուղթը։

Թերվում է նաև իշխան Սարահէդդինի կազմած «Ապակենոտրուսացման և անհատական նախաձեռնության» կուտակցության ժրագիրը ուղղութ։ Ազդուլլա Ջէվժեթի կողմից ստեղծված օնսմանյան սահմանադրության միությանը կանոնադրությունը։

Այսպիսով, XIX դարի և XX դարասկզբի հայ թուրքագիտությունը, շնայտ հեղինակների՝ հասարակական-քաղաքական տարբեր հոսանքների պատկանելուն և օրյենտիվիստական մոռեցմանը, նոր լույս է սփռում թուրքիայի XIX դ. պատմության շատ հարցերի լուսաբանման վրա։ Այդ շրջանով զրաղվող թուրքագետների համար հայ հետազոտողների ուսումնասիրությունների մեծ մասը, ինչպես առիթ ունեցանք վերը մի քանի անգամ նշելու, ունի սկզբնաղրյուրի արժեք։

25 Տ. Զավեն, Թուրք սահմանադրությունը և հրիտանարդ թուրք կուտակցությունները, Թիֆլիս, 1908, էջ 29—40.

Հայ հեղինակների ուշադրության կենտրոնում են եղել Սամանյան կայութության պատմության հարցերը և առ երիտթուրքերի բշխանության որոց:

1908 թ. հուլիսին կատարված երիտթուրքական վերնախավային բուրժուական հեղափոխությունը սահմանեց սուլթան Աբդուլ Համիդին վերականգնել այսպես կոչված բարեհաջանց սահմանադրությունը, իսկ մըր վերջինս 1909 թ. մարտին փորձեց պատճել երիտթուրքերին և վերադառնալ միահեծան կառավարման, նույնականացնելով արվեց և հեռացվեց իշխանությունից: Երիտթուրքական սիթթիհատ վեց թերաբերք կուսակցությունը ստացավ իր բազմալի իշխանությունը:

Երիտթուրքական այս կարճատև ու անորդու հեղափոխությունը, ավելի ճիշտ՝ զինվորական հեղաշրջումը, մեծ արձագանք գտավ Եվրոպայում, որտեղ լույս տեսան տազատամիտ սժեռն թուրքերին տփայլում խաղին նվիրված բազմաթիվ ու բազմապիսի գրքեր, հետազոտություններ:

Ի տարրերություն արդուշամիջյան ոզուլումի ժամանակաշրջանից, Թուրքիայում, մեծ մասամբ Կ. Պոլոսկամ, ուր սկզբնական շրջանում, հատկապես 1908—1910 թթ., գոյություն ունեին մամուլի և տպագրության նկատելի ազատություններ, սկսեցին առատորներ լույս տեսնել երիտթուրքական հեղափոխության, ներքին ու արտաքին բազարականության, ընդհանրապես Սամանյան կայսրության պատմության ու ներքին կյանքին նվիրված գրքեր: Թուրքադիտական զգալի գրականություն տպագրվեց այդ տարիներին և առ երիտթուրքական կայսրությունում, հատկապես ժայռամասներից՝ Անդրկովկասում:

Երիտթուրքական հեղափոխությանը առաջիններից մեկը արձագանքեցին Կովկասում գործող Հայ մարքսիստ-լինինյանները, որոնց գնահատականները այսօր չեն ուշադրություն են դրավում իրենց գիտական խորաթափանցությամբ ու բազմակողմանիությամբ: Այդ առաջակետից ընորոշ է Թագդան Կնումյանցի սթուրքիայի իրադարձությունների շուրջը հոգվածը¹, որտեղ նա, վերլուծելով հեղափոխության նախօրյակին

¹ «Бакинские вестни», 1909, № 4, 5, Հոդված՝ սմբուղական հայերն ակրաց ոճ՝ Հ. Խճիկյան, Բ. Կումրանցը ծրիտառարդ թուրքնի հեղափոխության մասին (ՀՍՍՀ ԿԱ Տեղեկագիր, Հասարակական գիտություններ, 1953, № 8, էջ 33—100).

երկրում ստեղծված վիճակը, բացահայտում է երիտթուբքերի հաջողության պատճառները:

«Թուրքիայի հասարակական կյանքում ամենալուրջ հակասությունները մինչև այժմ առաջ են եկել ազգային բախումներից, — գրում է Կնունյանը՝ Հին ուժիմը, բորբոքելով սորհացված ազգերի ատելությունը, թուլացրել էր պետությունը, որի պահպանմամբ հատկապես շահագրգությամբ էին թուրքերը։ Գետության թուլացումը առաջ էր բերել պետությունների միջամտությունը կայսրության ներքին գործերին։ Թուրք ազգի ամենակուլուսական մասը, որ կազմում էին բարձրագույն աստիճանավորությունն ու սպայությունը, որոնք կանգնած էին աղջի միակ կազմակերպված ուժի՝ զօրքի գլուխը, չէին կարող անուարբեր վերաբերվել կայսրության քայլայմանը, նրանց դարձան հեղաշրջման ակտիվ ուժը, նպատակ ունենալով Թուրքիան ասիական բռնակետությունից մերածել եվրոպական քաղաքական ուժիմ ունեցող կռնատիտուցիոն երկրի։ Զուտ քաղաքական ընույթի ունիորմները հեղաշրջման զիսավոր խնդիրն էին։ Ժաղավագական լայն մասսաների և պահանջները վնասն գարեցին իրականացնելու քաղաքական այդ ունիորմները։ Եթե որևէ բան մուայլում է հորիզոնը, ապա դա առանձին ազգությունների քաղաքական լափաղանց մեջ պահանջներն են։

Հասարակական կյանքի շշերտավորված վիճակի շնորհիվ սոցիալական հակասությունների այդ բացակայության մեջ էլ հենց թաքնված է բանակի վրա հենվող երիտասարդ թուրքերի կոմիտեի քաղաքական պահանջների հաջողության գաղտնիքը², — եղբակացնում է Կնունյանը։ Այսուհետև նա վեր է հանում սոցիալական խիստ նեղ ու սահմանափակ հիմք ունեցող երիտթուրքական հեղափոխության չական արատները։ «Թուրքական հեղափոխությունը երկիրը հասցրեց զորքի գերիշխանության, քաղաքական այնպիսի կարգի, երբ ազգը հնիքարկվում է զինվորի հրամանինք»³։

Հետագա իրազարձությունները հավաստեցին Կնունյանցի այս եղանակման ճշմարտացիությունը։

Երիտթուրքական հեղափոխության արձագանք պետք է համարել Յ. Բոգդանի և Երիտասարդ Թուրքիան և հայերը⁴ դիրքը, որտեղ հեղինակը, օգտագործելով հիմնականում հվոսական արևելյագիտների տվյալ-

² Եռյն տեղում, էջ 22.

³ Եռյն տեղում, էջ 109.

⁴ Յ. Բոգդան, Երիտասարդ Թուրքիան և հայերը, Խան Ա, Թիֆլիս, 1909.

ները, թննում է գլխավորապես Արևմտյան Հայաստանում տիրող վիճակը, առարեն ազգությունների փոխհարաբերությունները, սուլթանական կառավարության հարկային քաղաքականությունը՝ գրանց նկատմամբ դրսնորելով իր գնահատողական վերաբերմունքը։ Նա, օրինակ, գրում է. «Թուրքիան յուրաքանչյուր ազգության համար իր առանձին քաղաքականությունն ունի և նենց այդ քաղաքականության համեմատ և փոխվում են թվերն ու փաստերը։ Այն որից, երբ Բենլինի դաշնագրով թուրքահայկան ցալվերը նվազուայի ուշադրության առարկա դարձան եհայկական հարց անունով, Թուրքիան ամենամեծ եռանդով աշխատեց նվազեցնել հայերի թիվը։ Սակայն նույն բանը ձեռնուու շէ ներքին քաղաքականության տեսակետից, որովհետև նրանցից կառավարությունը գանձում է քեղելիք ասկերին (զինվորական ծառայությունից ազատվելու հարկ—Ռ. Ա.): Ուստի թիվը մնացնում է, իսկ երբ որ պետք է նորից նվազեցնում է»¹.

Խնդիր հայտնի է, երիտթուրքերի ազգայնամուլ քաղաքականության առաջին գրանորումը ի հայու եկալ 1909 թ. ապրիլ-մայիսին, Ազգանայի գնապետրի ժամանակ, երբ իթթիւհատական կանոնավոր բանակը ըստ էության մասնակցեց կիլիկիահայության զարհութելի կոտորածին, որին զոհ գնաց շուրջ 30 հազար հայ։ Կիլիկիան տժամերգության անմիջական արձագանքներից էր զեղչերի ականատես Սուլեն Խղիս-կոպոսի ոչ մեծ, ատկայն զերլուտություն ու զնահատականներ պարունակող գիրքը². Այսաեղ հեղինակը քաղմաթիվ հիաստերով ցույց է տալիս, որ Ազգանայի չարդը Արգու-Համբիկի կողմից վաղուց էր նախապատրաստվում, իսկ 1909 թ. հենց սկզբից թուրքական իշխանությունների խրախուսանքի պայմաններում մահմեղական ազգարնակլությանը հրահրվում ու զինվում էր։ Պահանջիւ, թե ներքին գործոց խորհրդութական Ատել պել չարգի պահում սա հեռագիրը կը փութացներ կիլիկիան բոլոր պաշտոնիութեանց, և Մեծագույն ուշադրությամբ հոգ տարվի, որ վեսա շամանի օստար կրոնային հաստատութեանց և հյուպատություններուն, հեռագիր, որ հայերը չարգելու հրաման մըն էր, համիդյան բնագրոշմով մը խմբագրված³, Երիտթուրքերի պատասխանատվության հարցը թողենով ապագա ուսումնասիրողին, հեղինակն այն կար-

¹ Խոյն տեղամ, էջ 215—216.

² Մուշեկ Խղիսկառը, Առանցքի շարքը և պատասխանատվութերը (Խախենաց պատգամեր), Ֆաշրէ, 1909 (Տէ՛ս Հան Ֆրանկին թարգմանությունը Monseigneur Mouschegé, Les Vêpres ciliennes, Le Caire, 1909).

³ Խոյն տեղամ, էջ 4.

ծիրճ է Հայունում, թե Աղանայի շարդի հիմնական շարժառիթը ո՞ւ այլ-
քին տնտեսապես փնացնելն էր, իսկ պատրվակն այն էր, որ նրանք,
իրր, պատրաստվում էին զինված ապատամբության:

Կիլիկիայի արյունուս գեպքերի քննությանն է նվիրված նաև 1909 թ.
Կահրեալ լույս տեսած Ա. Արուանչառի ֆրանսերեն գրքույկը ո՞նչպես
արգարությունը գատապարտվեց Աղանայում վերնագրով։

Նույն թվին Կ. Պոլոսում հրատարակվեց Ս. Գարամանյանի գիրքը¹,
որը թուրքագիտության առումով որոշ հետաքրքրություն է ներկայաց-
նում, թեև այն դրվել է ոչ թե Հեղինակի շրջապայտության ժամանակ ձեռք
բերած նյութերի ու անձնական տօգավորությունների, այլ տարրեր նա-
նապարհորդների հուշագրությունների ու գավառական թղթակցություն-
ների հիման վրա։ Թուրքագրքում են Արևմտյան Հայաստանի և ամրող Արևելյան Անատոլիայի նահանգների առանձնահատկությունները, կան
նաև առանձին քաղաքների ու գյուղերի բնակչության վերաբերյալ թղթա-
կան տվյալներ, ազգագրական բնույթի նյութեր, առանձին շրջանների
աշխարհագրական պայմանների բնութագրություններ, ինչպես նաև տեղե-
կություններ Կիլիկիայի քաղաքների ու գյուղերի մասին։ Դիրքը կարելի
է դասել նկարագրական-ճանաչողական բնույթի գործերի շարքը։

Թուրքագիտական մեկ շարք աշխատություններ լույս տեսան առա-
ջին Համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ 1910—1914 թթ.։
Դրանք գրեթե ամրողություն նվիրված էին Սսմանյան կայսրության ներ-
քին խնդիրներին, Հոգային Հարցին, Կիլիկիայի 1909 թ. գեպքերի քնն-
նությանը և այլն։

Սսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների նկատմամբ սուլ-
թանական և երիտուրքական կառավարության քաղաքականություններ և,
մասնավորապես, Հայերի իրավական ու տնտեսական վիճակը ուսում-
նասիրելու համար արժեքավոր է 1908—1912 թթ. Կ. Պոլսի Հայոց
պատրիարքարանի հրատարակած «Հայերի վիճակը Թուրքիայում» ըստ
վազերագրերից բազմահատոր ժողովածում², որտեղ ընդգրկված Հար-
յուրավոր փաստաթղթերը համոզիլ կերպով վկայում են, որ կենցելված
ժողովուրդների, հատկապես Հայերի վիճակը իթթիշատական ռեժիմի

¹ A. Arslanian, Comment la Justice a été condamnée à Adana, Le Caire, 1909.

² Մինչ Գարմանեան, Դամեր Փոքրի նախապարհորդ Արևելյան մէջ Համառ
ածղեանթյուններ Ասիսկան Թուրքի գրու և պատկար պատճեններ, Կ. Պոլսի, 1909,

³ La situation des Arméniens en Turquie exposée par des documents, 1—X, Constantinople 1908—1912.

պայմաններում ոչ միայն ըրաբելավեց, այլ ընդհակառակը, առաջնակատարական վատթարացավ, մասնավանդ գավառներում, ուր կառարյալ անիշխանությունն ու կամայականությունն էր թափավորում:

Ժողովածուում ըստ վիերայիթների բերված են Արևմտյան Հայաստանում հայ զյուղացիության հոգային բռնագրավումների, հարատահարությունների, թալանի ու սպանությունների բազմաթիվ փաստեր, սրոնք, միաժամանակ, հաստատում են տեղի իշխանությունների հանցագոր մեղսակցությունը:

Ավելին, թուրքական իշխանություններն իրենք էին խրախուսում այդ բռնությունները՝ զենք բաժանելով մահմեդական ազգարնակությանը¹¹, թույլ տարով, որ կառավարական զորքերը շարաթներով և նույնիսկ ամիսներով տեղափոխեն հայ շնոտանիքներում¹² և այլն։ Հատուրների վերջում բերված են քրիստոնյա ազգարնակշատթյան նկատմամբ Վանի, Խարբերդի, Էրզրումի, Թիֆլիսի, Սրվազի, Տրավողովի և Դիարբերի վիլայեթներում կատարված հանցագործությունների վճարերյալ ավյաններ և ազյուակներ, իսկ IX հատորի վերջում տրվում է ամեն կարգի բռնագրավումների ու հափշտակումների ընդհանուր պատկերը¹³,

Թուրքագիտական որոշակի արժեք է ներկայացնում Օսմանյան կայսրության, մասնավորապես արևելյան շրջանների պատմության բաց գիտակ Ա—ԴՕ-ի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) աշխատությունը¹⁴, սրտեղ վերլուծում է հայկական երեք վիլայեթներում իշխող հոգատիրական կարգը, տրվում է ազրարային հարաբերությունների գոտիները, հարկային սիստեմը, մերկացվում սուլթանական ու երիտրուքաբական ազրարային քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում։ Հեղինակը բազմաթիվ փաստերով ցույց է տալիս, որ սահմանադրության հըշշակումից հետո էլ այդ վիլայեթներում (ինչպես և մյուս նահանգներում) գյուղացիության վիճակը շթեթեացավ. միայն թե, զրում է Ա—ԴՕ-ն, այն անկարգությունները, որոնք Համիդի օրոք կատարվում էին բացաւայտ, երիտրուքարդ թուրքերի իշխանության սկզբնական շրջանում տեղի էին ունենում քողարկված, անուղղակի ձևով՝ թաքնված սպանություններ, բռնություններ, անհայտացումներ և այլն¹⁵։ Հեղինակը

11 Նույն տեղում, Համ. VIII, էջ 24.

12 Նույն տեղում, էջ 18.

13 Նույն տեղում, Համ. IX, էջ 132—133.

14 Ա—ԴՕ, Վաճի, Թիֆլիսի, և էրզրումի վիլայեթները, Երևան, 1912։

15 Նույն տեղում, էջ 355.

մերկացնում է բուրդ ֆեոդալների ու բնակերի ձեռքով արևմտահայերի ընդզվաւմները մնշելու, արյան մեջ խեղդելու թուրքական խարդախ բաղաբականությունը:

Բուրդ բնակերն ու ազաները, ըստ հեղինակի, երեք տեսակ էին.

«... Առաջին տեսակի բնակերը նրանք են, որոնք կեղեցում են միայն պենքի ուժով..., և երր կառավարությունը փորձում է լափ գնել նրանց վայրագություններին, նրանք ըմբռատանում են և բացարձակ ավագակության դիմում»:

Երկրորդ տեսակի բնակերը կեղեցում ու կողապտում են չարունակ, բայց զենքի հն դիմում, շարդեր կազմակերպում և գյուղեր ավերում այն ժամանակ, երբ բարձրից թելազորություն կա, երբ կառավարությունն է այդ պահանջում:

Երրորդ տեսակի բնակերը զենքի շենքը լին դիմում, չարդեր լին կազմակերպում և հաճախ պաշտպանում են իրենց ազդեցության սահմաններում գտնվող հայերին արշավող քրդերից, և հայերին կեղեցում ու կողապտում են խաղաղ ճանապարհով, որի համար էլ նրանք հայերի կողմից համարվում են բարերարներ...»¹⁶:

Վանին, էրզրումին և Թիթլիսին է նվիրված նաև Առրպետի ռժիվաղը վերնազրով զբարուկը¹⁷, որտեղ նկարագրվում են հայ հողագործի, նստակլաց քրդերի ու թուրքերի նկատմամբ կիրառվող կողոպտում ու շարագրությունները: Ռում դիմե հողազուրկ, քաղցած և տանշված ժողովուրդը, — հարցնում է հեղինակը, — երբ Կ. Պոլսի կենարունական վարիչները լին ցանկանում գավառական կեղծարար, պող, հափշտակող, կեղծերող, հարստանարող և ժողովրդի արյունը ծծող պաշտոնականներին իրենց բարձրից հեռացնել և արժանավոր գործիչներին տալը¹⁸:

Նույն 1911 թ. Կ. Պոլսում լուս տեսավ Գեղամ Տեր-Կարապետյանի «Հողային հարցը հայարևակ և անհանդիւնում մեջ արժեքավոր գիրքը¹⁹ նվիրված Արևմտյան Հայաստանում XIX վերջին և XX սկզբին իշխող հողատիրության ձևերի, գյուղացիությունից գանձվող բազմաթիվ և բազմապիսի հարկերի ու տուրքերի հանգամանալից հետազոտությանը:

Իր տեսակի մեջ առանձնահատուկ տեղ է զրավում ռժերիդի շար-

¹⁶ Նոյն տեղում, էլ 355—359.

¹⁷ Առողջական, միջազգային Բնոր-Հիւսնին փաշա բուրց, անոսնման թշնամի Թրամային ներկա վիճակը, Թիֆլիս, 1911:

¹⁸ Նոյն տեղում, էլ 41:

¹⁹ Կ. Տեր-Կարապետյան, Հողային հարցը հայութակ նահանգներում ձև, Կ. Պոլս, 1911:

թիեւ հայտառ թուրքերն թերթի տեօրին Ա. Զիվելեզյանի ֆրանսերին հրատարակած գիրը՝ «Մամուլի ռեժիմը թուրքիայում»²⁰, Հեղինակը շարադրում է պատրական գործի սկզբանավորման պատմությունը, հրատարական գործի զարգացումը, վերլուծում այն փոփոխությունները, որ սկսած 1722 թ. կատարվել են թուրքական տպագրության մեջ, մասնավորապես՝ մամուլի իրավունքներն ու լիազորությունները. և այդ մասին ընդունված օրենսդրական ակտերը, քննում դրանց առանձին հոդվածները՝ միշտ համեմատելով ֆրանսիական տպագրության ու մամուլի ռեժիմի հետ. Հատուկ տեղ է տրված Արդուլ Համիդի օրոք մամուլի համար ստեղծված ծանրագույն պարմանների նկարագրությանը, «Պնայած զարգացրանալու ժամանակ արած իր կեղծ հայտարարությանը, — զրում է Ա. Զիվելեզյանը. — Նա դաժանութեն հաշածեց մամուլը, մասնավորապես երիտրուրքական «İstikbal» և «Vakit» թերթերը»²¹. Հեղինակն անդրադառնում է մամուլի ռեժիմի վերաբերյալ 1888 և 1894 թթ. ընդունված օրենքներին, նշում, որ Համիդը խստիվ արգելու էր իր գիր մեկ լուսանկարը զետեղի թերթերում: Գրքում զերլուծված է արյունոտ սովորական սահմանած գրաքննությունը, ինչպես նաև արդ շրջանի արտասահմանյան հայ պարտերականների նկատմամբ տարվող քաղաքականությունը, Մաճվան սպառնալիքի տակ Համիդն արգելում էր, որ հայկական թերթերը ներթափանցին կայսրության սահմանները և ընթերցվեն: Ա. Զիվելեզյանը քննում է նաև երիտրուրքական հեղաշրջումից հետո, 1909 թ. մամուլի վերաբերյալ ընդունված օրենքը և զայխս այն եղբակացության, որ ռԹուրքիայի քաղաքական ու տնտեսական լուսավորության համար անհրաժեշտ է ունենալ ազատ ու անկախ մամուլ: Թանի որ մամուլի ազատությունը մըսում բոլոր ազատությունների բնական պահին է»²².

Այդ տարիներին հայ հեղինակների լույս տեսած գործերում շարումակում են գերիշխութել Թուրքիայի ներքին կյանքին, առանձին իրադրություններին նվիրված հարցերը, Արժեքագոր է Հ. Թերզյանի «Կիլիկիոյ աղետը»²³ ընդարձակ ուսումնասիրությունը, որտեղ թերված են 1909 թ. Ազանայի ջարդի վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր, ռազմական հյուսականացների վկայություններ, քաղվածքներ եվրոպական հյուսա-

²⁰ A. Djivelégnian, Le régime de la presse en Turquie. Comparaison avec le régime français, Paris, 1912.

²¹ Խոչք տեղամ, էջ 29.

²² Խոչք տեղամ, էջ 230.

²³ Հակոբ Թերզյան, Կիլիկիոյ աղետը, Ե. Պոլիս, 1913.

տառների, թղթակիցների, միսիոներների տեղեկագրերից ու օրագրերից, ինչպես նաև թուրքական մամուլից։ Այսպես՝ ամբողջությամբ բերված է ժիթիդաւը թերթի 1909 թ. ապրիլի 7-ի համարում տպագրված զրգուշադրության կիրակիահերին բնաշնչելու կոչ էր²⁸։

Հեղինակի ուսումնասիրած ողջ նյութը հանգեցնում է այն եղանակացության, որ Կիրակիայի ջարդերը ոչ թե պատահական, այլ օրինացափ ու կանխամտածված բնույթի են կրել ու անմիջականորեն առնչվել են իշխանության գլուխ անցած իթթիւտական ղեկավարների քաղաքական վարդապետի, նրանց աղքայնամուլ ծրագրերի հետ։

Երիտասարդ թուրքերի աղքայնական, ամիմթիյատրուական ճգումներին անդրադառնում է նաև Ատոմը (Հարություն Շահրիկյան), իր «Օսմանյան կայսրության անկման պատմությունը»²⁹ գրքում, որը նվիրված է Հայունի գործի Զելալ Նուրիի «Օսմանյան կայսրության անկման պատմությունը» («Tatih-i Tedeniyati Osmaniye») խորպորվ աշխատության վերուժությանն ու արժեքավորմանը։ Հեղինակը բազմաթիվ մեջքերումներ է անում Զելալ Նուրիի զրքից՝ վերհանելով նրա աշխատության բացառական, խոցելի կողմերը, ոչելալ Նուրին, — գրում է Ատոմը, — չկրնալով ժեօն թրբության շովինիստական նախապահարումներն ազատվել, ինկած է Հակասութեանց մեջ և կարծած է, թե զերածնությունը կարելի է գրուի բերել զինվորական քաղաքականությամբ և հպատակ աղքերի ձուլման քաղաքականությամբ³⁰։ Անդրադառնալով երիտասարքերի որոշ շրջաններում պրոպագանզմուղ օսմանիզմի տեսությանը և Զելալ Նուրիի մոտեցմանն այդ հարցին, Ատոմը մատնանշում է, որ «...օսմանցիությունը հեղինակին համար՝ ինչպես և բոլոր երիտասարդ թուրքերուն կամ անոնց դպրոցին համար, հոմանիշ է թուրքի»։ Վարելի է ըստ, — ավելացնում է նաև, — որ մահմեդական այլ ցեղերին ալ կը մնան օսմանցիության իմաստեն դուրս³¹։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ 1912—1914 թվականներին, ինչպես Հայտեն է, երիտասարքական կառավարողներին արդին հրաժարվել էին օսմանցիության հեղհեղուկ տեսությունից և իրնեց գաղափարախոսության զենքը գարձրել պանթուրքիզմն ու պանթուրանիզմը։ Օսմանյան կայսրության սահմաններում և առաջին հեր-

²⁸ Խոյի անզամ, էջ 84—70։

²⁹ Առաջ, օսմանեան կայսրության անկման պատմություն, Երիտասարդ Թուրքերու զերածնություն գրքոց, 9. Գուիս, 1918։

³⁰ Խոյի անզամ, էջ 5։

³¹ Խոյի անզամ, էջ 20—21։

